ՀԱՅ ԱՐՎԵՍՏ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆԴԵՍ

ARMENIAN ART

2022



ՀԱՅ ԱՐՎԵՍՏ 2'02

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆԴԵՍ

Հիմնադիր եւ հրատարակիչ
«Մոնիկ» մշակութային միություն
«Յոթ արվեստ» ՍՊԸ

Հրատարակվում է գիտական համագործակցությամբ
Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի
ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի
Հայաստանի Ազգային պատկերասրահի

Գլխավոր խմբագիր
Կարեն ՍԱԹԵՎՈՍՅԱՆ

Գործադիր քարտուղար
Հասմիկ ԳԻՆՈՅԱՆ

Պատասխանատու քարտուղար
Նորայր ՎԱՐԴԱՆՅԱՆ

Աշխատակազմ
Լիլի Գասպարյան, Քրիստինե Վարդանյան, Անժել Ամիրխանյան

Խմբագրական խորհուրդ
Վարազդատ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Շահեն ԽԱՉԱՏՐՅԱՆ,
Մուրադ ՀԱՍՐԱԹՅԱՆ, Մարտին ՄԻՔԱՅԵԼՅԱՆ,
Վարդան ՎԱՐԴԱՆՅԱՆ, Հուլիկ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ,
Դանիել ԵՐԱԺԻՇՏ,
Խաչատուր ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հանդեսի լիազոր ներկայացուցիչներ
Վահագն ԹՈՎՄԱՍՅԱՆ - Սեփհանակերտ (ԼՂՀ)
Մարո ՄԱՆԱՎՅԱՆ - Մոնրեալ (Կանադա)
marom@videotron.ca
Շահան ԱՐԾՐՈՒՆԻ - Նյու Յորք (ԱՄՆ)
solopiano@hotmail.com
Ստեփան ԿԻՐԵՍԻՋՅԱՆ - Լոս Անջելես (ԱՄՆ)
louys96@hotmail.com
Էդդա ՎԱՐԴԱՆՅԱՆ - Փարիզ (Ֆրանսիա)
eddavard@yahoo.com
Լեյլա ՆԵՐՍԻՍՅԱՆ - Լոնդոն (Մեծ Բրիտանիա)
Անի ՖԻՇԵՆԿՅԱՆ - Հալեպ (Սիրիա)
fishenkjanani@hotmail.com
Օհան ԲՈՒԴՐՈՒՍՅԱՆ- Բեյրութ (Լիբանան)
NAIRIBO@cyberia.net.lb
Ստոս ԽԱՉԱՏՐՅԱՆ - Սանկտ Պետերբուրգ (Ռուսաստան)
akhachents@yahoo.com
Սարգիս ԴԱՐՋԻՆՅԱՆ - Թբիլիսի (Վրաստան)
Այբոս ՔՈՉԱՐՅԱՆ - Թեհրան (Իրան)
akocharian@hotmail.com
Մուստեղ ՆԱՏԱՐՅԱՆ - Սմիրնա (Թուրքիա)
Շահեն ՄԱՔԼՈՒՄՅԱՆ - Կահիրե (Եգիպտոս)
shahen@soficom.com.eg

Լուսանկարիչ
Գեորգ Գասպարյան

Համակարգչային ձեավորող
Վարդան Դալլաքյան

Անգլերեն ամփոփման թարգմանությունը
Վահագն Մարաբյանի

Գրանցման վկայական 01Մ000095, Դասիչ՝ 77789
Ստորագրված է տպագրության՝ 09. 09. 2002

Խմբագրության հասցեն
Երեւան, Հանրապետության 32
Հեռախոս՝ (374 1) 523501, բջջ.(374 9) 403215
Ֆաքս՝ (374 1) 563661
E-mail: hayart02@hotmail.com
http://users.netsys.am/mornik

Նյութերը տպագրվում են արեւելահայերենով եւ արեւմտահայերենով, բնագրի ուղղագրությամբ:
Հոդվածներում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետին:
Գիտական հոդվածները գրախոսվում են:
Գովազդի բովանդակության պատասխանատուն գովազդատուն է:
Արտատպությունն կատարելիս հղումը «Հայ արվեստին» պարտադիր է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

3 Մշակութային քաղաքականություն (խմբագրական փոխարեն)

4 Շահեն Խաչատրյան
ՀԱՅՐԵՆԻՔԸ ԾՆՎՈՒՄ Է ՄԱՐԴՈՒ ՀԵՏ

7 Հարցազրույց կինոբեմադրիչ
ԱԼԲԵՐՏ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԵՏ

8 Մարտին Միքայելյան
ՁԱՎԱԽՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

11 Դանիել Երաժիշտ ԽԱՉԱՏՐՅԱՆԱԿԱՆ ՎԵՐԴՈՒՐ

12 Հեղինե Մկրտչյան «ՆԱՆԵ» պարախմբի եւ
ՇՈՒՇԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԱՄԵՐԳԸ

13, 17, 25, 34 ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

14 Նկարիչ ՊԵՏՐՈՍ ԱՍԼԱՆՅԱՆ

16 Քանդակագործ ԱԼԲԵՐՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

17 Արմեն Հախնազարյան
ՌԱԱ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 2001 Թ.

18 «Ծիլ բուսաց» ԿԵՆՏՐՈՆԸ

19 ՍԱՄՎԵԼ ԼԱԳԻԿՅԱՆԻ արվեստը

20 «Արվեստը արվեստի հանար» գեղարվեստի արվեստանոցը

22 «Հայ արվեստի» շնորհանդեսը

24 Հարցազրույց նկարիչ ՎԱԼՍԱՐԻ ՀԵՏ

26 Արամ Քալայանբարյան, Ֆրինա Բաբայան ՊԵՂՈՒՄՆԵՐ ՈՒՇԻԻ ՎԱՆՔՈՒՄ

27 Գագիկ Սարգսյան,
Հուլիկ Մելքոնյան
ՎԱՐԴԵՆԻԿԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ
ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՎԻՄԱԳՐԵՐԸ

28 Էդդա Վարդանյան ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄ ՉԻՆԱՍՏԱՆԻՑ

29 Էդդա Վարդանյան, Նազենի Ղարիբյան
ԱԿԱԴԵՄԻԿՈՍԻ ՄՈՒՐԸ՝ ՀԱՅԱԳԵՏ ԺԱՆ ՊԻԵՌ ՄԱՀԵԻՆ

30 Կարեն Մաթեւոսյան ԵՐԲ ԱՆԻՆ ՄՆՈՒՄ Է ՀԵՌԱՎՈՒՄ

33 Մեսրոպ Հայումի
ԱՐՈՒԵՍԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՄԵՋ

34 Ատոմ Եգոյանի «ԱՐԱՐԱՏ» ՖԻԼՄԸ

35 Անի Ֆիշենկյան
ՆՈՐԱՁԵՒԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՆԱԽ ԱՐՈՒԵՍ Է,
ԱՊԱ ԱՐԵՍ

36 «Հայ արվեստի» նյութերի անգլերեն ամփոփումը

Շառիկի առաջին էջին՝
Արշիլ Գորկի, «Սիրուց վառված»

Հիմնախնդիրները հայտնի են...

Մշակութային արժեքների պահպանման խնդրում որոշակի առաջընթացն ակնառու է, սակայն այստեղ էլ մի հսկայական դաշտ՝ գրադարաններն ու թանգարանները, տակավին զուրկ են օրինական կարգավորումից: Օրենսդրորեն կարգավորված չեն նաեւ թատերական եւ կինոարտադրության բնագավառները, դրանց պետական աջակցություն ցույց տալու սահմաններն ու կարգը:

Հրատապ է «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի վերանայումը: Ըստ գործող օրենքի, ԱԱՀ-ից ազատվում են միայն մանկական, ուսումնական եւ գիտական հրատարակությունները, այն էլ սոսկ իրացման օղակում: Սա մեծաթես խոչընդոտում է գրահրատարակչության զարգացումն ու ծավալումը: Նվազ կարեւոր բացթողում չէ նաեւ նոր լույս տեսնող հրատարակությունների պարտադիր օրինակի մասին օրենքի բացակայությունը, որը լուրջ դժվարություններ է հարուցում գրադարանների համալրման եւ տպագիր արտադրանքի արձանագրման ոլորտներում:

Ֆինանսական միջոցների սղությունը հնարավորություն չի տալիս ոչ միայն զարգացման ծրագրեր մշակել, այլեւ իրականացնել որոշ հիմնական գործառույթներ: Թատերարվեստի, կինոարտադրության եւ գրահրատարակչության ոլորտում գործում է պետական պատվերի համակարգը, սակայն՝ չափազանց սահմանափակ շրջանակներում: Բացի դրանից, բավականին մշուշոտ է ստեղծագործությունների ընտրության կարգը. հայտնի չէ, թե գերատեսչությունների համապատասխան պատասխանատուները ինչ չափանիշներով են որոշում ֆինանսավորել ստեղծագործական կոլեկտիվների առաջադրած գործերը:

Առայժմ չեն արդարանում բարեգործական խողովակով միջոցներ հայթայթելու հույսերը, որ կարող է իբրեւ մշակութային ավանդույթների խթանում դիտվել (անվիճելի փաստ է, որ հայ մշակույթը դարեր շարունակ զարգացել է մեկենասության ու բարեգործության շնորհիվ): Հանրապետությունում առկա մի քանի մշակութային հիմնադրամներ գնահատելի նպաստ են բերում, սակայն նրանց միջոցները ի զորու չեն փոխելու ընդհանուր իրավիճակը: Սա անտարակույս պայմանավորված է տնտեսության մի զգալի հատվածի սվերայնությամբ, ինչպես նաեւ մշակույթին աջակցող մեկենասների ու հովանավորների համար հարկային արտոնությունների բացակայությամբ: Այս ոլորտում օրենսդրական բարենորոգումը (մոտ ժամանակներս քննարկման է դրվելու «Բարեգործության մասին» օրենսգիծը) ամենայն հավանականությամբ առաջընթաց քայլ կլինի: Սակայն իրավիճակի շեշտակի բարելավում կարելի է ակնկալել միայն պետական մակարդակով մշակույթի զարգացման հիմնադրամի ստեղծումից:

Անցած տարիների մշակութային քաղաքականության ամենախոցելի կողմերից մեկը կառավարման համակարգն է, եւ խոսել այս ոլորտում ժողովրդավարական սկզբունքների մասին, ինչպես ասվում է հայեցակարգում, դեռեւս վաղ է: Մշակութային հասատությունների գիտական ու գեղարվեստական խորհուրդներն ու նախարարության կոլեգիաները, որոնք կազմավորվում են ղեկավարների հայեցողությամբ, ձեւական բնույթ են կրում: Մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության կանոնադրությամբ նախատեսված գիտատեխնիկական խորհուրդն էլ (բաղկացած մասնագետներից, փորձագետներից) մնացել է թղթի վրա: Ցեն գործում նաեւ նախկին միջգերատեսչական խորհուրդները, որոնք ինչոր չափով մեղմում էին գերատեսչական տարանջատվածությունը:

Մշակույթի կառավարման համակարգում առայժմ գրեթե չեն օգտագործվում կառավարման տեղեկատվական ու հեռազոտական հնարավորությունները: Խոսուն փաստ է, որ մինչ օրս հասարակության մշակութային պահանջմունքների, մշակութային գործիչների ու հասատությունների որեւէ հետազոտություն կամ գոնե հարցախույզ չի կատարվել:

Առանց տեղեկատվության բազայի եւ իրավիճակի խորքային ուսումնասիրությունների՝ հազիվ թե իրականանան այն խնդիրները, որոնք առաջադրված են մշակութային քաղաքականության հայեցակարգում:

Հայաստան, 2001 թ.
Մարդկային զարգացման ազգային զեկույց (էջ 114)

Այս անգամ խմբագրականի փոխարեն տպագրում ենք «Հայաստան 2001»՝ Մարդկային զարգացման ազգային զեկույցից մի հատված, որը փորձագետների դիտարկումների հիման վրա ներկայացնում է Հայաստանի ներկա մշակութային հիմնախնդիրը:

Ուզում ենք հավատալ, որ այդ խնդիրները կլուծվեն, այլապես մոտ ժամանակներում չենք կարող մշակութային ծաղկում ակնկալել:

Մեր կողմից հավելենք, որ արդի հայ մշակույթի զարթոնքը՝ պայմանավորված է նաեւ Սփյուռքի հետ բազմակողմանի կապերի խորությամբ: Մասնակցելով Հայաստան-Սփյուռք 2-րդ համաժողովին, այն եզրակացությանը հանգեցինք, որ նրա բարի ցանկությունները կարող են կյանքի կոչվել միայն գործնական քայլերի շնորհիվ: Ժողովների «լիմիտը» սպառվել է, եկել է գործելու ժամանակը:

«Հայ արվեստը» փորձում է հանրես գալ համահայկական մշակութային դաշտում, իր ուժերի չափով նպաստել Հայաստան-Սփյուռք կապերի խորացմանը, սակայն համախոհների գործակցության ու աջակցության կարիքն ունի: Հույս ունենք, որ չնայած բոլոր դժվարություններին, մեզ կհաջողվի սկսած աշխատանքը շարունակելու ուժեր գտնել:

Մ. Սարյան. «Արարատյան դաշտ»

ԱՅՐԵՆԻՔԸ

Մարտիրոս Սարյան

Հահեն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ինչպես ամեն արվեստագետ իր ասելիքն ունի, այնպես էլ՝ ամեն ժողովուրդ, ուրեմն եւ այն ժողովուրդը, որին պատկանում է այդ արվեստագետը: Այս կապն արտացոլվում է ձեւի մեջ, որ բնորոշվում է ստեղծագործության ազգային նկարագրով:

Վ. Կանդինսկի

Անցած դարասկզբի քաղաքական փոթորիկները, ինչպես որ լեռն է կիսվում, կիսեցին մեր ժողովրդին երկու հասվածի: Մայր հողի վրա, ստեղծագործող անհատի ու հայրենիքի միջեւ, ինչպես բոլոր հեղափոխություններից հետո, շաս շուտով բարձրացավ միահեծան ռեժիմի պարիսպը: Իսկ սփյուռքում արվեստի մարդը կտրվեց իր արմատներից: Հայաստանում ապրող արվեստագետից խլեցին ազատությունը, իսկ դրսում՝ ազատության մեջ ստեղծագործողը զրկվեց հայրենիքից: Ճակատագրական այս ողբերգությունն անդրադարձ պիտի գտներ հոգեւոր կյանքում: Եվ ինչպե՞ս:

Դարի առաջին տարիներից եվրոպական մշակութային միտքը սեւեռվեց դեպի հին քաղաքակրթությունները՝ ոճական նոր սկզբունքներ հաստատելու միտումով: Նույնը տեղի ունեցավ մեր ազգային մշակույթի մեջ: Բայց դարավոր ավանդներ ունեցող ժողովրդի համար դա հասունացած, բնական պահանջ էր: Եւ հայ հոգեւոր կյանքի բոլոր մարզերում ի հայտ եկան այնպիսի անհատներ, ովքեր բյուրեղացրին երաժշտության, ճարտարապետության ու պոեզիայի ազգային յուրակերպությունը: Նկարչության ասպարեզում այդ խնդիրն սկզբնավորելու էր կոչված Մարտիրոս Սարյանը: Նա եվրոպական դպրոց անցած հայ նկարիչներից առաջինը եղավ, որ արագ ու ամբողջապես խզեց կապերը սերտած մեթոդներից, ընթացավ ինքնուրույն ճանապարհով՝ երանգապնակը պարզելով հայրենի բնաշխարհին ու արվեստին: Հայրենիքի առաջին ներշնչումներից ծնվեց երիտասարդ նկարչի «Հեքիաթներ ու երազներ» ցուցակերաշարը: «Արարատի սերոնտին», «Թագավորը դաստ հետ», «Աղբյուրի մոտ», «Ախուրյանի ձորում» ու այլ գործեր իրենց ոճաձեւական կառուցվածքով ու բանաստեղծական ներհուն շնչով աղերսվում էին նոր՝ սիմվոլիստական հոսանքի հետ:

1905-1906 թվականներին 25-ամյա Սարյանի հոդվածներում արտահայտված է մի միտք, ուր ցոլանում է նրա նվիրական սերն ու պատշամունքը հայրենիքի հանդեպ. «... նույնիսկ ճնշված ու հալածված եւ իբրեւ քաղաքացի ապրելու իրավունքներից զուրկ ժողովրդի հոգու խորքերում առկայծում է կրակը, որ ընդունակ է ազատության ժամին բոցավառվել ու լուսավորել ամեն ինչ»:

Առանց մանիֆեստների, Սարյանն արվեստում համբերությամբ քայլեց դեպի իր պատկերացրած ազատությունը: Նա հայտնաբերեց Արեւելքի, հարազատ բնաշխարհի էությունը խտացնող ծայրաստիճան պարզ գունագծային բանաձեւը: Նա կարողացավ մաքուր, կենսահորդ, գեղեցկությամբ կախարդող գույնը զուգորդել արեւային կիզիչ լույսին եւ հնչեցնել իբրեւ ազատության, հավիտենական կյանքի պատգամ: Սարյանի հանդուգն, արդիական գունային լեզուն, որ ֆովիզմի եւ էքսպրեսիոնիզմի մի յուրօրինակ արտահայտություն էր, դիտվեց դարասկզբի նորարարական երեւույթներից մեկը եւ բարձր գնահատվեց հատկապես ռուսական արվեստագիտության կողմից: Ճանապարհը դեպի լայն ճանաչում բաց էր՝ 1909-ին ցուցադրվեց Հռոմում, 1912-ին՝ Լոնդոնում (երկրորդ հեսիմպրեսիոնիստական ցուցահանդես), 1914-ին՝ Շվեդիայում:

1915-ին, սակայն, թողնելով փառք ու ճանաչում, նկարիչը փակում է մոսկովյան արվեստանոցն ու գալիս Էջմիածին՝ անձամբ օգնելու Վասպուրականի հոծ գաղթականությանը: Ամեն օր համաձարակի զոհ էին դառնում հարյուրավոր մարդիկ՝ ծերեր ու մանուկներ: Փոքրերի հոգսով ու խնամքով զբաղված նկարիչը, ո՞վ գիտե, գուցե հանդիպե՞լ է մի պատանու, որ տասնամյակներ անց Ամերիկայում դառնալու էր արդի արվեստի նշանավոր դեմքերից մեկը:

Մահվան արշավից տվայտող Սարյանի հոգին ցնցվում է, նրան տեղափոխում են հիվանդանոց: Ընդհատվում է նկարչի ստեղծագործական ընթացքը:

Բայց Սարյանը չի դիմում տարագրության: Նա իր կյանքը կապում է կիսված հայրենիքի այն հատվածին, որի վրա սկսեց ծլարձակել վերազարթոնքի ոգին: Մահվանը դիմակայող այդ ոգին էր, որ կրկին կյանքի, լույսի է կոչում նկարչին: «Իմ ձգտումն է, - գրել է նա 1920-ականներին, -դաժան արհավիրքներով անցած, բազմիցս ողբված, բայց արյամբ ու հավատքով սրբագործված այս փոքր հողակտորը կտավի վրա ցույց տալ իր շոշափելի գոյությամբ: Արագածի փեշը կազմող այս հողակտորը ես դիտում եմ իբրեւ հույսի աղբյուր, մեր հին ժողովրդի փայփայած իդեալների հենարան, իբրեւ նրան եռանդ ու կորով սնուցող մայր: Ուզում եմ ցույց տալ աշխարհին, որ մեր երկիրը փաստացի կա, իր կրծքի վրա պահում է, ճիշտ է, մի բուռ, բայց աշխատասեր ու տաղանդավոր մի ժողովուրդ, իր հերոսական պատմությունը խորհրդանշող հոգեւոր բազմադարյա արժեքներով»:

Երկրի վերածնունդ, հայրենիք կառուցելու սուրբ հավատը կլանում է արվեստագետին: Անձնականը միաձուլվում է ընդհանուրին, երկրի սրտի բաբախյունը նա զգում է իր սրտում, պատկերները դառնում են անանձնական ապրումների մարմնացում, ծնունդ առնում աղոթքի նման: Նրա «Հայաստան», «Գեղամա սարեր», «Եղիշե Չարենց», «Լեռներ», «Արեւոտ օր» ու այլ կտավները, ինչպես նաեւ առաջին պետթատրոնի վարագույրն ու հանրապետության զինանշանը հիմներգի հնչողություն ունեն: Խորանաներ հիշեցնող այդ գործերն ընկալվում են իբրեւ գոյատեւման, ազատության համար անվերջ մաքառած փոքրաթիվ ժողովրդի կենդանի երազանք, որպես կենսապատշաստության քրիստոնեական զգացումի անանց վկայագիր: Դիտողին թվում է, թե Սարյանի վրձնով Հայաստանն իր դիմապատկերն է կերտել, անժամանակյա, հավիտենական դիմապատկերը: Լայնաշունչ, գծային հստակ ու կենսավառ գույներով երփնագրված այդ գործերն առավելապես ներքին տեսողության արգասիք են, որոնց նմանը սակավ կարելի է գտնել համաշխարհային արվեստում:

Սակայն հայրենիքին, նկարչին նոր փորձություններ ու ցավեր

էին սպասում, որոնք նա պիտի կրեր իր մեջ որպես մորմոք: 1937-ին թանգարանի բակում այրելու էին նաեւ նրա գործերը, ինքը պիտի քննադատվեր խորհրդային մշակույթի մեծերի հետ, պիտի ձեւաթաշաս համարվեր: Բայց տոկալու էր ու աշխատելու ամեն գնով: Չէր սասանվելու նրա ոգին, ինչպես եւ ժողովրդի ոգին, քանզի ինքն ու ժողովուրդը խարսխված էին սեփական երկրին՝ «երկիրը մարդ է, մարդը՝ երկիր» հավատամքով:

Առաջին աշխարհամարտի սարսափների շունչը հողմի նման տարածվեց աշխարհում: Արվեստում ծնունդ առավ սյուրռեալիզմը: Եղեռնից փրկված անթիվ որբեր հանգրվան գտան հեռավոր ափերում, ու ոմանք ներքին կանչին հավատարիմ ներգրավվեցին ստեղծագործական ոլորտում: Արվեստի նոր հոսանքն արգավանդ հող գտավ հայորդիների ցնցված ու ընկճված հոգիներում: Գտնվելով սյուրռեալիստական աշխարհընկալման մեջ, նրանք իրենց թեմաները քաղում էին ոչ այնքան ենթագիտակցային ամենաարբեր տեսիլներից, որքան ոչ հեռու անցյալի սահմռկեցուցիչ իրողություններից: Հայ սյուրռեալիստները սնունդ էին առնում կորսված մանկության հուշերից: Արվեստը նրանց համար այլաբանություն էր վերարտրածի: Սա իրավունք է տալիս մեզ խոսելու սյուրռեալիզմի հայկական տարբերակի մասին, որին բնորոշ են առանձնահատուկ, զուտ ազգային գծերը: Այդ ուղղությունն են ներկայացրել Մելքոն Քեբաբչյանը, Լեւոն Թյուրունջյանը, ավելի ուշ Գառզուն (Գառնիկ Զուլումյան), Լեւոն Մինասյանը, Ժանսեմը (Հովհաննես Սեմերջյան):

«Հայկական սյուրռեալիզմի» անդրասանում հայտնվեց նաեւ մի արվեստագետ, որի մասին ամերիկացի խոշոր նկարիչ Վ. Դե Կունինգը գրել է. «Նա հասկանում էր այն ամենը, ինչ կապված է բնության եւ նկարչության հետ: Նա օժտված էր սուր տեսողությամբ, գերբնական հուզական ընկալմամբ եւ անհավանական գերզգացողությամբ: Այդ ամենը նա ուներ մինչ սյուրռեալիստներին հանդիպելը, եւ նրանք ասացին իրեն՝ դու արդեն ունես ամենը»: Խոսքը Արշիլ Գորկու՝ Ոստանիկ Ադոյանի մասին է:

Աշխարհում այսօր լայնորեն ճանաչված այս արվեստագետը ծնվել է 1904-ին, Վանա լճափին, Վարի Խորգոմ գյուղում, որտեղից լավ երեւում է Աղթամար կղզին իր հռչակավոր վանքով: Ոստանիկ-Մանուկ Ադոյանը սովորել էր գյուղի դպրոցում, ապա՝ Վանում: Տասնմեկ տարեկան էր, երբ հազարավորների հետ եկավ Էջմիածին, ապա Երեւան, ուր եւ սովից մահացավ մայրը: 1920-ին քրոջ՝ Վարդուհու հետ նա մեկնեց Թիֆլիս, ապա՝ ԱՄՆ:

Ապագա արվեստագետը կրել է հայոց ողբերգությունն իր բոլոր արտահայտություններով՝ կոտորածի սարսափ, Վանի հերոսական ինքնապաշտպանություն, հաղթանակի վաղանցիկ հրճվանք, գաղթ, որբություն, պանդխտություն, ապա՝ տեւական ազգային նսեմացում:

ԾՆՎՈՒՄ Է ՄԱՐԴՈՒ ՀԵՏ

Արշիլ Գորկի

Արշիլ Գորկի. «Այգի Սոչիում»

Նոր երկրում Ոստանիկի կյանքն անցավ հանգամանքների դեմ ծանր պայքարով: Մասնագիտություն ձեռք բերեց, հասավ այնպիսի մակարդակի, որ սկսեց նաեւ դասավանդել: Կյանքն ինքը հուշեց նոր անուն: Նա գիտեր, թե ինչ է նշանակում ռուսերեն «գորկի» բառը, կարդացել ու սիրել էր Մաքսիմ Գորկուն: Իսկ Արշիլը Արշակի վերածեւումն էր:

Արվեստի՝ հին ու նորագույն, անդուլ հետազոտողը, որոշիսին էր Արշիլ Գորկին, սեփական «եսը» որոնելիս, երկու տասնամյակ շարունակ, իր ուժերն էր փորձում ժամանակակից գեղանկարչության բոլոր ուղղություններում՝ մինչեւ սեփական վրձնի ազատությունը գտնելը: Այդ շրջանում նա ստեղծեց որեւիցե «իզմից» զերծ, գեղեցկությամբ ու հուզականությամբ հիասքանչ «Նկարիչն ու իր մայրը» (1926-33) կտավը: Մոր՝ ասես գերեզմանոցային լռությամբ պարուրված դեմքի փայլաս ֆոնի վրա շեշտված են հայի խոշոր, ողբերգական աչքերը: Խորհրդանշական են այդ նկարչական պոեմի կերպարները: Բավական է տեսնել որդու ձեռքում պահված ծաղիկը, հասկանալու համար, որ կտավը մարմնավորում է կյանքի հավիտենության ու հիշատակի սրբությունը:

Այդ պատկերի գույները, ինչպես եւ ձեւերը (մոր գլխաշորը, խմորագունդ հիշեցնող ձեռքերը, գոգնոցը եւ այլն) այն հողն են, որից ծնվել են աբստրակտ շրջանի գորկիական գլուխգործոցները:

Ես երջանիկ առիթ եմ ունեցել տեսնելու «Նկարիչն ու մայրը» Նյու Յորքում, «Ուիթնի» թանգարանում: Առանց չափազանցության պիտի ասեմ, որ թանգարանի ցուցադրանքում չկա առավել հուզող եւ մոգական մեկ այլ կտավ: Դրա առջեւ, բազմաթիվ այցելուներով շրջապատված, ես հիշեցի «Սիքստինյան ասպվածածորը»: Ռաֆայելի մայրը՝ աչքերում տագնապ, աշխարհին է հանձնում որդուն: Արշիլ Գորկու որդին աշխարհին է ներկայացնում իր կորսված մորը՝ կորսված հայրենիքի ու նրա գեղեցկության խորհրդանիշը:

1937-ից, կյանքի վերջին տասը տարում, Գորկին վրձնում է նկարներ, որոնք հոգու յուրաքանչիր դիմանկարներ են եւ հեռամաս-

Տեսարան խորգոմից (լուսանկարված է 2002 թ. հուլիսին)

խարհային հռչակ բերեցին նրան: Այդ գործերում նորը ոչ մեկին չկրկնող արտահայտչալեզուն էր, ուրույն ոճը: Ամենայն գոյի սյուրռեալիստական ընկալումն այստեղ միահյուսված է աբստրակտ մտածողությանը: Շրջապատող աշխարհի տեսանելի քաղաքի մեջ թափանցելով (կյանքի նախաստեղծ ձեւեր՝ հողից ելարձակող բողբոջներ, բույսեր, ծաղիկներ, պտուղներ, գեղջկական տորեր), նկարչի հայացքն ասես ողողում, միգապատում է իրերը՝ վերածելով դրանք գունագծերի ու գունաբծերի հուզաթաթավ համադրությունների: Եվ քանի որ սյուրռեալիզմի բնորոշ հատկանիշը անմիջական ներգործման ուժն էր, էքսպրեսիվությունը, ուստի հայ նկարչի հաստատած ոճն ստացավ աբստրակտ էքսպրեսիոնիզմ անվանումը, ինքն էլ հռչակվեց այդ ուղղության հիմնադիր:

Ընկալման առումով բարդ, մասամբ առեղծվածային բնույթ ունի Գորկու նկարչությունը: Սակայն նրա աշխարհը քափանցելը մեզ՝ հայերիս համար ավելի դյուրին է, քան ուրիշների: Բանն այն է, որ նրա աբստրակտ շրջանի բոլոր գործերը, առանց բացառության, սերել են մանուկ տարիների հուշերից, դրանց ակունքը Վանա լճափին է, խորգոմում: Գորկին ինքն է տվել այդ խորհրդավոր աշխարհի բանալին քրոջը հղած նամակներում, որոնք բացառիկ անկեղծ են ու պոեզիայով հագեցած:

Գորկին ունի ութ կտավից բաղկացած մի նկարաշար՝ «Սոչիի այգիները»: Նախապես շարքը կոչվել է «Խորգոմի այգիները»: Նկարչին համոզել են, թե «հասկանալի» լինելու համար լավ է վերցնել հանրահայտ սեւծովյան քաղաքի անունը:

«Սիրելի Վարդուհ,- ամերիկացիները չգիտեն ինչ է հայը, որտե՞ղ է մեր հայրենիքը: Խորգոմի մեր պարտեզները միշտ հեստաղնդում են ինձ: Հիշո՞ւմ ես մեր տնից ներքեւ ձգվող հայրիկի պարտեզն ու խաչելության ծառը, որից գեղջուկներն իրենց գույնզգույն տորերն էին կախում: Մեր պարտեզը վկայում է հայ ժողովրդի փառավոր ու կենսունակ ոգու մասին, որն անհայտ է բոլորին: Բայց եւ կարիք ունի ճանաչվելու: Սիրելի քույր, իմ նկարներում հաճախ եմ պատկերում խորգոմի մեր պարտեզն ու վերստեղծում նրա հարազատ կանաչն ու կյանքը: Կարո՞ղ է արդյոք որդին մոռանալ այն հողը, որ սնուցել է նրան»:

Սոչիի Գորկի. «Պարտեզի մի մասնիկը»

Մեկ այլ նամակում Գորկին նույնքան բանաստեղծորեն նկարագրել է խնոցին: Եվ ուշադիր զննելիս հասկանում ես, որ Սրբազան ծառն է հուշել «Սոչիի այգիները» շարքի կենտրոնում իշխող ուղղահայաց, ստորին մասում փքված խնոցու գունաձեւը, որի երկու կողմերում ուրվագծված են գեղջկուհիներ՝ իրենց նազելի շարժումներով: Իսկ նկարների աջ մասում նկատվում է հայոց եկեղեցիներից ու խաչքարերից փոխառած հավերժության նշանը:

Գորկու բոլոր գործերի անվանումները բխել են հուշերից. «Ջրվեժ», «Ծաղկանց ջրաղացի ջրերը», «Ծիրանների բույրը», «Ինչպես մորս գոգնոցը բացվում է իմ կյանքում» եւ այլն: Եթե հիշենք, որ մանկության գույները նկարիչը սիրով անվանում էր մարգարիտներ, ապա այս կտավներում մի իսկական մարգարտափյուռ է, գույները փայլատակում են աչքերիդ առջեւ որպես ալեկոծված հոգու հրավառություն:

Գորկու «Հռետորները» ուղղակի արձագանքն են հայկական սովորույթի՝ դամբանական ճառերով հրաժեշտ տալ հանգուցյալին: «Նշանդրեք-1»-ը հինավուրց մանրանկարչության մի նոր էջ է, հիացումի տուրք Թորոս Ռոսլինին: «Նշանդրեք-2»-ը նվիրված է Աղթամարի սքանչելիքներին: Իսկ «Գութանն ու երգը» թերեւս նկարչի ամենաջերմ պատկերն է, ուր կռահվում են աշխատանքային սրբազան այդ գործիքի ուրվագծերը, գործիք, որի մասին նկարիչը գրել է. «Ծնունդով խորգոմցի հայի համար ավելի լավ շիրմաքար չի կարող լինել, քան գութանը»:

«Կարոտել եմ մեր սիրելի հայրենիքը, նրա բոսորագույն լեռները, Վանա լճի աղոտ ճերմակ ափերը, սիրելի դաշտավայրերն ու կենդանիները: Մենք մեր հայրենիքի մի մասն ենք՝ չարաղեն փոթորիկներից հեռու շպրտված: Վարդուհ, սիրելիս, ես մեր հայրենիքն եմ երազում եւ կարծես հայկական դարավոր մի ոգի շարժում է ձեռքս, հայրենիքից հեռու ստեղծելու խորգոմի պարտեզների, ցորենի դաշտերի ու բանջարանոցների ուրվապատկերները: Մեր գեղեցիկ Հայաստանը, որը մենք կորցրինք, ես կվերագտնեմ իմ արվեստում: Հայկական ոգին է խոսում իմ նկարներում: Ամբողջ աշխարհի համար ես վրձնով կվերածնեմ Հայաստանը»:

1946-ին արվեստանոցում բռնկված հրդեհից այրվում են նկարչի շատ գործեր: 1948-ին նա ենթարկվում է քաղցկեղի վիրահատության: Նույն թվին ավտովթարի պատճառով զրկվում է նկարելու հնարավորությունից: Նրանից հեռանում է կինը՝ իր հետ տանելով երկու դուստրերին: Ցդիմանալով ճակատագրի հարվածներին, Գորկին անձնասպան է լինում: Մարող լաստեր հիշեցնող, սեւի ու կարմիրի ողբերգական համադրումներով վրձնած «Հոգեվարքը» նրա կարաղի երգերից մեկը եղավ:

«Սիրելիներ, ես լալիս եմ Վանի համար, ինչպես մայրիկն էր լալիս ինձ համար: Ես սիրում եմ արվեստի նախասկզբնական ուժը, պայքարի կիրքը, որոնման տենչն ու քնքշությունը, մի ժողովուրդ, որ տխրությունը միացնում է գեղեցկությանը եւ դրանով իսկ առավել ամբողջությամբ ընդգրկում իրական կյանքը, մարդկության տառապանքը, առաջընթացն ու երջանկությունը»:

Մեր ժողովուրդն անցած դարում լեռան պես տրոհվեց երկու հատվածի, բայց հավատարիմ իր արարման ուժին, չընկրկեց, արձագանքեց այդ ողբերգությանը արվեստի բարձրագույն լեզվով եւ հավերժացրեց փշրված ու փրկված հայրենիքի ոգեղեն իմաստը: Հագեւոր այս սխրանքի անթարթ հայացքը հետեւելու է 21-րդ դարի մեր սերունդներին:

Իրենց հայրենասիրությամբ, գրառած մտքերի ու վրձնած երկերի բովանդակությամբ իրար լրացնող երկու արվեստագետները՝ Սարյանն ու Գորկին չեն ճանաչել միմյանց: Տեղեկություն չկա նաեւ, թե արդյոք Գորկին ծանոթ է եղել Սարյանի արվեստին: Իսկ Սարյանը՝ Գորկո՞ւն:

1968-ին Գորկու քույրը այցելեց Երեւան, իր հետ բերելով եղբոր գործերի սլայդները: Արվեստի աշխատողների տանը կայացած երեկոյին մեր արվեստասերները առաջին անգամ առնչվեցին Գորկու արվեստին: Ձեկուցողը տողերիս հեղինակն էր: Երեկոյից հետո տիկին Վարդուհին սլայդները նվիրեց ինձ: Ընտրելով վերջին գործերից մի փունջ՝ ես դրանք ցույց տվի 90-ամյա Վարդեսին: Նա լուռ, ուշադիր դիտեց ու ասաց. «Շատ ազատ մտածող նկարիչ է, գծերը խոսում են, գույները շատ գեղեցիկ են եւ հուզիչ, իմ գույներին էլ շատ մոտիկ են»:

Մի օր արվեստանոցում Վարդեսը դիմեց ինձ. «Կտավներ պատրաստիր, ուզում եմ նոր նկարներ անել»: Իր վերջին պատկերում, կտավի վրա վրձնի վերջին շարժումով նա նկարեց կարմիր գույնով մի տարօրինակ, հրեշայանման էակ: «Սա արեւն է,-եղավ իմ հարցի պատասխանը,-արեւը ուզեցի նկարել նորածին մանկան պես: Արեւը ծնվում է մարդու հետ ու նրա հետ մայր մտնում»:

Հայրենիքն էլ, արեւի նման, ծնվում է մարդու հետ:

ԱԼԲԵՐՏ ՄԿՐՏՉՅԱՆ.

«Մենք մեր երկիրը պարտք ենք արել ոչ թե նախնիներից, այլ մեր սերունդներից»

Օգոստոսի 1-ին «Հայ արվեստ» հանդեսի խմբագրությունում հյուրընկալվեց ճանաչված եւ սիրված կինոբեմադրիչ Ալբերտ Մկրտչյանը: Նրա հետ զրուցեցին խմբագիր Կարեն Մաթեւոսյանն ու տնօրեն Հասմիկ Գինոյանը:

Հ.Գ. *- Պարոն Մկրտչյան, գաղտնիք չէ, որ մեր ժողովուրդն առանձնակի սիրով է դիտում հայկական հին ֆիլմերը, անգամ տասնյակ անգամ դիտած կինոնկարները, բայց վերջին շրջանում նկարահանված ֆիլմերը կարծես մնում են անծանոթ, քանի որ պարզապես չեն ցուցադրվում հեռուստատեսությամբ: Լավ է, որ Ձեր նկարահանած «Ուրախ ավտոբուսը», որ նաեւ բազմաթիվ միջազգային մրցանակներ է շահել, ցուցադրվեց...*

Ա. Մ. - Պետք է ասեմ, որ ինքս առաջարկեցի, որ ֆիլմը ցուցադրեն հեռուստատեսությամբ (չնայած ցուցադրված օրինակի ժապավենը լավը չէր), քանի որ ես չեմ ընդունում ֆիլմ էլիտայի համար, կինոն պիտի ժողովրդի համար լինի:

«Ուրախ ավտոբուսը» գնել են մի շարք երկրներ՝ Ավստրիան, Դանիան եւ այլն, վերջերս հայտ է ներկայացրել նաեւ Հնդկաստանը: Մենք մասնակցեցինք Բեռլինի կինոփառատոնի շուկային, եւ պետք է ասեմ, Արմեն Դարբինյանի շնորհիվ, որը ֆինանսավորեց մեզ: Իհարկե չեմ անտեսում նաեւ մշակույթի նախարարության դերը, բայց Դարբինյանի արածն իրոք շատ կարեւոր էր: Սա առաջին դեպքն էր, երբ մասնակցեցինք կինոյի միջազգային շուկայի, քանի որ նախկին խորհրդային Միությունում մեր ֆիլմերի վաճառքով զբաղվել է սովէքսպորտֆիլմը: Մենք ցավոք չունենք դիստրիբյուտորների, վաճառողների ինստիտուտ, որի պակասը շատ է զգացվում:

Ինչ վերաբերում է այն բանին, թե ինչու են սիրով նայում հին ֆիլմերը, ապա սա նախ կարոտի հարց է: Ժողովուրդը կարոտ է այն ապրելածելին, սա բնական է: Ժողովրդի էսօրվա վիճակը ուժեղացնում է նոստալգիան: Բայց մյուս կողմից, իսկապես մեր ֆիլմերը լավն են, այն ժամանակ այդքան չէին հասկանում, պիտի հնանա, ժամանակ անցնի, որ իրական արժեքը երեւա:

Հիմա ես մի սցենար եմ գրել ու մի կողմ դրել: Ուզում եմ հեռանալ էդ սցենարից, որպեսզի նորից մոտենամ: Հիմա ժողովուրդը հեռացել է ու արդեն մոտենում է, եւ նրա համար շատ հոգեհարազատ է ամեն մի ֆիլմ: Մյուս կողմից էլ պիտի տեսնել էս ամբողջ թույնը, որ պլանավորված թափվում է՝ սերիալները, ամերիկյան «բոյեփկները»: Ինչքան կարելի է նայել, երբ հեռուստացույցը միացնում եմ, ինձ վրա կրակում են, մյուս ալիքն եմ միացնում՝ կրակում են, մեր հեռուստատեսությունները թեմա չունեն եւ էստեղից-էնտեղից ֆիլմեր են ցույց տալիս ու իրենց թվում է, թե մրցակցությունը դրանում է: Եւ էդ նույն ֆիլմերը բոլոր ալիքներով ցոլվում են:

Հ.Գ.*- Իսկ արդյոք այս ամենը չի՞ ազդի նոր սերնդի, նրա դաստիարակության վրա:*

Ա. Մ. - Ես գիտեմ, թե ինչ բան է ժողովրդավարությունը, գիտեմ դրա թ՛ւ դրական, թ՛ւ բացասական կողմերը եւ գիտեմ, թե սրա վերջը ինչ է լինելու: Դա չի նշանակում, որ պետությունը պիտի կոնցեպցիա չունենա սերունդ դաստիարակելու: Էսօր չունենք:

Լենինականում շատ ավելի պարզ է երեւում էս ամենը: Երկրաշարժից հետո մարդիկ խախտված էին, մինչեւ հիմա էլ խախտված են: Ոնց կարելի է պետականորեն սերունդ չդաստիարակել:

Կ. Մ. *- Այսօրվա հայ կինոյում ի՞նչ միտումներ եւ ելքեր կան:*

Ա. Մ. - Մենք չենք կարող խոսել ոչ մի միտումի մասին, ոչ մի ելքի մասին, մինչեւ պետությունը չգիտակցի, որ կինոարվեստը շատ կարեւոր երեւույթ է (ես քաղաքականության մասին չեմ խոսում, այլ արվեստի): Եկեք մոռանանք Կլարա Յեսկինին, մոռանանք Լենինին, որոնք ասում էին, թե բոլոր արվեստներից ամենակարեւորը կինոն է, հիշենք Հայրենական պատերազմի տարիները, երբ 43 թվականին ռուսները նկարահանեցին «Իվան Ահեղը», հայերը նկարեցին «Դավիթ Բեկը»: Էն ժամանակ, երբ գերմանացիները հասնում էին Մոսկվա, Կովկաս... Սա պատահական չէր:

Ես «Ուրախ ավտոբուսը» նկարել եմ շատ չնչին միջոցներով: Ֆինանսների բացակայության պատճառով այդ ֆիլմում ստիպված հրաժարվեցի մասսայական տեսարաններից, եւ դիտողները կարող է նկատած լինեն, որ ֆիլմում քաղաքի փողոցները դատարկ են... Մինչդեռ ես կուզեցայի նկարել էսօրվա կամ երեկվա ժողովրդին, որ երկրաշարժից հետո փողոցներում էր, ունենալ նրանց խոսակցությունները, որ խախտված մարդկանց խոսակցություն էր:

Հիմա շատ դժվար է կինո նկարելը, որը պրոցես է, եւ ֆինանսների հատկացման ներկա կարգը, ձգձգումները խոչընդոտում են աշխատանքը: Հիմա մեր տղաները ֆիլմեր են նկարում, ես կարծում եմ, որ Հայաստանում ֆիլմ նկարելը հերոսություն է:

Հ. Գ. *Խոսվում էր «Հայֆիլմ» կինոստուդիայի սեփականաշնորհման մասին, ի՞նչ եղավ այդ հարցը:*

Ա. Մ. - Ոչինչ էլ չեղավ: Սեփականաշնորհելը այնքան էլ հեշտ բան չէ: Եթե կա այդ միլիոնատերը, որն իսկապես պիտի սեփականաշնորհի, իսկ կինոարտադրությունը շարունակվի եւ բարելավվի, մենք կողմ ենք:

Ցավոք խորհրդային Միության քանդվելուց հետո գտնվեցին ճարպիկ մարդիկ, որոնք ամբողջ կինոժառանգությունները վաճառեցին մեր հին ֆիլմերը: Երբ «Հայֆիլմը» որոշեց սկսել ֆիլմերի օրինական վա-

ճառքը, պարզվեց, որ արտասահմանում արդեն ամենուր դրանք կան...

Հիմա շատ երկրներից կրկին հայկական կինոյի պահանջարկ կա: Սա մասամբ պայմանավորված է նախկին խորհրդային հանրապետությունների մշակույթի նկատմամբ եղած հետաքրքրությամբ, ու նաեւ բուն հայ կինոյի, որովհետեւ այն շատ շատերին անծանոթ է: Օրինակ, ես որտեղ որ եղել եմ, այս կինոփառատոների առիթով, դա զգացել եմ:

***Կ. Մ.** - Ինչպե՞ս եք ստեղծագործում, ընտրում ֆիլմերի թեման:*

Ա. Մ. - Ես նկարում եմ այն, ինչ իմ հոգուն դիպչում է, իմ հոգին կամ արտասվում է կամ ուրախանում: Դրա համար էլ իմ ֆիլմերի սցենարները ես եմ գրում, գրում եմ կոնկրետ դերքերի հիման վրա: Ռեժիսորի համար շատ կարեւոր է, որ իրեն ազատ զգա նկարահանման հրապարակում, որեւէ նախադասություն փոխելու համար սխիպված չլինի այն համաձայնեցնել սցենարիստի հետ...

Շատ ֆիլմերում կարեւոր փոփոխություններ կատարել եմ հենց նկարահանման ժամանակ, դերասանների հետ աշխատելու ընթացքում: Օրինակ՝ «Մեր մանկության տանգոն» ֆիլմում ես ամբողջ մի էպիզոդների շարան փոխել եմ: Մասնավորապես այն հատվածը, երբ փոքր տղան աղակիները ջարդում է, Մոր Մկրտչյանն ու Գալյա Նովենցը վազում են մինչեւ կամարի տակ, այնտեղի խոսակցությունը ես նկարահանման ժամանակ եմ ավելացրել: Սցենարով Գալյան ոիտի վազեր միլիցիոնների հետ: «Հին օրերի երգում» մատաղի տեսարանը կամ Վերջալույս մայրիկի երգը նույնպես նկարահանման ժամանակ են ծնվել:

***Հ.Գ.**- Նոր ֆիլմ նկարահանելու ծրագիր ունե՞ք:*

Ա. Մ. - Մի ծրագիր ունեմ, որի մասին առաջինը ձեզ եմ ասում: Ծավալուն գեղարվեստական ֆիլմ նկարելու առաջարկություն եմ ստացել (ոչ պետական): Թեման ինձ հոգեհարազատ է, պատմությունը սկսվում է Եղեռնից, հասնում մինչեւ մեր օրերը:

***Կ. Մ.** - Կուզենայի, որ խոսենք Գյումրիի մասին, քանի որ շատ կապված եք Ձեր ծննդավայրին եւ շատ բան եք արել քաղաքի մշակույթի համար:*

Ա. Մ. - Երկրաշարժը եղավ, շատերը գնացին Հայաստանից, ես էլ արտասահմանից հրավերներ ունեի, բայց նախընտրեցի ապրել Գյումրիում: Գնացի էստեղ, մեր սիրելի Հովիկ Գրիգորյանի աջակցությամբ բացեցի երկամյա կինոկուրսեր, հրավիրեցի իմ օպերատորին, հրաշալի կինոգետ Էվերտ Պայազայանին: Սովորեցին, ավարտեցին, հիմա էստեղի հեռուստատեսությունում իմ ուսանողներն են: 95 թվականին ինձ հրավիրեցին ղեկավարելու պետական թատրոնը: Բեմադրություններ արեցինք, ինստիտուտում դասավանդեցի:

Մենք ազգական չունենք այնտեղ, հայրս մտեցի էր, մայրս վանեցի, հանդիպել են Լենինականի որբանոցում: Բայց այդպիսի ամիս չի եղել, (53 թվականին եմ դուրս եկել Լենինականից), որ այնտեղ չլինեմ, անգամ արտասահմանից գալուց հետո առաջինը այնտեղ եմ գնացել: Ֆրունզիկը զարմանում էր, ասում էր՝ ինչի՞ ես էդքան շուտ- շուտ գնում... Ասում էի՝ գնում եմ էն բակը, ամբողջ գիշեր նստում եմ ու փնտրում մանկությունս, իհարկե չեմ գտնում, բայց լիցքավորվում եմ ու գալիս Երեւան՝ գործ անում:

Գյումրին էսօր մշակութային քաղաք է, աղջեալու երեխեք կան, աղջեալու արվեստագետների սերունդ կա: Բայց մի բան էլ կա, եթե նստում եք ավանդույթի վրա ու տեղից չեք շարժվում, դա վնասակար է: Գյումրիում կարծես նման վիճակ է:

Ես համոզված եմ, որ լավ կլինի:

Ես գտնում եմ, որ մենք մեր երկիրը պարտք ենք արել ոչ թե մեր նախնիներից, այլ մեր սերունդներից: Ուրեմն պիտի լավացնենք, գեղեցկացնենք, զորացնենք ու մեր պարտքը տանք: Էդպես ենք արել մեր պապերը, էդպես պիտի անենք եւ մենք:

ՋԱՎԱԽՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Մարտին ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Համառոտ ուրվագիծ

Ջավախքի սարերն այնքան բարձր են, աղբյուրներն այնքան սառնորակ ու զրնգուն, որ թվում է «անառիկ ու վեհանիստ լեռների», «արեւոտ ու հանգիստ սարերի» այս կախարդական աշխարհում, խորունկ ձորերի մեջ ու երկնագույն լճերի վրա փափուկ հովը եւ չափազանց ցուրտ քամին ամեն օր զարմանալի ասքեր են պատմում:

Պատահական չէ, որ աշխարհի ազնվական բանաստեղծներից մեկը 1902-ին այստեղ տեսավ, թե ինչպես բարձրագահ Աբուլն ու Մթին սարերը

Մեջք մեջքի տված կագնել վեհափառ
Իրենց ուսերին Ջավախքից էլ վեր
Բռնած պահում են մի ուրիշ աշխարհ:

Մի ուրիշ աշխարհի գոյությունը պարտադիր պայման է բոլոր իսկական բանաստեղծների, եթե կուզեք իսկական մարդու համար, որի հարստությունը չափվում է հենց այդ աշխարհի տարողությամբ եւ շքեղությամբ:

Ասես, երկնքի, հողի եւ մարդու հանդեպ ջավախքցու ակնածանքը ինքնին բազմաբերդ մի մշակույթ է, մարդկային հոգու գեղեցկությունը ցոլացնող բնական ու «անարվեստ» մի հայելի, որը տեխնիկական ու նյութական առաջընթացով հատկապես մտահոգված մեր ժամանակաբջանի որագմաիստների համար միամիտ ու բացարձակապես անոթեթ մի բան է թվում: Անգլիացի աշխարհագրագետ Լինչը, որի «Հայաստան» երկհատորը հայոց աշխարհագրությանը, պատմությանը, որոշ չափով նաեւ ազգագրությանն ու մշակույթին նվիրված լավագույն աշխատություններից է, 1891-ին, այնուամենայնիվ, ոչինչ չհասկացավ՝ տեսնելով, թե եկեղեցու շեմի մոտ ինչպես են հողը երկրպագում Ախալցխայի հայերը:

Հոգեւոր թռիչքի վիթխարի ուժականություն կուտակած հայերը՝ Մովսես Խորենացին, Գրիգոր Նարեկացին, Խաչատուր Աբովյանը, Մխիթար Սեբաստացին, Միքայել Նալբանդյանը, Հովհաննես Թումանյանը, Թորոս Թորամանյանը, Կոմիտասը, Միսաք Մեծարենցը, Հովհաննես Խան-Մասեհյանը եւ մյուսները հայոց Արտաշես թագավորի նման երբեք հաղթանակներով չհղփացան եւ այս արքայի նման հաճախ ասացին. «Ավա՜ղ, իմ այս անցավոր փառքին»:

Հրկեզ քո հոգին որոշես առաս խունկ
Աշխարհի համար պարզեցիր անոպարս
Եզ ընդունեցիր երդում ու երկունք
Դու, արքայաբար՝ վեհ ու անհոպարս:

Այսպես էր մտորում 1915-ին ջավախքցի Վահան Տերյանը Նաիրի երկրի մասին:

Համաշխարհային պատմության մեջ քանի՞ թագավոր ու կայսր կարելի է մատանեել, որոնք վեհ ու անհոպարս լինեն հայոց Արտաշես թագավորի նման: Մեծահոգությունը, բարոյականությունը այսօր նույնպես արհամարհված են.

Հիմա անձրեւը քար է, աղակի
Էլ չկա արդեն քո թոնը թախծոտ...

Տերյանի հետ մտովի զրուցում է ջավախքցի երիտասարդ բանաստեղծ Վահագնը:

1839-ին Վարդգես Սուրենյանցի նկարած «Շամիրամն Արա Գեղեցիկի դիակի մոտ» կտավը թեեւ Ասորեստանի թագուհուն նվիրված առասպելների հայկական տարբերակն է գեղարվեստորեն մարմնավորում, սակայն որոշ իմաստով նվիրված է Հայաստանի պատմությանը: Ինչո՞ւ էր Սուրենյանցն ընտրել մի նյութ, ուր համարյա չէր ցոլանում հայոց անցյալի փառքը: Ինչո՞ւ էր ստեղծել մի կտավ, ուր ընդամենը պատկերված էր պարտված առասպելական հայ թագավորը, հաղթանակած Շամիրամ թագուհին, ասորական պալատը: Քանի,՞ քանի՞ եվրոպացի նկարիչներ Սուրենյանցից առաջ եւ հետո նկարել են իրենց հերոսներին ու թագավորներին՝ «հաղթանակն ընբոշխնելիս»: Այդպիսի «հաղթական» կտավներ ստեղծելու համար Սուրենյանցը պետք է դիմեր ազգային ուրիշ առասպելների եւ պատմության ուրիշ դրվագների:

Բայց արվեստի հաղթանակը, ինչպես առաջացնում է համաշխարհային քրիստոնեական մշակույթը, ռազմական հաղթանակի արտացոլանքը չէ, այլապես մշակութային վիթխարի երեւույթներ համարվող «Համլետը», «Դոն Ջիոտը», որոնք, անկասկած, կրում են Ավեստարանի կառուցվածքի ազդեցությունը, սովորական հաղթական ավարտ կունենային:

Ախալցխայում ծնված Վարդգես Սուրենյանցը 1900-1910-ական թվականների ոչ միայն հայ, այլեւ եվրոպական գեղանկարչության երեւելի դեմքերից է: Ֆրանսիայից, Իսալիայից, Ռուսաստանից հետո Եվրոպայում 20-րդ դարում գեղանկարչական առանձնահատուկ կերտվածքներ ստեղծեցին ռումինացիները, հայերը: Մեզ չտեսք է զարմացնի, որ առ այսօր Եվրոպայի, Ամերիկայի զանազան քաղաքներում հատուկ միտումով հրատարակված բազմաթիվ հանրագիտարանների մեջ ռումինացի (օրինակ՝ Ստեֆան Լուկյանը) եւ հայ վարպետները (օրինակ՝ Սուրենյանցը, Գայֆեճյանը, Յակուլովը, Կոջոյանը) չեն հիշատակված: Թերեւս կգա մի ժամանակ, երբ բանաստեղծությամբ հետաքրքրվող եվրոպացի, ամերիկացի ընթերցողներն իրենց համակարգիչների միջոցով կկարդան Կոստանդին Երզնկացու, Նահապետ Քուչակի, Աշուղ Ջիվանու տողերը: Սակայն նաեւ կարող է այդպիսի ժամանակ երբեւէ չհայտնվել մարդկության ճանապարհին: Օտարներին անդայման ճանաչելի դառնալու եռանդը փոքր երկրների մշակույթի կրողների մղումն է: Ես չեմ կարծում, թե մեծ մշակույթ ունեցող Չինաստանի ու Հնդկաստանի իմաստուն բնակիչները ողբերգություն են ապրում այն բանի համար, որ Ամերիկայի բուհերի դասախոսները չեն կարդացել իրենց հին ձեռագրերը:

Սակայն մեր նյութը Ջավախքն է՝ երբեմնի Մեծ ու Փոքր Հայաստանների չքնաղ լեռնաշխարհներից մեկը: Եթե որեւէ պատմական հանրագիտարանի մեջ չգտնեք Մեծ եւ Փոքր Հայք երկրները, ապա թերթեք հատկապես Եվրոպայում հրատարակված լաչիներեն լեզվի բառարանները եւ կգտնեք ձեր հին երկրի անունը, որովհետեւ լաչին հեղինակները հաճախ են գործածել հին ժամանակներից չափազանց հայտնի դարձած այդ հատուկ գոյականը:

Ջավախքի մշակույթը պայմանավորված է այս լեռնաշխարհում ապրող մարդու առանձնահատուկ տեսակով: Նինոծմինդայում, Ախալքալաքում, Ծալկայում, Ասպինձայում, Ախալցխայում ապրում են բնիկներ, նաեւ հայոց տարբեր գյուղերից ու քաղաքներից գաղթածներ, նույնիսկ Կիլիկիայից տեղահանված հայեր, սակայն Ջավախքի վրա տիրական է Կարինի ճաշակը: Բնիկ հայերը, որոնք հայտնի են անհիշելի ժամանակներից, այստեղ ստեղծել են եկեղեցիներ, քանդակներ, խաչքարեր, որոնցից շատերը բարեբախտաբար պահպանվել են: Մնացել է նաեւ վրաց պատմիչ Մովսես վկայությունը, թե Սուրբ Նունեի հետ Փարվանայի մոտ հովիվները խոսել են հայերեն:

Սակայն մեզ առավելապես հետաքրքրում է 19-րդ դարի երկրորդ կեսի եւ 20-րդ դարի ջավախքյան մշակույթը, որովհետեւ իսկական Ջավախքը կազմավորվել եւ ընդհանուր բնութագիր է ստացել այս ժամանակահատվածում, երբ Կարինից, Կարսից, Խնուսից, Մուշից, Վանից, Ալաշկերտից, Բասենից եւ հին երկրի այլ բնակավայրերից այստեղ գաղթեցին բազմաթիվ հայեր: Ջավախքի արմատը Կարինն է, հին ու մեծ Հայաստանը, սակայն Ջավախքն այլեւս Կարինը կամ Խնուսը չէ: Սա բոլորովին ուրիշ մի աշխարհ է, ուր էզրումի, Կարսի, Մշո, Վանի մշակութային ձեւերը, ըմբռնումները, միաձուլվելով Կարինի ճաշակի գերակայությամբ, առաջացրել են հայկական բոլորովին ուրիշ մի մշակութային տիպ, որը կանգ է առել ռուսական կենցաղային (դուխաբորների առկայությունը Ջավախքում) մշակույթի, նաեւ կովկասյան, թաթարական, թուրքական ադրելակերոի սովորույթների սահմանի կամ խաչմերուկի վրա:

Ջիվանին, Հակոբ Մանանդյանը, Հակոբ Կոջոյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը, Վահան Տերյանը ոիտի ծնվեին միայն այստեղ՝ Ջավախքում:

19-րդ դարից հայտնի Ախալցխայի հայկական տարազը Բարձր Հայքի, Կարնո աշխարհի ավանդական հագուստ-կապուտաճ է: Ջավախքի բնակիչների համար այն այնքան նրբագեղ ու գեղեցիկ էր, որ ավելի քան մեկ դար մնաց անխաթար ու անփոփոխ: Հագուստի այս ավանդույթի հետ իր առանձնահատուկ ճաշակով կարող է մրցել թերեւս միայն Վանի 19-րդ դարի քաղաքային զգեստը: Դժբախտաբար, հայտնի են հայոց տարազի միայն 19-րդ դարի նմուշները, այլապես ազգային զգեստի հարուստ ու շքեղ հավաքածու ոիտի ունենայինք Հայաստանի պատմության թանգարանում:

Ջավախքցին յուրահատուկ հոգեկան կերտվածք ունի, վիթխարի ակնածանք հոգու, հոգեւորի հանդեպ: 1908-ին ջավախքցի գյուղագիր Հովհաննես Մալխասյանը մեկնել է Յասնայա Պոլյանա, այցելել Լեւ Տոլստոյին: Նրա հուզումը ինձ հիշեցնում է դեռի տուն դարձած ասպվածաշնչյան անառակ որդու հոգու փոթորիկը՝ հայրենի տան շեմին: Նույնոիպի ադրումներով 1910 թվականին ռուս մեծ գրողին վերջին հրաժեշտ էր տալիս ուսանող Վահան Տերյանը: Ջավախքցու ամեն մի քայլի, գործի մեջ կարելի է կռահել լեռնաշխարհի տառապած, բայց մեծահոգի բնակչի ներաշխարհը, իր արմատները երբեք չմոռացող եւ անընդհատ ու անընդմեջ դեռի Արարատի կողմը թեքված նրա հուսավառ հայացքը:

Ջավախքցին գրքի պատշաճումք ուսի: Պատահական չէ, որ Ծուղրուբի Ավետարանը ահա արդեն քանի տասնամյակ Մատենադարանի հարկի տակ իր տեղը գտնելու փոխարեն «թառել» է Ախալցխայի նույնանուն գյուղում:

Վարդգես Սուրենյանցը, Հակոբ Կոջոյանը, Վահրամ Գայֆեճյանը մեր արվեստի երեք մեծ մարաջախտներն են՝ ծնված Ախալցխա քաղաքում: Երեւույթ, որ հիշեցնում է Ցարդախլու գյուղում ծնված մարաջախտներին եւ գեներալներին:

Սարյանի, Թադեւոսյանի, Յակուլովի հետ այս երեք մեծատաղանդ վարպետները 20-րդ դարում ժամանակի նորարարական լեզվով շարունակեցին հայ արվեստի դարավոր եւ փառավոր ճանապարհը, ինչպես Տերյանը մշակույթի եվրոպական մակարդակով ոեղեց հայ բանաստեղծության եւ հայոց լեզվի հին ու եզակի հանքավայրը:

Իրավ է, Ջավախքը Վանի, Մշո, Սասնա աշխարհի չափով հարուստ եւ ինքնաշիտ ազգագրություն չի պահպանել (հատկապես երգի ասպարեզում), բայց, այնուամենայնիվ, այս լեռնաշխարհի ժողովուրդը նույնպես պահել է կենցաղի, ապրելակերոի իր սովորույթներն ու ավանդույթները: Բարեբախտաբար, ժամանակին Երվանդ Լալայանը, Ստեփան եւ Սրբուհի Լիսիցյանները, Վարդ Բդոյանը անդրադարձել են այս բնագավառին, իսկ

այսօր այդ ընորհակալ գործը շարունակում են Ժենյա Խաչատրյանը, Էմմա Պետրոսյանը, Սվետլանա Պողոսյանը (այս հեղինակների նյութերին կարելի է ծանոթանալ վերջերս Ախալքալաքում կայացած գիտաժողովի առիթով Երեւանում հրատարակված «Կերոն-2002» զեկուցումների ժողովածուում):

Այո, հայկական մյուս մարզերի համեմատությամբ Ջավախքի ազգագրական քարտեզը գունաւ է ներկայանում, բայց այստեղ էլ (հատկապես կենցաղային մշակույթով անխաթար ու մաքուր պահպանված Ծալկայի հայոց գյուղերում) ուշադրության արժանի շատ բան կա:

Սակայն վերադառնանք մեզ ամենից շատ ծանոթ եւ հետաքրքրող բնագավառին՝ կերպարվեստին: Վերեւում հիշատակված երեք նշանավոր գեղանկարիչները նորարարներ են: Նորարարության գաղափարը որքան էլ մաշված, որքան էլ վերջին երեսուն տարիների ընթացքում ձեւախեղված, այնուամենայնիվ (անշուշտ ինքը նորարարությունը, ոչ գաղափարը) պարտադիր պայման է, որպեսզի տվյալ արվեստագետին ուշադրություն դարձնեն ժամանակակից գեղարվեստական լեզվի թարմությունը ճաշակած արվեստագետներն ու մասնագետները: Ախալցխայում ծնված Լեւկարը (Լեւոն Տեր-Կարապետյանց, 1897-1966) նույնպես ժամանակակից արվեստի լեզվի մեջ խորանալու հակումներ ուներ (այլապես չէր արժանանա Վ. Մայակովսկու գնահատականին):

Ախալցխայի արվեստագետների լեզուն ասես առաջացել է Բարձր Հայքում, թրծվել է 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի փարիզյան մթնոլորտում: Իսկ Ախալքալա՞քը... Այստեղ, բարեբախտաբար, այսօր երկու հրաշալի գեղանկարիչներ են ապրում: Նրանց մասին քիչ հետո: Իսկ 1960-1970-ական թվականներին ես չեմ տեսել ախալքալաքցի որեւէ արվեստագետի, որն ավանդական ու հայենի ձեւերից մի փոքր հեռուն գնալու համարձակություն ունենար: Խորունկ անհատականություններ Ռաֆայել Նանուշյանը եւ Ռաֆայել Ղարագյուլյանը, որոնց մարդկայնությամբ, հոգեկան գեղեցկությամբ ես եւ շատերը ուղղակի հմայված էինք, մոդեռն, նորարար, առավել եւս մոդայիկ երեւալու մարմաջ չունեին: Նրանք այնքան հետաքրքիր եւ այնքան բնական էին, որ մենք հաճախ մոռանում էինք նրանց բարի, ավանդականությունը հարգող եւ պահպանող նկարների գոյությունը:

Երկու ջավախքցի, որոնք 1960-ականներին որոշ չափով առնչվում էին իմպրեսիոնիզմին, ֆուտուրիզմին, աբստրակցիոնիզմին, ուսանում էին Հայկական մանկավարժական ինստիտուտի նոր բացված նկարչական բաժնում: Նկատի ունեմ պլակատներով եւ ռուսական ավանգարդի գեղագիտությամբ հրապուրված Կառլեն Կարապետյանին եւ վերացարտացության խորհրդավորությանը թեքված տողերիս հեղինակին:

Ջավախքի այսօրվա արվեստագետների մեջ կան ժամանակակից ձեւերի ծավալների հարաբերությամբ ուշագրավ արդյունքների հասած արվեստագետներ (օրինակ՝ քանդակագործ Բաղդասար Սարգսյանը), սակայն ինձ հատկապես այս վերջին տարիներին (երբ Ջավախքը գյուղատնտեսական տեխնիկայի բացակայության պատճառով վերածվել է միջնադարյան մոռացված մի մեծ ագարակի) հետաքրքրում են երկու տաղանդավոր գեղանկարիչ՝ Սերգեյ Ունանյանը եւ Մնացական Ղալաչյանը: Այս երկուսը կարող էին Եվրոպայի որեւէ երկրում ուշադրության արժանանալ:

Բայց նրանք չեն էլ մտածում Ջավախքը լքելու մասին:

Ջավախքն այսօր Վրաստանի կազմում ինքնավարություն ձեռք բերելու հույսեր է փայփայում: Ինքնավար Ջավախքը, կարծում եմ, առավել խորությամբ կմոտենա իր արմատներին եւ էությանը, առավել մեծ հարգանքով կլցվի դեռի եղբայր վրաց ժողովուրդը եւ առավել վստահ կքայլի դեռի իր անվտանգ ու քաղաքակիրթ ապագան:

Ապագայի Ախալքալաքում ես տեսնում եմ երկիարկանի լուսավոր մի շենք. դա Ջավախքի պատկերասրահն է, շատ ավելի գեղեցիկ ու մարդկային մի շենք, քան Ազատության փողոցում գտնվող այսօրվա մշակույթի տունը:

Գյումրի-Ախալցխա կարեւոր ու միջազգային ավտոխնդուղուց օգտվող զբոսաշրջիկները Ախալքալաքում իջեւանելիս անոպայման կայցելեն այս պատկերասրահը, ուր կտեսնեն Մնացական Ղալաչյանի, Սերգեյ Ունանյանի, Համլետ Արոյանի, Վարդ Ղարսլյանի եւ այլոց նկարները, որոնց հաղորդած հոգեւոր տեղեկությանը այցելուները չեն հանդիպի եւ ոչ մի ուրիշ քաղաքում եւ ուրիշ երկրի թանգարանում:

Իսկ եթե սա ձեզ թվում է երազանք-ուտոպիա Կամպանելայի Արեւի քաղաքի նման, ապա ես տեսնում եմ նաեւ մշակութային խնդրի այսօրվա լուծումը: Որեւէ մի գործարար (նկարչությունից մի փոքր հասկացող) Ջավախքի նկարիչների գործերը կարող է վաճառքի նպատակով արտահանել Եվրոպա (օրինակ՝ Գերմանիա): Եւ պատկերացրեք, այդ «անիվը» կդադարի: Եւ մշակութային արժեքը հետեւությամբ կարող է վերածվել նյութական արժեքի: Այլապես տեղական մշակույթի զարգացումը չի խթանվի: Իսկ Ջավախքի ընդհանուր մշակույթը պետք է ասիճանաբար հրաժարվի որոշ ձեւերից եւ մղվի դեռի արդյունավետ բնագավառներ...

Որպեսզի ասածս շատ խորհրդավոր չթվա, հիշենք մեղվաբուծությունը՝ մարդկության, նաեւ հայոց այդ հին, զարմանահրաշ մշակույթը: Այն կարող է հինգվիվ փոխել Ջավախքի կենցաղը:

Սերգեյ Ունանյան. «Գյուղի մի փողոց», 1998թ.

Մնացական Ղալաչյան. «Հին հոյակապ դամբարան», 1998թ.

Մ. Միրզոյան. «Ինչ քաղաքում», 1969թ.

Վարդ Ղարսլյան. «Մրեկի խավարում», 1987թ.

Մի՞թե անմեղ գառնուկին
Եվ հրեղեն խոլ վագրին
Նույն ուժն է արարել՝
Զորեղ աջը երկնային...
Ու. Բլեք



ԽԱՉԱՏՐՅԱՆԱԿԱՆ ՎԵՐՈՒՇ

2003-ին հայ ժողովուրդը պատշաճ շուքով կնշի իր մեծագույն զավակներից մեկի՝ Արամ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ծննդյան 100-ամյակը, մեզ կմիանա ողջ քաղաքակիրթ աշխարհը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մակարդակով:

Մի՞թե առյուծակերող Սոպարտակի ու նենգ Կրասոսի սիրասուն Ֆրիգիայի ու գայթակղիչ Էգինայի կերպարները նույն երեւակայությունն է ստեղծել: Այո՛, Արամ Խաչատրյանը՝ նույն վարպետն է կերտել «Զանգով սիմֆոնիան» (1943) իր «Մահվան պարով» ու կենսահաստատ ֆինալով, «Սուտերով պարի» հնչյունների կրակահերթը ու Գայանեի նրբագեղ առաջոն, «Օրորոցայինը»...

Խաչատրյանն ավելին է, քան պարզապես երգահան: Նա մեծ մարդասեր է: Կոմպոզիտորի անունը ոսկե տառերով գրված է Մոսկվայի կոնսերվատորիայի մարմարե տախտակին, մինչդեռ այն շողշողում է նաեւ մշակութային այն գործիչների համաստեղության մեջ, որոնց առաքելությունն էր հաշտեցնել, ներդաշնակել Արեւմուտքն ու Արեւելքը, մարդկությանը տեսնել իբրեւ մեկ ամբողջություն: Այլ կերպ ահագնացող բեւեռացումը կործանարար է ոչ միայն մշակույթի, այլեւ, առհասարակ, մարդկության համար: Ահավասիկ լույսի զինվորները՝ Ռերիխ, Մահլեր, Շվայցեր, Հերման Հեսսե, Ռավի Շանկար, Մենուհին...

Ի տարբերություն մյուս երգահանների, Խաչատրյանի ոճը, տեսակը չի ունեցել նախադեպ: Ըստ Դոստոեւսկու, Ռուսաստանում միայն հանճարին է հաջողվում գտնել «պատշաճ» ձեւ, իսկ Եվրոպայում՝ կայացած ձեւը ցանկացած մանրավաճառի սեփականությունն է: Ասես Խաչատրյանին են վերաբերում այս խոսքերը, անշուշտ, որոշ վերապահումով. նա էլ եվրոպական ձեւերը՝ սիմֆոնիան, կոնցերտը եւ այլն «լցրել» է արեւելյան հրավառ բովանդակությամբ: Խաչատրյանի արվեստը ազգայինի եւ համամարդկայինի միաձույլն է, կիզակետը: Նրա երաժշտությունը ռուսական բազմազգ մշակույթի անդաստանում բացված հայկական վառ ծաղիկ է, որի արմատները բխում են ժողովրդական արվեստի խորքերից, համեմված ասիական հովերով:

Կոմպոզիտորի ծննդավայր Թիֆլիսը մշակույթի մի խառնարան էր (ինչպես Վիեննան Հայդնի օրոք): «Երգող քաղաքում» (Խաչատրյան) հնչում էին վրացական, հայկական, պարսկական եւ այլ ժողովրդական ու աշուղական երգեր, պարեր, ինչպես նաեւ իտալական օպերաների մեղեդիներով հորինված վրացական երգեր: Խաչատրյանը սիրով է հիշում մոր երգերը, ումից ժառանգել է իր երաժշտությունը: Պատանու համար ցնցող էր առաջին օպերային ներկայացումից ստացած տպավորությունը (Զ. Փալիաշվիլի՝ «Աբեսալոմ եւ էթերի»): Ըստ Ցայկովսկու, Թիֆլիսում Եվրոպան եւ Ասիան ամենուր բախվում են միմյանց, միախառնվում: Մոսկվայում ուսումնառության տարիներին երիտասարդի հոգին ներծծվում էր նաեւ ռուսական արվեստով, իր առաջին ուսուցիչ Մ. Գնեսինի մշակած հրեական երգերով: Արամի հոգին ոռոգվում էր նաեւ հոգեւոր երգեցողությամբ՝ նա երգել է Թիֆլիսի մեծարանի եւ Մոսկվայի եկեղեցու երգչախմբերում: «Ինձ գերում էր հայկական հոգեւոր երգերի վեհ գեղեցկությունը»,- մոլեգնող աթեիզմի տարիներին խոստովանել է կոմպոզիտորը: Ուրեմն պնդել, թե Խաչատրյանի երաժշտությունը միանգամայն զերծ է հոգեւոր հնչերանգներից, այնքան էլ հանգիստ չէ: Մանավանդ, ըստ Կոմիտասի, հայ գեղջկական եւ հոգեւոր երաժշտությունը քույր-եղբայր են եւ նույն կազմությունն ունեն: Ընդհանուր ինչ-որ բան կարելի է տեսնել «Զուրակի կոնցերտի» 2-րդ մասի այտերի մենանվագի ու Պատարագի «Ամեն, Հայր սուրբ» շարականի ելեւէջների միջեւ: Իսկ 2-րդ սիմֆոնիայում Սեղեղ դատաստանի թեման՝ «Dies irae»-ն, միահյուսվում է «Որսկան ախոյեր» երգին: «Dies irae»-ն հանդիպում ենք նաեւ «Սոպարտակ»-ում, «Անդաբատների մարտում»: Երաժշտագետները նշում են հայկական Պատարագի ազդեցությունը հռոմեական եկեղեցական երգեցողության վրա, իսկ՝՝ «Dies irae»-ն դրա վառ արտահայտությունն է:

Նախորդների ժառանգությունը կոմպոզիտորը անցկացրեց իր սրտի քուրայով, ստեղծեց սեփական հրեղեն լեզուն, որով աշխարհին պատմեց իր սերը, երազները, իր ժողովրդի ճակատագիրը: Երգահան, մարդասեր Խաչատրյանը նաեւ դյուցազուն է, նրա մեծակերտ արվեստը դյուցազներգություն է, հերոսապատում: Եթե հնարավոր լիներ չափել նրա հնչյունների «շղթայական ռեակցիայի» ուժը... Ինչպես Վագների արվեստում զգացվում է Զիգֆրիդի ուժը, այնպես էլ Խաչատրյանի արվեստը հագեցած է Սասունցի Դավթի ճչով: Եվ այն «պայթում» է կոնցերտներում, սիմֆոնիաներում, բալետներում: «Սոպարտակն» իր հռոմեական

ճոխությամբ գերել է աշխարհը, կերոպարները ցցուն են, ճկուն եւ քանդակային:

Մտաբերենք Սպարտակի եւ Ֆրիգիայի ադաջոն, Ֆրիգիայի «Գուշակության պարը», Էգինայի «Գայթակղության պարը», «Գաղեսական կույսերի պարը», որը ձյան գնդիկի պես գլորվելով խոշորանում է (ինչպես Ռավելի «Բոլերոն»), բախվում Կրասոսի ճամբարում հայտնված Սպարտակին ու ջարդուփշուր լինում: Խաչատրյանի երկը մաքրագործում է լսողին, որը երեւակայությամբ նույնանում է հերոսին, հաղթահարում իր «ես»-ը, նահատակվում՝ հանուն վեհ գաղափարի:

Բալետի հաջողությունն այնքան մեծ էր, որ պատմում էին հետեւյալ զավեշտը. «Մին էր Սպարտակի ապստամբության բուն նպատակը»: Պատասխան՝ «Սպարտակը ապստամբեց, որպեսզի Արամ Խաչատրյանը ստեղծի «Սպարտակ» բալետը»...

Ղարաբաղյան պոռթկումի թեժ օրերն էին, Ազատության հրապարակը շրջապատված էր ռուս զինվորներով, իսկույն էին նաեւ օպերային թատրոնի ներսում: «Սպարտակի» ներկայացումը ձգձգվում էր: «Վաղը «Սպարտակը» կայանալո՞ւ է, թե՞ ոչ»,- հարցրեցի մի ռուս սպայի, որը պատասխանեց. «Չգիտեմ, հարցրեք գնդապետին»: Եվ այդ գնդապետ - «Կրասոսը» պիտի որոշեր «Սպարտակի» ճակատագիրը: Ի դեպ, մահից առաջ, 1978-ին, Խաչատրյանը հեռագիր էր ուղարկել Երեւան, որում անհանգստություն էր հայտնել «Սպարտակի» բեմական ճակատագրի մասին): Այսօր էլ չի երեւում «Սպարտակը», ավելին՝ բուկինիստական խանութներում դրված են Խաչատրյանի երգերը, մենագրությունը. ինչ-որ աղքատացած երաժշտագետներ ստիպված են Խաչատրյանին «վերափոխել» հացի... Եւ Խաչատրյանը ըմբռնումով կմոտենար այս երեւույթին:

1915-ի Եղեռնի գույժը հասել էր Թիֆլիս, ճիշտ է, թուրքի յաթաղանի ծայրը չհասավ այստեղ, բայց 12-ամյա Արամն իր ընտանիքով տեսավ գաղթ, սարսափ, սով: Հետագայում նա կրեց անհաճո պատճամունքի տարիների հալածանքը, հրաժարակվելու, երկերը կատարելու 1948-ի արգելքը եւ այլն:

Խաչատրյանը վերադրեց այս ամենը, վեր խոյացավ... Կոմպոզիտորի ներգործման դաշտը «խաչատրյանականացված է» (պրոֆ. Գ. Տիգրանով), խաչատրյանական «գենը» կարելի է նկատել է. Հովհաննիսյանի, է. Միրզոյանի, Ա. Բաբաջանյանի, Ա. Հարությունյանի արվեստում, նաեւ ճապոնացի Տերախարայի, ռումինացի Վիերուի, Ա. Էշպայի եւ այլազգի ուրիշ աշակերտների արվեստում: Ջազային հայտնի շեփորահար Մայլս Դեյվիսը եւս խոստովանել է իր կրած խաչատրյանական ազդեցության մասին: Վարպետի արվեստը մղում է արարելու բնավ ոչ միայն ասպետին՝ մեկն այնքան էր հրաշուրվել, որ «Սուսերով պարը» նվագել էր... սղոցի վրա, հեղինակի ներկայությամբ: Ինքը՝ Արամը, փոքր ժամանակ նվագել է նույնիսկ ոտնձեր կաթսաներով (մանավանդ կաթսաները հաճախ դասարկ էին, ուստի՝ զրնգուն): Մանկության մյուս նվագարանը շեփորն էր: Պատահել է, երբ արդեն հայտնի էր նաեւ իբրեւ դիրիժոր, մաեստրոն շեփորի վրա նվագելով է արտահայտել իր պահանջը: Իր մտահղացումները տեղ հասցնելու համար վարպետը դիմում էր նաեւ անսովասելի միջոցների: Ամերիկահայ դաշնակահար Շահան Արծրունին պատմել է, թե ինչպես է խնդրել Խաչատրյանին լսել իրեն եւ ուղղություն տալ: Խոսքերը սպառվել են, կոմպոզիտորը հանել է իր բաճկոնը ու սկսել պարել. Արծրունու պատկերավոր նվագը գոհացրել էր հեղինակին:

Դանիել Երաժիշտ

Շարունակելի

«ՆԱՆԵ» ՊԱՐԱԽՈՒՄԸ

եւ ՇՈՒՇԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

միացյալ համերգ երեւանյան բեմում

«Էրվում եմ, էրվում...». այսպես էր կոչվում «Նանե» շոու բալետի եւ Շուշան Պետրոսյանի մասնակցությամբ թատերականացված համերգը, որ իրապես մշակութային երեւույթ էր Երեւանի հունիսյան համերգացանկում: Երկու օր՝ հունիսի 7-ին եւ 8-ին, Երեւանի Ազգային օպերայի եւ բալետի թատրոնի բեմում «Նանե»-ի պարուհիներն ու տաղանդաշատ երգչուհին հանդես եկան երգի ու պարի բարձրարվեստ մի ներկայացմամբ, որ առանձնանում էր թե՛ թեմատիկ եւ թե՛ կատարողական արժեքներով: Հուլիսի 16-ին նույն համերգը վայելելու հաճույքն ունեցան նաեւ գյումրեցիները:

Համերգի նախաձեռնությունը «Նանե»-ինն էր (Նարինե Տոդոյան, Ասյա Մխիթարյան): 7-ամյա պարախմբի ստեղծագործական կյանքում սա դրամատիկ մի անցում էր, երբ աղջիկների նախկին «եռաստաղը» բեմ էր բարձրանում արդեն իր իսկ սաների հետ, պահպանելով պարախմբի ստեղծագործական հենքը՝ ժողովրդական պարը ժամանակակից մատուցմամբ: Այս ամենը լրացվում էր Շուշան Պետրոսյանի շռայլ տաղանդով ու նաեւ՝ մնջախաղով (Անուշ եւ Լիլիթ Ստեփանյաններ), որ ստեղծում էր թեմատիկ ընդհանրացումներով թատերականացված ներդաշնակ մի ներկայացում՝ սպիտելով հանդիսատեսին ամրել ռոմանտիկ-երազային, ապա՝ փոքր-ինչ հումորով ոեցրո վիճակներ, վայելել ժողովրդական, համաբխարհային դասական ու ժամանակակից թեմաներով կատարումներ: Երգիչ ու պարիչ համահունչ թեմատիկ մտահղացումներն ամբողջացնում էին էկրանային պատկերները, բեմի գունային ու լուսային զուտ լուծումներն ու, անշուշտ, պարուհիների ճաշակով ընտրված զգեստները:

«Այս համերգն ինձ համար մշակութային որոշակի սկզբունքների ու համոզմունքների հաստատման ու իրականացման փորձ էր: Ավելին, այն պայքար է այսպես կոչված շոու արվեստի ժամանցային հոգեբանության դեմ, երբ մի տեսակ ռեստորանային արվեստը, հարեւանի հետ պահի տակ արված կատակը հասցնում են բեմ՝ վերացնելով ստեղծագործական արժեքների սահմանները: Սակայն զվարճանքի ու ծաղրուծանակի խառնուրդը չպետք է ստիպել պրոֆեսիոնալ արվեստի հետ: Շատ կուզենայի մեր կյանքում հաստատված տեսնել այն, ինչն իրապես մշակութային արժեք է: Այս նկատառումներից ելնելով՝ մեր այս համերգը սրտացավ մի բան պիտի լիներ՝ սրտացավ երգ, սրտամոտ մի պար, դարեր ապրած ու ժամանակի քննություն բռնած մի նյութ», - համերգի գեղարվեստական ղեկավար, մնջախաղաց եւ ռեժիսոր Լեւոն Իվանյանի այս խոսքը հավակնոտ հայտարարություն չէ, քանի որ «Էրվում եմ, էրվում...»-ը ասվածի հաստատումն էր: Երկու ժամ տեւած համերգի ընթացքում (առանց ընդմիջման) ժամանակակից մշակմամբ ներկայացվեցին հանրահայտ ու սիրելի թեմաներ, որոնց մասին ազդարարում էր համերգի ծրագիր-բուկլետը. «...Ցեսեան «Կիլիկիան»՝ «Լուսնյակ գիշեր»-ի «Էրվում ենք, էրվում...» նրա կարոտից... «Լույսը բացվեց»՝ շարունակում ենք արարել: «Մոկաց հարսներ»-ը «Հարս եմ(ն) գնում»... Եւ քանի դեռ ապրում ենք այս Արեւի տակ, այս Երկիր մոլորակում... Եղեռն վերապրած ժողովրդի ցավով հասկանում ենք «Շինդ-լերի ցուցակը» ու ոգեկոչում Հեմնելի «Մեսսան»: Բայց միեւնույն է՝ «Երազ իմ երկիր»-ը մնում է «Իմ անուշ հայրենիքը», «Մուշեղ» ու «Ադանան»... Եւ թե՛ «Մենության» մեջ, թե՛ կրքոտ «Իսպանական» պարելիս՝ «Եկ երազենք», որ գոնե Հայաստանում հայը հայրենաբաղձ չլինի... Եկ երազենք...»:

Եւ սակայն ափսոսանք ու տարակույս ես ապրում, երբ պարզվում է, որ նմանատիպ համերգի դրամարկղը գրեթե դատարկ է մնում, իսկ լեցուն դահլիճ ապահովելու համար համերգի կազմակերպիչներն ստիպված են լինում բաժանել նախատեսվածից շատ ավելի հրավիրատոմսեր: Ու մտորելու տեղիք է տալիս, թե ինչպես է պատահում, որ շատ ու շատ ցածրարվեստ, այսպես կոչված «գաստրոլյորային» համերգների տոմսերը միանգամից սպառվում են: Թերեւս, սա էլ ազատ շուկայի առանձնահատկություններից է, որի թելադրած օրենքներով ապրում է նաեւ արվեստի աշխարհը: Սակայն այն նաեւ ժողովրդի մշակութային կողմնորոշման խնդիր է, որ պետք է առաջին հերթին մտահոգի մշակույթի մարդուն:

Այսօր, երբ մշակութային դաշտում հավասար իրավունքներով հայտնվում են ամեն տեսակի պարախմբեր ու երգիչներ, հասարակությունը հաճախ դժվարությամբ է տարբերակում իրական արվեստի սահմանը՝ հետեւությամբ ընդունելով այն, ինչն ընդամենը պարզունակ է:

«Իմ կարծիքով չափազանց կարեւոր է, թե ի՞նչ ենք ներկայացնում հանդիսականին եւ ինչո՞ւ: Ճաշակի անկում կա, որ սրտի խոր ցավով եմ ասում: Ցեմ ուզում ոնդել, թե ինչ ինձ է դուր գալիս, պետք է դուր գա շատերին: Սակայն չեմ կարծում նաեւ, թե այսօր Հայաստանում եւ ողջ հետխորհրդային հանրապետություններում շատ տարածված կատակելու արվեստը, երբ պահպանվում է միայն արտաքին ձեւը, իսկ ներքին էությունը որեւէ աղերս չունի մտածողության, ընկալման ու ապրելակերպի հետ, որեւէ մեկին խորապես հուզում է: Որպես կանոն այդ արհեստածին «արժեքներին» տեղ են տալիս պրոֆեսիոնալ պատրաստվածություն ու հիմնավոր կրթություն չունեցող կատարողները, ովքեր անցել են ընդամենը շնորհքի հոկման մի քանի պարզունակ աստիճաններ՝ պարի, երգի, ասմունքի եւ այլն: Ամեն դեպքում դրանք ժամանակավոր երեւույթներ են, որոնք ժամանակի հետ ինչպես գալիս, այնպես էլ գնում են: Մինչդեռ մեր խորքերն անհամեմատ ավելի խորն են ու մեր բարձրությունները անհամեմատ բարձր: Իմաստ չունի նստել առամանդի վրա եւ այլ գանձեր փնտրել»,- ավարտում է իր խոսքը Լեւոն Իվանյանը, որ արդեն մտածում է հաջորդ համերգի մասին:

Օգոստոսին վանաձորյան բեմում պարի եւ պոեզիայի համադրություն էր. «Նանե» պարախումբ - Վլադիմիր Աբաջյան ու Գրետա Մեջլումյան: Իսկ հաջորդ տարի հավանաբար «Նանե»-ի հյուրը կդառնա Տաթեւիկ Հովհաննիսյանը:

Հեղինե ՄԿՐՏՉՅԱՆ

Այսօր արտասահմանում գոյություն ունեն տարբեր ազգերի երաժիշտներից փնջված նվագախմբեր, որոնց մասնակիցներին հնչնահատ անուն են տվել՝ «սիմֆոնիկ քոչվորներ»: Այդ տաղանդավոր «քոչվորները», ի հեռուստ ժամանակի պատակտիչ ուժերի, ամենուր լույս ու գեղեցկություն են սփռում, նոստատում ազգերի մերձեցմանը:

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՆՎԱԳԱԽՄԲԵՐՈՒՄ

2000 թ. Շվեյցարիայի Վերբյե քաղաքում կազմավորվեց փառատոնային սիմֆոնիկ նվագախումբ, որի հովանավորն է UBS բանկը: Նվագախմբում ընդգրկվելու համար երաժիշտները ուղարկում էին իրենց ձայներիզը եւ հավանություն ստանալու դեպքում հրավիրվում մրցույթի՝ Փարիզ, Լոնդոն եւ այլուր, ըստ նվագողի հարմարության: Արտագնա ժյուրին ընտրում էր լավագույններին: 108 երաժիշտներից 24-ը ԱՄՆ-ից են, 11-ը՝ Գերմանիայից, 7-ը՝ Ֆրանսիայից, 4-ը՝ Ճապոնիայից, 2-ը՝ Ռուսաստանից եւ այլն:

Երեք ջութակահարներ Կոմիտասի անվան կոնսերվատորիայի շրջանավարտներ են՝ Ա. Խաչատրյանի անվան մրցույթի դափնեկիր Գոհար Դանիելյանը, Հովհաննես Բաղդասարյանը եւ Մայա Մարգարյանը: Հետագայում նրանց միացավ Ա. Խաչատրյանի անվան մրցույթի դափնեկիր Զոհրաբ Թադեւոսյանը (ջութակ): Նվագախումբը գլխավորում է Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» օպերայի գլխավոր դիրիժոր Ջեյմս Շիվայնը: Դրավիրված դիրիժորներից են Յու. Տեմիրկանովը, Զ. Մեհտան, Պ. Յարվին եւ ուրիշներ: Մենակատարներից են Մարթա Արգերիչը (դաշնամուր), Բարբարա Հենդրիկսը (սոպրանո), Վադիմ Ռեմինը (ջութակ): Ծրագրում դասական եւ ժամանակակից երաժշտության կոթողներ են: Տարին 2-3 անգամ նվագախումբը շրջագայում է ԱՄՆ-ում, Արգենտինայում, Անգլիայում, Իսպանիայում ու այլ երկրներում...

Նվագախմբում տարիքային սահմանափակումը մինչեւ երեսունն է, ուստի Գ. Դանիելյանը, հաջողությամբ մասնակցելով մեկ այլ մրցույթի, ընդգրկվել է ԱՄՆ-ի Մայամիի սիմֆոնիկ նվագախմբում, ուր նման սահմանափակում չկա:

Հետաքրքիր է նաեւ Գոհարի քրոջ՝ ջութակահարուհի Հասմիկ Դանիելյանի «ոդիսականը»: Երեւանի կոնսերվատորիայի ուսանողուհին 2000 թ. մրցույթով ընդգրկվեց Բելգիայի երիտասարդական ֆիլհարմոնիկ նվագախմբում, որը ելույթներ ունեցավ Բրյուսելում, Բեռլինի հռչակավոր փառատոնում եւ այլուր:

2001-ին Հասմիկը հանդես եկավ Վիեննայում, «Ստերգաու» սիմֆոնիկի կազմում, որի ղեկավարն էր հայտնի Վալերի Գերգիևը: Այս երկու նվագախմբերում Հասմիկը միակն էր Հայաստանից: Իսկ 2002 թ. ամերիկա-ռուսական նվագախմբում (ARYO) նրան միացավ նույն կոնսերվատորիայի սան, ջութակահար Արսեն Մուրազյանը: Ջութակահարներից մյուս հայը ԱՄՆ-ից էր՝ Քրիստափոր Քաթրանջյանը: Մենակատարները՝ Ալեքսեյ Պոդկորիտովը եւ Միխայիլ Սիմոնյանը, ԱՄՆ-ից են: Նվագախմբի ղեկավարն է Լեսն Բոքսթայնը (ԱՄՆ): Պատվավոր նախագահներն են Լաուրա Բուշը, Լյուդմիլա Պուտինան, Բելա Քոչարյանը: Նվագախումբը հանդես է եկել Նյու Յորքում, Մայամիում, Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում եւ այլուր: Երեւանում, ի թիվս մյուս երկրների, հնչեց Արամ Խաչատրյանի ջութակի կոնցերտը: Հուլիսին Հ. Դանիելյանը ելույթ ունեցավ Ճապոնիայում (Սապորո, Տոկիո)՝ "Pacific Music Festival" սիմֆոնիկի կազմում, իսկ օգոստոսին՝ Ավստրիայում, «Ստերգաուի» համերգներում:

ՇԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՀԱՄԵՐԳԸ

Մայիսի 30-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի սրահում տեղի ունեցավ ամերիկահայ ճանաչված դաշնակահար եւ կոմպոզիտոր Շահան Արծրունու մենահամերգը: Կատարվեցին Արամ Խաչատրյանի, Բեն Վեբերի, Ջորջ Պերլի, Որքերս Սթարերի, Լուիզ Թալբմայի ստեղծագործությունները՝ մեծ բավականություն պատճառելով երեւանյան ունկնդրին:

Շահան Արծրունին լայն ճանաչում ուներ որպես մենակատար-դաշնակահար, անսամբլիստ, կոմպոզիտոր, ֆոլկլորագետ, ճանկավարժ, դասախոս եւ գրող: Համերգային շրջագայություններ է կատարել Հյուսիսային եւ Հարավային Ամերիկայում, Եվրոպայում, Միջին եւ Հեռավոր Արեւելքում եւ Ավստրալիայում: Նա մի շարք հեռուստահաղորդումների ճանաչված դեմք է (Johnny Carson and Mike Douglas Shows եւ ուրիշներ): Համերգներ է ունեցել Սոմիտակ տանը, ինչպես նաեւ Մեծ Բրիտանիայի, Դանիայի, Շվեդիայի եւ Իսպանիայի արքունիքներում: Արծրունին մշտական կապի մեջ է Հայաստանի հետ, ուսումնասիրում է նրա երաժշտության ակունքները: Ձայնագրություններ է կատարել ԲԲՀ-ի համար, ինչպես եւ ձայնագրման հեղինակավոր ստուդիաներում (Composers Recordings, Inc., Phillips եւ այլն):

Ձայնագրել է Հայաստանի դաշնամուրային երաժշտության անթոլոգիայի երեք թողարկում եւ հայ գործիքային եւ վոկալ երաժշտության 9 ձայնասկավառակ: Նրա ձայնագրություններն օգտագործվում են ճանկավարժական դասընթացներում: Հաճախողներ է կազմակերպել Հարվարդի, Կոլումբիայի եւ Միչիգանի համալսարաններում: Renaissance Medal-ի արժանացած Շ. Արծրունին բազմաթիվ հոդվածներ է գրել միջազգային ճանաչում ստացած ակադեմիական հրատարակությունների եւ բառարանների համար: Արժանացել է «Սուրբ Սահակ եւ Մեսրոպ» շքանշանի:

Նկարիչ

ՊԵՏՐՈՍ ԱՍԼԱՆԵԱՆ



Հանրածանօթ նկարիչ Պետրոս Ասլանեան ծնած է 1937-ին Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքին մէջ: Նկարչութեան առաջին քայլերը առած է 16 տարեկանին՝ Պրոֆ. Սիլժիո Բիչչէիեվի կարող շուքին տակ: Մասնակցած է Բիրմինկամը դրս Պաճս Մըդիսըրրանընս միջազգային ցուցադրութիւններուն, ուր 1958-ին ու նաեւ 1960-ին արժանացած է առաջին մրցանակին: 1961-ին աւարտած է Աղեքսանդրիոյ Գեղարուեստից վարժարանը: 1965-ին հաստատուած է Մոնթրէալ, Գանատա: Յունասանը իր երկրորդ կայքն է, հին քաղաքակրթութիւնը, բնութիւնը, ծովը, արեւը իր ներշնչման աղբիւրը: Իր գործերը ցուցադրուած են եւ կը ցուցադրուին Եգիպտոսի, Յունասանի, Ֆրանսայի եւ այլ երկիրներու մէջ, չմոռնանք անշուշտ նշելու Գանատան եւ Ամերիկայի Միացեալ Նահանգները:

Իր գործերը կը կրեն նոր տպաւորաբաշխ (նեո իմպրեսիոնիստ) դպրոցի դրոշմը: Սակայն տարիներու ընթացքին ստեղծած է իր անձնական լոյսը, սեփական գոյները ու յանգած ինքնուրոյն ոճի մը:

Ահա թէ ինչպես կը ներկայացնէ արուեստի պատմութեան քննադատ Պրն. Յ. Ճելալեան նկարիչի գործի հանգրուաններուն, իր պատասխաններուն մէջ տիրող ոճի եւ ուղղութեան, զինքը յատկանշող գոյներու եւ ձեւ ու կերպարներու մասին՝ վերջին յիսնամեակին յայտնուած ու արմատացած նկարչական դպրոցներու ընդհանրութեան մէջ:

Հին երկու քաղաքակրթութեանց օրրան՝ Եգիպտականին ու արաբականին, ինչ որ կը համեմատուի Նեղոսի սոիտակ եւ երկնագոյն ճիւղերու միախառնումին, Եգիպտոս իր ամէնէն ափարհաքաղաքական ոսան Աղեքսանդրիոյ մէջ ծնունդ տուած է մեր այսօրուան գեղանկարչին: Սակայն Ասլանեան ոչ մեր օրերու համաշխարհայնացման, ոչ ալ երէկուան միջազգայնականութեան ծնունդ է, այլ տիեզերականութեան: Քանզի Պետրոս Ասլանեան Եգիպտոսէն քաղեց իր բնանկարի ջերմութիւնը, Յունասանէն՝ իր կերպարներու նրբագեղութիւնը, Գանատայէն՝ բացարձակ սոիտակը, որ ծիածանի խտացումն է. իսկ հայութենէն՝ գոյնը, իր բոլոր երանգաւորումներով, ինչպէս նաեւ՝ տարր մը, ծովը, որ մեր պարագային կը նշանակէ անհանդարտ ոգի ու որոնում: Պատահական չէ որ հայ նկարիչ Յովհաննես Այվազովսկի եւս ծովը պատեց ու գովերգեց ու ինչպէս մեծ ծովանկարիչը Յունասան գալով հնադարեան սիւներ նկարեց, այդպէս ալ Պետրոս, Այվազովսկիի ծննդավայր Խրիմ երթալով, շուրջ տասնեակ մը տարիներ առաջ ազդուեցաւ իր նախորդ հսկայէն եւ իր պատասխաններուն մէջ հայկական գոյներ, հայկական ոգի մուծել սկսաւ:

Ասլանեանի ոգեղեն հողին մէջ արմատացած են, գլուխը արդէն երկնակամարին կը դպչի, մինչ ձեռքերը զոյգ ծովու ջուրերուն մխրճուած են: Սոյն պատկերի ներգործութեան ներքեւ, իսկոյն յայտնենք թէ Պետրոս մնայուն արժէքներու գովերգուն է բնութեան ու մարդուն: Այդ պատճառով ալ իր երկրպագուները բոլորովին հաւատարիմ են իրեն:

Հալեպում բնակվող հայասանցի նկարիչ ՀՐԱԶԴԱՆ ԹՈՔՄԱՋՅԱՆԻ սույն փոքրիկ հոդվածը գրվել է այնտեղ բացված մանկական մի ցուցահանդեսի առիթով, սակայն վերաբերում է ոչ միայն հիշյալ ցուցահանդեսին: Մտահոգ արվեստագետի բարձրացրած հարցերը հրատապ են նաեւ Հայաստանի ու Սփյուռքի այլ դպրոցների համար:

ՆԿԱՐԻՉԸ՝ ՄԱՆՈՒԿ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԻ ՄԱՍԻՆ

եւ ոչ միայն...

Արամ Մանուկեան ժողովրդային տան «Լ. Շանթ» սրահէն ներս բացումը կատարուեցաւ «Ծիլեր 5» աշակերտական ցուցահանդէսին: Առաջին իսկ հայեացքէն պարզուած էր որ բաւական լուրջ ու հետեւողական աշխատանք է տարուած, որուն արդիւնքն էր ամբողջական ու կոկիկ մէկ ցուցադրանք: Ցուցահանդէս առաւել շահեկան ներկայացած էր, ուր այդ փորձին մէջ կը դիտէինք մեր դպրոցներէն ներս տիրող իրականութիւնը: Անմիջապէս կը մտածես, թէ ինչ լաւ է որ այլազան դասերու տակ կը քաջեր մեր երեխաները ցանկութիւն եւ ժամանակ գտած են մտնելու գոյներու աշխարհը: Միաժամանակ ափսոս որ այսպիսի դպրոցներ շատ չեն:

Աւելին, այնքան արմատացած է նկարչութեան երկրորդական կարեւորութեան դասաժամ ըլլալը, որ սովորութեան համաձայն այդ դասերը անցկացուցած են ոչ համապատասխան ուսուցիչները եւ ոչ ալ համապատասխան նպատակի համար: Արդօք ե՞րբ պիտի անդրադառնանք որ դպրոցի տարիներուն երեխաներու գեղարուեստական դաստիարակութեան մէջ թերանալով, աճեցուցած ենք թեր զարգացած սերունդ: Ամէն մէկ ջօգտագործուած դասաժամ կը մեծացնէ այն տգիտութիւնը, որ առկայ է մեր երեխաներու մտաց գեղարուեստի բնագաւառին մէջ:

Օտար դպրոցները հսկայական միջոցներ տրամադրած են իրենց վստահուած սերունդի մտաց բազմակողմանի, գեղագիտական ընդհանուր զարգացում ապահովելու համար: Մեր ալ խորին համոզումն է որ դպրոցի նպատակը ոչ թէ հիմնատր նկարչական կրթութիւն ապահովելը պէտք է ըլլայ, (անոր համար գոյութիւն ունին նկարչական դպրոցները), այլ մի ընդգրկում ծանօթութիւն ստեղծելն է շրջակայ իրականութեան մէջ գեղարուեստի դրսեւորումներու հետ:

Հանուն արդարութեան կուզէինք նշել մէկ հանգամանք եւս: Ըստ երեւոյթին «արդի գծագրութիւն», «արդիական թեքնիքներ» բառակապակցութիւնները պէտք է աւելի զգոյշ օգտագործել, առաւել եւս այն պարագային, երբ գործ ունենք աշակերտներուն հետ: Մեր ամէն մէկ քայլն ու խօսքը իրենք որպէս օրինակ կընդունին՝ վստահելով մեր հեղինակութեանը:

Արդի արուեստը որոշակի հասկացողութիւն է, ան ձեւաւորուած է 19-րդ դարու վերջաւորութեան եւ 20-րդ դարու սկզբին եւ ան իր մէջ կը ներառէ բազմազան գեղարուեստական շարժումներ: Այդ բազմազանութիւնը օշաքեցնող դարձնելու համար նշենք արդի արուեստը կազմող մի քանի անուն՝ քուբիզմ, ֆովիզմ, էքսպրէսիոնիզմ, ֆուտուրիզմ, դադաիզմ, սիւրիալիզմ... Ապստրակցիոնիզմը այդ շարժումներէն ընդամէնը մէկն է, ընդ որում բացարձակ տարբեր իր սկզբունքներով: Ոաշի եւ արդին որպէս ապստրակցիոնիզմ հոմանիշ օգտագործելը ճիշտ չէ: Իսկ եթէ արդին կօգտագործուի նոր, ժամանակակից, առաջադէմ իմաստով, որպէս բարենիշ (մենք ալ հակած ենք այդ իմաստը ենթադրել) նոյնպէս տեղին չէ, որովհետեւ անմիջապէս հարց կառաջանայ՝ նոր որտեղի՞ համար, Հալէպի՞: Մեզմէ 80-70 տարի առաջ վերացական արուեստը կարելի էր նոր համարել Եւրոպայի մէջ՝ ի հակադրութիւն նախորդ ուղղութիւններուն: Այսօր, եւրոպական տեսանկիւնով եթէ դիտենք, ապստրակցիոնիզմը նոյնքան հին բան է, որքան ըսենք իմպրէսիոնիզմը: Իրենց արդին եթէ դիտելու ըլլանք Վենետիկի վերջին բիենալէով՝ բոլորովին ուրիշ բան է: Իրենց արդի ստեղծագործողները գրեթէ դադրած են ներկ եւ վրձին օգտագործելուց: (Արժէ այստեղ յիշեցնել, որ ապստրակցի հայրը՝ Կանտինսկին, առաջին ապստրակտ աշխատանքը ստեղծել է 1910 թուին, եւ իր տեսութիւնը այս մասին շարադրել է մոտ մէկ դար առաջ):

«Ծիլեր 5»-ը ամբողջութեամբ ներկայացնում է վերացական (ապստրակտ) արուեստին վերաբերող փորձեր: Կարելի էր ցուցահանդէսին այլ խորագիր ընտրել, որպէսզի մասնակիցները շփոթութեան մէջ չընկնեն, լրջօրէն կարծելով, որ իրենք զբաղւում են արդի նկարչութեամբ:

«Գանձասար», Հալէպ, մայիս 9, 2002

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ԱԼԲԵՐՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ալբերտ Ավետիսյանը մեկն է 1970-ական թվականներին հայ արվեստ մուտք գործած այն ստեղծագործողներից, որոնք ընթացան գեղանկարչական ու պլաստիկ լեզվի բարդացման եւ նորանոր արտահայտչամիջոցների որոնումների ճանապարհով: Շուրջ 200-ի հասնող գործերի հեղինակ արվեստագետի նախասիրությունները հավասարապես դրսեւորվում են քանդակագործության բոլոր ժանրերում: Երեւանի Գեղարվեստի ակադեմիայի քանդակագործության ֆակուլտետում ուսանելու տարիներից (1968 թ.) Ա. Ավետիսյանի ստեղծած դիմաքանդակներն ու մանրաքանդակ հորինվածքները ցուցադրվում են Հայաստանում, նաեւ արտասահմանյան երկրներում կազմակերպված ցուցահանդեսներում (Ռուսաստան, Ուկրաինա, Արգենտինա, Եգիպտոս, Ֆրանսիա, Բելգիա, Հոլանդիա): Արվեստագետի պլաստիկ մտածողությանը հոգեհարազատ է հատկապես մոնումենտալ արվեստը, որը նրան հնարավորություն է տալիս արտահայտելու իր զգացումներն ու մտորումները համամարդկային երեւույթների նկատմամբ: 1970-1996 թթ. ընթացքում նա կերտել է 20-ից ավելի հուշարձաններ, մոնումենտալ քանդակներ, որոնք զարդարում են Հայաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Ուզբեկստանի, Ֆրանսիայի քաղաքների հրապարակներն ու հասարակական շինությունները: Տարբեր նյութերից (բրոնզ, պղինձ, փայտ, մարմար, տուֆ) կերտված 3, 5-ից 7 մ. բարձրության այդ քանդակները մեծ տպավորություն են գործում ինքնատիպ հորինվածքի, թեմայի բովանդակության արտահայտմանը համապատասխան նյութի ներքին հնարավորությունները բացահայտելու արվեստագետի վարպետության շնորհիվ: Ստեղծագործական գործունեության վերջին տասնամյակում սերտացել են արվեստագետի կապերը Ֆրանսիայի հետ: Այն նշանավորվում է ոչ միայն նրանով, որ քանդակագործը իր մասնակցությունն է բերում Ֆրանսիայի հայկական գաղթօջախների մշակութային կյանքին, այլեւ համագործակցում է Փարիզի եւ Ֆրանսիայի այլ քաղաքների հեղինակավոր պատկերասրահների հետ: Առաջին այցելությունը Ֆրանսիա կատարած էր Փարիզի մերձակա Իսի-Լե-Մուլինո քաղաքում 1990 թ. հեղինակի «Թռչուններ» բրոնզանյութ հուշարձանի տեղադրման հետ: Սբ. Մարիամ Աստվածածին հայկական եկեղեցու դիմացի պուրակում վեր խոյացող հուշարձանը քանդակագործի նվերն է Ֆրանսիացի ժողովրդին՝ 88-ի երկրաշարժի ժամանակ Հայաստանին ցուցաբերած օգնության համար: 1993 թ. մեկ այլ հայաշաս գաղթօջախի՝ Արֆորվիլի Սբ. Մաշտոց հայկական կրթարանի համար քանդակագործը կերտում է Մեսրոպ Մաշտոցի դիմաքանդակը (զարդարում է շենքի ճակատամասը) եւ նախասրահի պատին «Միջնադարի հայ գործիչներ» բարձրաքանդակները: Արվեստագետը ներթափանցում է մարդկային ներաշխարհի խորքերը՝ բացահայտելով սիրո ու բերկրանքի, դրամատիկ ապրումների մի աշխարհ, որի բրոնզաձույլ մարմնավորումներից են՝ «Ամազոնուհին», «Գթության քույր», «Խաչելություն», «Մայրություն», «Իմ մուսան», «Կոմիտաս», «Ճաղոնուհին» աշխատանքները: Ա. Ավետիսյանի՝ կատարելատես հղկված, հուզական ներշնչանքով ու խորհրդանշական ընդհանրացումներով քանդակները «արվեստի խառնարան» փարիզյան պատկերասրահներում անմիջապես առանձնանում են մյուսներից:

1999 թվականից քանդակագործն ու նրա տիկինը՝ գեղանկարիչ Ժաննա Սիմոնյանը, բնակվում եւ ստեղծագործում են Ֆրանսիայում, որը նրանց ավելի մեծ հնարավորություն է ընձեռում համագործակցելու Ֆրանսիայի, ինչպես նաեւ հայկական գաղթավայրերի մշակութային օջախների հետ: Ուշագրավ էր այս տարվա հուլիսին Կոմերսի քաղաքում կազմակերպված ցուցահանդեսը ոչ միայն արվեստագետների, այլեւ բազմաթիվ այցելուների համար, որոնցից շատերը առաջին անգամ էին հանդիպում հայ նկարչի հետ: Ինչպես այս, այնպես էլ վերջին տարիների ցուցահանդեսների մեծ մասը կրում է արդեն ավանդական դարձած «Արվեստագետների ընտանիք» խորագիրը: Կողք կողքի ցուցադրվում են հայր եւ որդի քանդակագործներ Ալբերտ եւ Արսեն Ավետիսյանների բրոնզաձույլ հորինվածքները եւ Ժաննա Սիմոնյանի գեղանկարչական գործերը:

Քնար

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

խօսք

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏ

պարբերականին

Յասմիկ Գիմոյեանի միջոցաւ ունեցայ «Հայ արուեստ»ի առաջին թիւը: Քիչ է ըսել ուրախացայ: Այս նոր պարբերականը անշուշտ յիշել տուաւ ինծի տասնամեակներով հրատարակուող «Սովետական արուեստ» ամսագիրն ու անոր բարեհամբաւ խմբագիր Սարգիս Բայանդուրն ու այդ ժամուին աշխատակազմը:

«Հայ արուեստ»ի լոյս ընծայումը կրկին վերհիշումը չէ միայն որ բերաւ ինծի. այլ խորհիլ տուաւ մանաւանդ, որ այս պարբերականին հրատարակվուիլը պատասխան խօսք էր բոլոր անոնց համար, որոնք երկրէն ներս ու դուրս կը մտածեն թէ մեռած է հայ արուեստը քիչ մը ամէն տեղ:

Այդպէս մտածողները չեն գիտեր թէ երբ կայ հողը, կայ նաեւ արուեստը: Անոնք կը մոռնան, որ մեր ծաղկողները Լենկ Թիմուրի ու քանի ճյնկիզ խանի աշավանքներուն ընթացքին անգամ գիտցան նախշազարդել մեր մատեանները:

Ես մասնակիցը եղայ հայ գրողներու համահայկական առաջին համաժողովին: Հալէպ վերադարձիս ի՞նչ բերի հետս կը կարծէք.-87 անուն հայերէն գիրք 80 հեղինակներու կողմէ գրուած միայն վերջին տարիներուն եւ բոլորն ալ գրուած ու հրատարակուած հայրենու հողին վրայ:

Մեռա՞ծ է հայ արուեստը, հայ գրականութիւնը:

Հալէպ վերադարձիս սեղանիս վրայ են խմբական բարեւ տուին ինծի հարիւր տասը հայերէն, արաբերէն ու անգլերէն գիրքեր: Բոլորն էլ տպուած արտասահմանի մէջ հայերու եւ օտարներու կողմէ, բոլորին ալ նիւթը հայ գրականութիւնն ու արուեստը, հայ դասն ու հայոց ցեղասպանութիւնը:

Այս գիրքերն ալ արտասահմանէն:

Մեռա՞ծ է հայ գրականութիւնը, հայ արուեստը:

Մենք հավատացած ենք հայ հողին, հայ ժողովրդին յավերժութեան: Ուրեմն նաեւ հայ մշակոյթի յաւերժութեան:

Թող նշուաղացողները հասնին իրենց եզրակացութեան:

Կողջունենք «Հայ արուեստ»ին լոյս ընծայումը ու անոր կը մաղթենք յարատեւութիւն, գոչելով, մենք քո կողքիդ ենք երբ քո խոսանդ Սփիւռք-Հայրենիք կապերը զօրացնելն է:

Այդ փաստացի կերեւի պարբերականին առաջին թիւէն:

Ջերմօրէն Թորոս Թորանեան
Հալէպ, 25 յուլիս, 2002

RAA-ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Հայկական ճարտարապետությունը ուսումնասիրող կազմակերպության՝ RAA-ի նոպատակն է ներկա Հայաստանի սահմաններից դուրս՝ պատմական Հայաստանի տարածքում, առաջնահերթորեն Արեւմտահայաստանում եւ Կիլիկիայում, ապա հարեւան երկրներում՝ Վրաստանում, Ադրբեջանում, Նախիջեւանում եւ Պարսկաստանում, ինչպես նաեւ սփյուռքում գտնվող հայկական ճարտարապետության կոթողները գտնել, ուսումնասիրել եւ ներկայացնել հայ եւ օտար հանրությանը:

Ստորեւ ներկայացնում ենք հատվածներ RAA -ի 2001 տարեշրջանի գործունեության համառոտ զեկույցից:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

RAA-ի Արեւմտահայաստանի ճամփորդությունը սկսվեց Կեսարիայից (Kayseri), ուր նկարվեցին եկեղեցին, քաղաքի հայկական թաղը (Bahcebasi) եւ շուկան: Կարս քաղաքում լուսանկարվեց հայկական եկեղեցին, որն այսօր վերածվել է մզկիթի եւ անվանվում է Besik Cami: Կարսի հայաբնակ նախկին թաղը, որը 1999 թ. դեռեւս գոյություն ուներ, այսօր ամբողջությամբ ավերված է, տարածքում պահպանվել են միայն խաչքարերի եւ վիմագրերի բեկորներ: Խծկոնքի (Beskicise) վանական համալիրից դեռ կանգուն է խիստ վնասված Սբ. Սարգիս եկեղեցին, որի բոլոր վիմագրերը նորից նկարվեցին:

Անի քաղաքում 2000 թվականից նկարելն արգելված է: Պարսպի վերականգնման աշխատանքները շարունակվում են: Մայր Տաճարի հարավային եւ արեւմյան ճակատներում առաջացել են վտանգավոր ճաքեր:

Փասինլար (Pasinlar) քաղաքի մոտ՝ Դեմիրդովեն ավանում Սբ. Աստվածածնի վանքը 1898 թ. կանգուն էր, այժմ միայն ժամատունն է մասամբ մնացել:

Դիվերիկի (Divrig) շրջանում լուսանկարվել են 6 կանգուն եւ կիսակործան եկեղեցիներ, ինչպես նաեւ տաղանաքարեր եւ ջարդոտված խաչքարեր:

Նկարվեց Աղթամարի վանքը, որտեղ դեռ մի քանի տարի առաջ եղած խաչքարերից մի քանիսն անհետացել էին:

Դասվանի շրջանում նկարվեցին 2 եկեղեցի, Վանա լճի արեւմուտքում՝ Նեմրութ լեռան ստորոտի գյուղերում, կործանված եկեղեցիներ եւ միհումնավոր շինանյութի վերածված տաղանաքարեր:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՑԱԽՈՒՄ

Մարս-ապրիլ (14 օր) եւ հոկտեմբեր-նոյեմբեր (18 օր) ամիսներին Սամվել Կարաոեսյանի նախաձեռնությամբ Արցախում (ԼՂՀ)՝ Ասկերանի, Շուշիի, Հադրութի, Մարտունու եւ Մարդակերտի շրջանների 17 գյուղերում եւ դրանց հանդամասերում, ուսումնասիրվեցին պահպանված հուշարձանները, քարտեզագրվեցին մանրաստեղանունները: RAA-ի արխիվները համալրվեցին եւս 950 պատկերներով, չափագրություններով եւ վիմագրերի ընդօրինակություններով:

ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴԱԴԻՎԱՆՔՈՒՄ

Վանական համալիրը բաղկացած է 10 պատշամունքային կառույցներից, որոնցից 4 եկեղեցի, 6 մատուռ եւ բազմաթիվ այլ շինություններ:

Կառույցների հիմնական մասը մեզ են հասել կանգուն, բայց քայքայված, մինչեւ իսկ վթարային վիճակում:

Դադիվանքի ամբողջական համալիրը հայկական ճարտարապետության կարեւորագույն նմուշներից է եւ ունի առագայում գործող դառնալու բոլոր հնարավորությունները:

Այստեղ տարվող վերանորոգման աշխատանքները մշակույթի պահպանության, ինչպես նաեւ հողատարածքային պատկանելության իմաստով եզակի կարեւորություն ունեն:

Կղմինդրե ծածկ ունեցող Փոքր եկեղեցու վերականգնման աշխատանքները տեխնիկական պատճառներով հետաձգվեցին մինչեւ 2002 թ. գարուն: Այս եկեղեցու մեկենասներն են ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքից Շահեն եւ Մարթա Հարությունյանները:

Դադիվանքի Կաթողիկե եկեղեցու վերականգնման աշխատանքների մեկենասությունը սանձնել է Նյու Յորքում բնակվող Էդիլ Հովնանյանը:

Այս հայրենանվեր գործունեությունն իրականացվում է Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի հոգեւոր հովանավորությամբ:

RAA-Ի ԿՈՉԸ

Առաջին աշխարհամարտի եւ դրան հաջորդող տարիների քաղաքական դժբախտ դեպքերի հետեւանքով պատմական Հայաստանի մեծագույն մասը այսօր գտնվում է հարեւան երկրների սահմաններում:

Արտաք եւ Պարսպատունիք գավառները գտնվում են Պարսկաստանում, ուր եղած կարեւորագույն վանքերը նորոգվում են պետական հովանավորությամբ: Մշակույթի եւ կրոնի հանդեպ ցուցաբերած այս հարգանքը չի զգացվում Հայաստանի հարեւան մյուս պետություններում: Վրաստանում հայկական եկեղեցիները, արձանագրությունները, խորանները քանդում, վրացականացնում են, Նախիջեւանում Հին Ջուղայի գերեզմանատեղի կոթողները ոչնչացնում են, Թուրքիայում՝՝ Աղբակի դաշտում գտնվող Սբ. Բարդուղիմեոս, Մշո Սբ. Կարապետ վանքերը հողին են հավասարեցնում, Խծկոնքի նման վանքերը պայթեցնում, հիմնահատակ կործանում են Բագրեւանդի Սբ. Հովհաննես ու Շուռանցի Կարմիր վանքերը...

Երբ Աֆղանստանում թալիբները ոչնչացրին Բուդայի արձանները, քաղաքակիրթ ախարհը դա որակեց որպես մշակութային ջարդ, նույն ոճրագործությունը պետական հովանավորությամբ տասնամյակներ շարունակվում է Թուրքիայում եւ Ադրբեջանում, երկրներ, որոնք իրենց արժանի են համարում UNESCO-ի եւ Եվրախորհրդի անդամ դառնալու:

Այսօր լավագույն առիթն է կոչելու անտարբերությամբ քողարկված լռությունը եւ հանրությանը ներկայացնելու մեր մշակույթի շարունակական ջարդը:

RAA-ն հրավիրում է ձեզ միանալու այս կոչին եւ համախարհային ատյաններում ներկայացնելու այս բողոքը:

RAA-ի պատասխանատու՝
դոկտ. Արմեն Հախնազարյան

«ԱԼՅԱԹ - ՆՈՎԱ» ԵՎ «ՎԱՀԱԳՆ» ՓԱՌԱՏՈՆԸ

Երկու տարի առաջ ազգային բարերարներ Վահագն եւ Հասմիկ Հովնանյանների նախաձեռնությամբ անցկացվեց հայ երգի գանձարանը հարստացավ 300 նոր երգով: Եվ ահա, անցկացվեց «Սայաթ-Նովա» համահայկական երրորդ փառատոնը, որի արդյունքներն ամփոփվեցին մայիսի 25-ին, Ազգային օպերայի դահլիճում: Ի տարբերություն նախորդ երկու փառատոների, այս տարի հայ երգի մրցանակներ շնորհվեցին երեք անվանակարգերով՝ մանկական, ժողովրդաշուղական եւ ժամանակակից հայ երգերի համար: Առաջին անգամ անցկացվեց նաեւ «Վահագն» մրցանակաբաշխություն, որն արվեստի եւ գրականության ոլորտի մարդկանց խրախուսելու ազնվագույն նպատակն էր հետապնդում: Հանձնվեցին տասնյակ մրցանակներ (ընդհանուր մրցանակային գումարը 60000 ԱՄՆ դոլար), որոնք մեծապես խրախուսելու են հայ արվեստագետներին: Եզրափակիչ համերգի ավարտից հետո Վահագն Հովնանյանն ասաց.

-Այս հրաբալի գիշերը կուզեմ հիշել մեր բանաստեղծներեն մեկի՝ Ժակ Հակոբյանի քերթվածեն մեկ-երկու տող. «Անոնք կտրեցին մեր սրինգը, բայց դեռ նվագ ունինք, անոնք ջարդեցին մեր խաչերը, բայց դեռ աղոթք ունինք...»:

Հիսաքանչ տոն եղավ մայիսի 25-ը: Մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարար **Ռուբեն Հառությունն** այս կատակցությամբ ասաց. «Այս օրերին մեր երկիրն իսկապես տոնական տրամադրության մեջ է: Մենք «Հայաստան-Սփյուռք» երկրորդ խորհրդաժողովի նախաբեմին ենք եւ ահա այսօր, այստեղ այս հրաբալի փառատոնի արդյունքներն ենք ի մի բերում: «Մեկ ազգ, մեկ մշակույթ» կարգախոսն իր գործնական բնույթն է ստացել հայրենիքի մեջ»:

ՎԱՀԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ - ԴԱՇՆԱԿԱՀԱՐ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ

Ֆրանսիայում վերջին տարիներին փայլուն հաջողության է հասել 27-ամյա դաշնակահար եւ կոմպոզիտոր Վահան Մարտիրոսյանը:

Ծնվել է Երեւանում, երաժշտական սկզբնական կրթությունը ստացել Սոֆեն Հարությունյանի անվան երաժշտական դպրոցում՝ Արքունի Հարությունյանի դասարանում (դասնամուր), միաժամանակ սովորելով կոմպոզիցիայի, ջութի եւ հոբոյի դասարաններում: 1992-ից ուսումը շարունակել է Փարիզի Բարձրագույն կոնսերվատորիայում: Այժմ արդեն եւ ստեղծագործում է Փարիզում: Հանդես է եկել ախարհի տարբեր երկրներում ինչպես մենահամերգներով, այնպես էլ նվագակցելով այնքիսի հռչակավոր երաժիշտների, ինչպիսիք են Իվրի Գիտլիսը, Մստիսլավ Ռոստրոպովիչը, Անրի ոը Մարկեսը, Ֆլորան Հեոյը եւ այլք:

2001թ. թողարկել է երկու լազերային սկավառակ՝ Շուբերտի սոնատներն ու ֆանտազիաները եւ Էրիկ Թանգիի ստեղծագործությունները: Առաջինը ճանաչվել է տարվա լավագույն սկավառակ եւ արժանացել ոսկե մեդալի: Վահան Մարտիրոսյանը միջազգային մրցույթների դափնեկիր է: Նրա կատարողական արվեստին անդրադարձել են բազմաթիվ երաժշտական քննադատներ ռադիոյով, հեռուստատեսությամբ, մամուլի հրատարակումներով: Վկայակոչենք միայն «Մոնդի» արձագանքը. «Վահան Մարտիրոսյանը գտնվում է նույն գծի վրա Սվյատոսլավ Ռիխտերի, Ժորժ Բոլեյի, Կլարա Հասկիլի եւ Ռոբերտ Կասադեսուսի հետ: Նրանց միավորում է տաղանդը: Կատարման բարեխղճություն, ծիածանի գունավորում, արտիկուլյացիա, ուղղվածություն, եզակի զգացմունքայնություն: Ամենա հիշում ենք իրարից այնքան տարբեր երկու դաշնակահարների՝ Ռիխտերին ու Հեմֆֆիին: Վահան Մարտիրոսյանը «համատեղում է» նրանց՝ նվագելով Հեմֆֆիի երազկոտությամբ եւ Ռիխտերի հրաբագործությամբ»:

«Մոնդ», 30 նոյեմբեր, 2001թ.

Վերաբացվեց Մարմաշենի նորոգված եկեղեցին

Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի ձեռամբ օգոստոսի 3-ին օրհնվեց Շիրակի թեմի Մարմաշեն գյուղի վերանորոգված եկեղեցին:



Անհի ճարտարապետական դպրոցին պատկանող Մարմաշենի 11-րդ դ. վանական համալիրը, որ երեք տաճարների մի գեղեցիկ համադրություն է, մեծապես վնասվել էր հատկապես 1988-ի երկրաշարժից: 1991թ. իտալացի ճարտարապետներ Գայանե Կազնաֆին (մոր կողմից հայ) եւ Մարիա Միմոն ձեռնարկեցին վանքի վերանորոգման աշխատանքները: Հայ եւ իտալացի վարպետների համատեղ ջանքերով վերանորոգման աշխատանքներն ավարտվեցին Հայաստանում Իտալիայի դեսպանության հովանավորությամբ եւ Հայաստանի հուշարձանների պահպանության վարչության օժանդակությամբ:

«Հայ գրքի օր»

Հունիսի 23-ին Երեւանի Ազնավուրի հրապարակում եւ Աբովյան փողոցին հարակից հատվածում Տ. Մեսրոպ արք. Աբեղյանի նախաձեռնությամբ հայաստանյան իրականության մեջ առաջին անգամ կազմակերպվեց «Հայ գրքի օր» անվանված միջոցառումը: Հայաստանի հիմնական հրատարակչություններին հատկացված էր մեկական տաղավար, ուր ցուցադրվում ու վաճառվում էին նրանց վերջին տարիների հրատարակությունները: Այս ամենն ուղեկցվում էր բացօթյա համերգով, հարակից «Մոսկվա» կինոթատրոնի եւ «Երեւան» հյուրանոցի սրահներում կազմակերպված դասախոսություններով:

Միջոցառումը նվիրված էր երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսի հիշատակին, որը ոչ միայն գրող էր, այլեւ հայ գրքի պաշտամունքն ունեցող մարդ:

Թբիլիսահայերի թատրոն Երեւանում

Երեւանի «Մեսրոպ» թատրոնի սրահում հունիսի 1-ին, անդրանիկ ներկայացումը բեմադրեց թբիլիսահայերի «ՆԱԻՐԻ» թատերախումբը (Ա. Բայանդուրյան, «Աղջկա փեսացուները», բեմադրությունը՝ Ռոբերտ Հակոբյանի): Թատերախումբը ստեղծվել է 1990-ին Թբիլիսիում, այժմ գործում է Երեւանում: Թատրոնի ֆնօրենն է Ռոբերտ Խաչատրյանը, գեղարվեստական ղեկավարը՝ Ա. Բժիկյանը:

Ուրախալի է, որ թատերական ավանդույթներով հարուստ Թիֆլիսից Հայաստան տեղափոխված մեր հայրենակիցները պատվախնդրորեն պահպանում են իրենց թատրոնը:

■ Հունիսի 16-ից օգոստոսի 18-ը Սան Ֆրանցիսկոյի «Հրոմսթ» միջազգային ցուցասրահում կազմակերպվել է հայկական գորգերի ցուցահանդես՝ «Հանգրվաններ» խորագրով: Ցուցահանդեսին ներկայացվել է 114 հայկական գորգ:

Ցուցահանդեսի բացման առիթով հուլիսի 19-21-ը կազմակերպվել է նաեւ եռօրյա գիտաժողով՝ նվիրված ծիսական արձանագրություններով գորգերին: Գիտաժողովի ընթացքում ներկայացվել են հայկական գորգերի պատմական, ազգային առանձնահատկությունները, ինչպես նաեւ հայ գորգագործների հմտությունները:

«Ասպարեզ», 28. 06. 02

■ Իրանահայ բանաստեղծ Ազատ Մաթյանի թարգմանությամբ լույս է տեսել Նարեկացու «Մայրամ ողբերգություն» պարսկերեն երկհատորյակը՝ Թեհրանի թեմական խորհրդի «Եղիա Բաբուլյան» հիմնադրամի մեկենասությամբ: Գիրքը թարգմանչի 30-ամյա աշխատանքի արդյունք է:

«Մարմարա», 21. 06. 02

■ Ուրուգվայի պետական հանույթը (SODRE) այս տարվա մայիս-հունիս ամիսներին Մոնտեվիդեոյում Ալեխանդրո Գոդոյի ղեկավարությամբ ներկայացրել է Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետը, որի բեմադրությունն ուրուգվայական բեմում տարիներ առաջ իրականացրել էր Վիլեն Գալստյանը:

EL PAIS օրաթերթը նշել է, որ «գործը զուտ հայկական արժանիքների կողքին, հաղթահարելով ազգային սահմանները, կարողանում է փոխանցել համամարդկային արժեքներ»:

«Ջահակիր», 6. 06. 02

«ԾԻԼ ԲՈՒՍԱՑ»
ՆԵՐԴԱՇՆԱԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

1994 թ. Երեւանում ստեղծված «Ծիլ բուսաց» ներդաշնակ զարգացման ստուդիան, որը հիմնադրել ու ղեկավարում է երաժշտագետ եւ դաշնակահարուհի Արմենուհի Մարտիրոսյանը, զբաղվում է մինչեւ 14 տարեկան երեխաների գեղարվեստա-կերպարային դաստիարակությամբ:

Ինչպես բնորոշում է արվեստաբան Սարո Սարուխանյանը. «Դասավանդման այս մեթոդն ուղղված է արվեստի (երաժշտություն, կերպարվեստ, թատրոն, գրականություն) միջոցով, ստեղծագործությանը ներհատուկ հարմոնիայի մեծագույն ֆենոմենի ներգործության, ստեղծագործական ազատ պրոցեսի հոգեբանական խթանների համակարգման շնորհիվ երեխային ի սկզբանե բնորոշ հոգեւոր ներդաշնակության վերականգնմանը»:

Ա. Մարտիրոսյանի 35 -ամյա մանկավարժական գործունեությունը (Երեւանի եւ Լվովի պետ. կոնսերվատորիաներում, Երեւանի եւ Օմսկի երաժշտական ուսումնարաններում, Երեւանի կինոյի եւ թատերական արվեստի պետ. ինստիտուտում եւ այլն) ակնհայտ դարձրեց դաստիարակության այս մեթոդի կարեւորությունը երեխաների համար: Արվեստի ճշմարիտ եւ անկեղծ վերաբերումը երեխայի մեջ ծնում է ստեղծագործական մի վիճակ, երբ նա «հայտնաբերում» է իր սեփական տեխնիկան, որը երբեմն փոխարինում է մասնագիտական հմտություններին: Նման պարագայում ստեղծված աշխատանքները մասնագետներին զարմացնում են գեղանկարչություն, պլաստիկա, քանդակագործություն չուսանած երեխաների ստեղծագործությունների ներդաշնակության, կոմպոզիցիայի, ժեստի կատարելությամբ: Նույն հաջողությամբ միեւնույն երեխան նկարում է, քանդակում, խաղում թատրոնում եւ այլն:

Ա. Մարտիրոսյանի համոզմամբ՝ «Ամեն մի երեխա մի չբացահայտված հրաշք է, աստվածային երազանքներով ու ներշնչմամբ լի մի աշխարհ: Նա պորում է կենարար այն ազդակների սրտատրոփ սպասումով, որոնք կարթնացնեն նրա մեջ արարման նախաստեղծ ուժը: Բավական է ճշմարիտ սիրո անկեղծ մի խոսք, որ երեխայի նրբազգաց հոգին ընդառաջ գնա բարուն եւ գեղեցիկին:

Ինձ հաճախ են հարցնում, թե որն է իմ մեթոդի հիմնաքարը: Դա երեխայի անսահմանափակ հնարավորությունների բացահայտումն է, նրա ստեղծագործական մտքի եւ երեւակայության զարգացումը, նրա հոգու արթնացումն ու ձեւավորումը, ներդաշնակ, բարոյական անհատի դաստիարակումը՝ արվեստների հավաքական ուժի շնորհիվ:

Եվ ես հավատում եմ, որ դա կդառնա աշխարհում գործող չարի հակակշիռը»:



«Ծիլ բուսաց» ստուդիայի սաների աշխատանքները ներկայացվել են Հայաստանում եւ արտասահմանում, այդ թվում Գերմանիայում, ԱՄՆ-ում, Թեհրանում, Կիպրոսում, Հալեպում կազմակերպված ցուցահանդեսներում:

Հետաքրքրություն են առաջացնում թատերական ներկայացումները, որտեղ առաջատար դեր է խաղում երաժշտությունը եւ որն, ըստ մասնագետների, «նոր խոսք է մանկական թատերական արվեստում»:

Տարիների ընթացքում բացահայտվեց այս մեթոդի մի նոր հայեցակետը եւս. այն բարերար ազդեցություն է թողնում բարդույթներով տառապող «դժվար» երեխաների վրա:

Այսօր Ա. Մարտիրոսյանի շուրջ ստեղծվել է համախոհների մի խումբ՝ կազմված նրա նախկին եւ ներկայիս ուսանողներից, որոնք մեծ ոգեւորությամբ եւ սիրով զբաղվում են մատաղ սերնդի դաստիարակությամբ:

Վիգեն ՂԱԶԱՐՅԱՆ

Հայոց գորգաթատում

Գեղանկարիչ Սամվել Լաճիկյանի «Հայոց գորգաթատում» նկարաշարը եզակի է իր թեմայով եւ հայ մշակույթի ամենահատկանշական բնագավառներից մեկի՝ գորգարվեստի գեղանկարչական յուրահատուկ մեկնաբանությամբ:

Միջնադարի եւ Վերածննդի արվեստում գորգը սովորաբար ֆոն է ծառայել, եղել զարդաձեւերի շեմարան, իսկ նոր ժամանակներում՝ նաեւ գունաձեւային շեշտադրում թե՛ Հայաստանում, թե՛ Արեւելքում ու Արեւմուտքում: Մինչդեռ Սամվել Լաճիկյանի վրձնած կտավներում առաջին անգամ գեղարվեստական պրակտիկայում գորգը դարձել է ստեղծագործության գլխավոր գործող անձ. այն ծառայում է որպես հայոց ոգու դիմադրության եւ մաքառման անձնավորում մերթ ասպետի («Ասպետ»), մերթ մոր ու մանկան («Հուսո հրեշտակ» եւ «Տիրամայրը մանկան հետ»), մերթ շղթայվածի («Շղթայվածը»), մերթ էլ շղթայազերծող ու վեր խոյացող ոգու կերպավորումներով («Թռիչքի փորձ»):

Գեղարվեստական մեծ շնորհի արդյունք է գորգի անձնավորումը միայն գորգին հատուկ հատկանիշների միջոցով (տրոփող զգայուն խավ, ծալազարդման անվերջ հնարավորություններ): Առարկան իրենով արտահայտում է այսօրվա հայ մարդու հոգեկան ապրումները, նրա ներքին լույսն ու ոգեղեն հավաքը:

Խորաթես տպավորիչ է նաեւ կատարման գերազանց վարպետությունը: Գեղարվեստական նման էֆեկտն արտահայտվում է կենդանի, շնչող հայկական գորգի բազմաթիվ ծալազարդումների եւ անհոգի մեռաղալարի ու մեռաղյա շղթայի հակադրումով: Գորգը շնչավորված է ոչ միայն վիրտուոզ կատարման, այլեւ խավավոր հենքի (տեքստուրայի) արտահայտման շնորհիվ, որ անճանոթ է մինչ այժմ ինձ հայտնի գորգանկարներում:

Ներկայացվող նկարաշարը լավագույն վկայությունն է հայ նկարչի հզոր ներունակության եւ ինքնատիպ գեղարվեստական մտածողության:

1. «Թռիչքի փորձ»
1995, կտ./յուղ., 122x92 սմ

2. «Շղթայվածը»
1995, կտ./յուղ., 122x92 սմ

3. «Ասպետ»
1993, կտ./յուղ., 61x55 սմ

4. «Տիրամայրը մանկան հետ»
1994, կտ./յուղ., 150.5x80.2 սմ

Սամվել Լաճիկյանը ծնվել է 1953 թ. Լենինականում (այժմ՝ Գյումրի): Սովորել է Մերկուրովի անվան նկարչական դպրոցում, ապա հաջորդաբար ավարտել Երեւանի ճարտարագիտական համալսարանը եւ գեղարվեստաթատերական ինստիտուտի գեղանկարի բաժինը: Մասնակցել է հանրապետական, համամիութենական եւ միջազգային բազմաթիվ ցուցահանդեսների (Լեհաստան, Բուլղարիա, Շվեդիա, Ֆինլանդիա, Ճապոնիա, ԱՄՆ եւ այլն), ունեցել է անհատական ցուցահանդեսներ Երեւանում եւ արտերկրում: ԽՍՀՄ Նկարիչների միության անդամ է դարձել 1985 թ.: Այժմ Հայաստանի Նկարիչների միության անդամ է: 1991-1995 թթ. եղել է Նկարիչների միության Գյումրիի բաժանմունքի նախագահը: 1995թ-ին ժամանակավոր բնակության է մեկնել ԱՄՆ: Նախասիրած ժանրերն են դիմանկարը եւ բնանկարը: Մեծ վարպետությամբ արված ջրաներկ գործերի կողքին խորաթես տպավորում են վերջին շրջանում վրձնած յուղաներկ աշխատանքները, հատկապես գորգանկարները:

Սամվել Լաճիկյանը մի քանի որմնանկարների եւ տասնյակ գրքային նկարազարդումների հեղինակ է:

Samuel Lachikian
1521 E.Windsor RD, Apt.16, Glendale,
CA 91205, USA,
Tel:(818) 247-4424

ԱՐՎԵՍՏԸ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՄԱՐ

Նկարչության դասարանում:

Գեղարվեստի արվեստանոցը

Գլենդելում 1999-ին ստեղծել է նկարիչ Ռազմիկ Սամվելյանը:
Այստեղ ուսանում է շուրջ 40 հայ երեխա (6 տարեկանից սկսած):
Արվեստանոցում հիմնադիր տնօրենից բացի նկարչություն է դասավանդում նաեւ Սամվել Սամվելյանը, հայոց լեզու՝ Հասմիկ Հովհաննիսյանը:
Արվեստանոցի սաները չորս ցուցահանդես են կազմակերպել, որոնցից վերջինը բացվեց 2002-ի հուլիսին՝ Երեւանում, Խնկո-Ապոր անվ. մանկական գրադարանում, առայժմ նաեւ Արցախում:
Այն կազմակերպվել էր Լոս Անջելեսի Աբանյան կենտրոնի սաների ստեղծագործությունների ցուցահանդեսի հետ:
Արվեստանոցի համար նշանակալից են եղել նաեւ 2001 թ. 1700-ամյակին եւ 2002 թ. Եղեռնին (հայ ֆիդայիների դիմանկարներ) նվիրված ցուցահանդեսները:

«Մոնթե Մելքոնյան», 2002
Վարդան Ջանիկյան, 10 տ.

«Նիկոլ Դումանի խումբը», 2002
Գայիթ Շանթ, 12 տ.

«Արարատ», 2002
Պարտիզամանյան Վահան, 9 տ.

«1700-ամյա Քրիստոնյա Հայաստան - 2001» ցուցահանդես, Գլենդել, Կալիֆորնիա

«Կոմիտաս», 2002
Դիանա Մանուկյան, 10 տ.

Մեր թղթակցի հետ զրույցի ժամանակ Ռազմիկ Սամվելյանը նշեց, որ իր հիմնած դպրոցը հետեւում է հայ կերպարվեստի պրոֆեսիոնալ ուղղությանը՝ շարունակելով Փ. Թերլեմեզյանի անվ. գեղարվեստի ուսումնարանի ավանդույթները: Արվեստանոցի նպատակն է հայ երեխաներին կապել հայ մշակույթի հետ, նրանց դաստիարակել հայրենասիրական ոգով:

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒ

Հավաքածուն բաղկացած է Հայաստանի եւ տարածաշրջանի հնագույն շրջանից ավանդված, V-XX դարերի գրավոր վկայված պատմությունը, քաղաքական-տնտեսական, գիտության եւ մշակույթի անցուդարձերը ներկայացնող 17.000 միավորից, որոնցից շուրջ 14.000-ը հայերեն եւ 3.000-ը հունարեն, լատիներեն, պարսկերեն, արաբերեն, ասորերեն, եթովպերեն, եբրայերեն, վրացերեն, սլավոներեն եւ այլ լեզուներով ձեռագրեր են: Հավաքածուն տարբերակված է հիմնական, նորագույն, հատակագծերի եւ հմայիլների բաժինների: Բացառիկ պատմա-մշակութային արժեք ներկայացնող այս հավաքածուն՝ հայերեն ձեռագրերը, Հայաստանի պատմության հերոսական էջերի վկայագրերն են, հայ ժողովրդի ինքնության եւ հրիսոնեական մաքառման վարքագրերը, անցյալի ու ներկայի վավերագրերն ու աղոթքի հարատեւության հավատագրերը:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հիմնադրամին մասնակցելու համար պետք է անձամբ կամ ՄԲԲՀ-ի պաշտոնական ներկայացուցչի, մասնաճյուղի կամ լիազորված անձի միջոցով հիմնադրամի տնօրինությանը ներկայացնել մասնակցության հայտ:

ՄԲԲՀ հոգաբարձուների խորհրդի նախագահությունը տիտղոսներ է շնորհում այն անձանց եւ կազմակերպություններին, որոնք բացառիկ ծառայություններ են մատուցել Մատենադարանին կամ մասնակցել Մատենադարանի ծրագրերին՝ կատարելով (միանվագ կամ ընդհանուր) համապատասխան նյութական ներդրում:

Մեկենասի տիտղոս	Պատվո անդամի տիտղոս	Բարերար անդամի տիտղոս
300.000-500.000 $ USD	100.000-300.000 $ USD	10.000-100.000 $ USD
Բարեգործ տիտղոս	**Աջակից անդամի տիտղոս**	**Մասնակից անդամի տիտղոս**
1.000-10.000 $ USD	100-1.000 $ USD	10-100 $ USD

- Մեկենաս, Պատվո անդամ կամ Բարերար անդամի տիտղոս կրողները դառնում են ՄԲԲՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամ:
- Բարեգործ, Աջակից կամ Մասնակից անդամի տիտղոս կրողները դառնում են ՄԲԲՀ-ի ակումբի անդամ:

Վերը շարադրվածից դուրս այլ առաջարկները (կտակներ, պարբերական կամ այլ կարգի նվիրատվություններ) քննարկվում են ՄԲԲՀ տնօրինության հետ:

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՄԲԲՀ-ի նվիրատուներն անվճար սանում են՝
- Հիմնադրամի գործունեության մասին տեղեկագիր:

Ըստ ցանկության դառնում են՝
- Հիմնադրամի հրատարակած մատենաշարերից որեւէ մեկի բաժանորդ, հանդիսավոր միջոցառումների հրավիրյալ:

Մասնակցությունը լուսաբանվում է՝
- Լրատվական միջոցներով (հեռատեսությամբ եւ մամուլով),
- www.matenadaran.am պաշտոնական հանգույցի «Մատենադարանի բարեկամներ» ինտերնետային էջում,
- «Մատենադարան» տարեգրքում եւ տեղեկագրքում:

Հիմնադրամի մասնակիցներն իրավունք ունեն սանալու ցանկացած տեղեկատվություն հիմնադրամի գործունեության մասին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՄԲԲՀ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ

«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի հասցեն
Մաշտոցի - 53, Մատենադարան, Երեւան-09, Հայաստան
Հեռ/հեռապատճեն. (374-1) 520-420: e-mail: friends@matenadaran.am:
URL: http://www.matenadaran.am:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

Հայտի համարը _____

Անուն _____

Ազգանուն _____

Հասցե _____

Հեռ. _____

Ֆաքս _____

E-mail: _____

Մատենադարանի բարեկամներ բարեգործական հիմնադրամի ծրագրերին մասնակցելու նպատակով ես՝

_____,

կատարում եմ (գումարը/տարադրամը տառերով)

_____;

բարեգործական նվիրատվություն հետեւյալ ծրագրի/երի իրականացմանն օժանդակելու համար՝

1. Գիտահետազոտական ծրագրեր
2. Ցուցանմուշների վերականգնում
3. Կրթական ծրագրեր
4. Այցելուների սպասարկման մակարդակի բարելավում
5. Թանգարանի համար ցուցանմուշների ձեռքբերում
6. Ինտերնետային հանգույցի արդիականացում
7. Հեռահաղորդակցության արդիականացում
8. «Թվային Մատենադարան» ծրագիր
9. Հրատարակչական ծրագրեր
10. Կիսակառույց մասնաճեղքի շինարարություն
11. Այլ ծրագրեր

Նշեք Ձեր ընտրած ծրագրի տողը

_____, _____, 2002 թ.

ստորագրություն

ՀԱՅ ԱՐՎԵՍՏ

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Մայիսի 24-ին ՀՀ մշակույթի նախարարության 6-րդ հարկի սրահում տեղի ունեցավ «Հայ արվեստ» մշակութային հանդեսի անդրանիկ համարի շնորհանդեսը, որին մասնակցում էին ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, մշակույթի նախարար Ռոլանդ Շառոյանը, Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի հայաստանյան գրասենյակի տնօրեն Գրիգոր Թաթուլյանը, արվեստագետներ, նկարիչներ, արվեստասեր հասարակությունը: Այս կապակցությամբ բազմաթիվ արձագանքներ եղան մամուլում («Հայաստանի Հանրապետություն», «Ազգ», «Առավոտ», «Երկիր», «Օրրան», «Շողակն», «Գանձասար», «Արագածոտն», «Կեչառիս»):

Ներկայացնում ենք հատվածներ որոշ հրատարակումներից:

ՆԿԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կալմար, «Գեղուհիներ» շարքից, տպագրություն, տեմպերա, 35,5x26 սմ

Մոս Հարությունյան, «Տեսարան Խաչիկ գյուղից», տպագրություն, յուղ., 30x40 սմ

Էլիզաբեթ Ռոմիիլդ (Թայլանդ), «Շնչքանք», կտ., յուղ., 60x50 սմ

Հեղինակների կողմից՝ իրենց ստեղծագործությունների կատալոգները՝

Էլիզաբեթ Ռոմիիլդ (Դանիա)
(www.elizabethromhild.com)

Ռազմիկ Սամվելյ (ԱՄՆ), «Խորհրդավոր ընթրիք» շարքից, թուղթ, ջրաներկ 28x35 սմ

Զավեն Բարոնակյան (Սիրիա), «Հողիշոն», թուղթ, ջրաներկ, 41x41 սմ

Արմեն Դանիելյան, «Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալներ», թուղթ, գուաշ, 26x20.5 սմ

Աշոտ Խաչատրյան (Ռուսաստան)

«Լեւոն թագավորի ընտանիքը», ծանրանկար, կիսիկիա, 1272թ., թուղթ, ջրաներկ, 41x30 սմ, ընծայիչնակող՝ *Էդուարդ Ստեփանյան*

«Հոգիանմեծ ավետարանիչ», ծանրանկար, Կիլիկիա, 13-րդ դ., թուղթ, ջրաներկ, 29x22 սմ, ընծայիչնակող՝ *Սուսաննա Կիրակոսյան*

Վլադիմիր Աթանյան (ԱՄՆ)

Աթանյան կենտրոնի կողմից՝
«Նվիրումի պատկերներ»

Խմբագրությունում ստացվել են հետեւյալ գրքերը.

«Սարգիս Խաչենց» հրատարակչությունից՝ Ռ. Հովհաննիսյան, «Դերասանի արվեստի բնույթը», Երեւան, 2002:
Վ. Մաթեւոսյան, «Երեք կիսադեմ» (Սարյան, Կոջոյան, Արուչյան), Երեւան, 2002:
Ալբոմ. Շ. Խաչատրյան, «19-20-րդ դդ. հայ նկարիչներ», Նյու Յորք, 1993:

Ստացվել են նաեւ

«Երաժշտական Հայաստան» եւ «Հայացք Երեւանից» ամսագրերը:

Խմբագրությունը խորին շնորհակալություն է հայտնում նկարների, գրքերի նվիրատուներին, հանդեսի լիազոր ներկայացուցիչներին, աջակից-բաժանորդներին եւ բոլոր բաժանորդներին:

Երախտապարտ ենք նաեւ հանդեսի գովազդատուներին եւ նյութական աջակցություն ցուցաբերած անձանց, մասնավորապես Ռուզան եւ Նիկոլ Սալխանյաններին (Բեյրութ):

Հայաստանի Հանրապետություն

25.05.2002

ՄՇԱԿՈՒՅԹԸ ՄԻԱՎՈՐՈՂ ԱՌԱՆՑՔ

Տեղի ունեցավ Հայ քրիստոնեական մշակույթի «Մոմիկ» միության նախաձեռնությամբ հրատարակված «Հայ արվեստ» մշակութային հանդեսի անդրանիկ համարի շնորհանդեսը, որին մասնակցում էին ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, մշակույթի նախարար Ռոլանդ Շառոյանը, արվեստագետներ, նկարիչներ:

Բացման խոսքով հանդես եկան «Մոմիկ» միության փոխնախագահ «Հայ արվեստ»-ի խմբագիր Կարեն Մաթեւոսյանը, խմբագրական խորհրդի անդամ, Ազգային պատկերասրահի տնօրեն Շահեն Խաչատրյանը, որոնց հավաստմամբ «բացվեցին աշխարհում ճանաչման տանող հայ մշակույթի պատուհանները»:

«Հայ արվեստ»-ի նպատակն է Հայաստանում, սփյուռքում եւ Արցախում մասսայականացնել, առավել մոտիկից ծանոթացնել ազգային եւ համամարդկային արժեք ներկայացնող հայ մշակութային արժեքները:

«Հայ արվեստ»-ի հրատարակիչներն իրենց խորին շնորհակալությունը հայտնեցին բոլոր նրանց, ովքեր աջակցել են հանդեսի հրատարակմանը՝ ի դեմս Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի, «Ամարաս» տպարանի...

Ուշագրավ էր նաեւ այդ առիթով կազմակերպված ցուցահանդեսը: Ուրախալի է, որ ներկայացված աշխատանքները նվիրվել են հանդեսի ֆոնդին:

Հույս հայտնենք, որ Հայաստանի եւ սփյուռքի ազգային եւ մշակութային կազմակերպությունների, արվեստագետների ու արվեստասերների համագործակցությամբ «Հայ արվեստ»-ը կդառնա համահայկական մշակութային անհունում գործող, կայուն պարբերականությամբ հրատարակվող հանդես...

Անուշ ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆ

Ազգ

29.05.2002

Ի ՎԵՐՋՈ ԵՂԱՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆԴԵՍ

«Մոմիկ» մշակութային միությունը եւ «Յոթ արվեստ» ՍՊԸ-ն հրաբաշխ նվեր են մատուցել ընթերցողին: Հանդեսի լույսընծայումը շնորհավորել են ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, ՀՀ ԳԱ ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանը, ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարար Ռոլանդ Շառոյանը, Ֆրանսիայի ակադեմիայի անդամ Ժան Պիեռ Մահեն: Անչափ հետաքրքրական նյութեր է ներկայացնում հանդեսը: Զգացվում է, որ խմբագրակազմը, գլխավոր խմբագիր Կարեն Մաթեւոսյանի ղեկավարությամբ, լուրջ աշխատանք է կատարել: Տեսական հոդվածներ, լրատվություն, գիտական ուսումնասիրություն, կոչնակ... Բարձրաճաշակ ձեւավորում, հիանալի տպագրություն: Հայերենին չտիրապետող ընթերցողի համար էլ տրված է հանդեսի նյութերի ամփոփումն անգլերենով:

Հաճոյված եմ, որ այս որակով կարելի է համարձակորեն ներկայանալ նաեւ սփյուռքահայությանը:

Ս. ԳԱԼՈՅԱՆ

Օրան

25.05.2002

ՊԱՏՈՒՀԱՆ՝ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՄԱՐ

Ազգային պատկերասրահի տնօրեն Շահեն Խաչատրյանի կարծիքով՝ վերջերս աշխուժացել են հայ արվեստը արտերկրում ներկայացնելու միտումները: Կազմակերպվում են ցուցահանդեսներ, որոնցով օտարները հնարավորություն ունեն ճանաչելու մեզ: «Բացվում են այն պատուհանները, որտեղից հայ արվեստը կարող է գնալ եւ ճանաչվել աշխարհում: Կարեւոր է, որ այդ պատուհաններից դուրս գան միայն արժանավոր գործեր, որոնք կփայլեցնեն մեր ժողովրդի հոգեւոր ճակատը»:

«Հայ արվեստ» հանդեսի ուրախությունը կիսելու էր եկել նաեւ արվեստաբան, ժողովրդական արվեստի թանգարանի տնօրեն Սարո Սարուխանյանը. «Տարիների վակուումից հետո արվեստի շունչը նորից գալիս-կենտրոնանում է: Մշակույթը համակարգ է, որի արժեւորումը շատ կարեւոր է: Կարծում եմ՝ հանդեսի նպատակը հենց դա է»:

Կ. Հ.

Երկիր

21-27.06.2002

Այս օրերին ընթերցողի սեղանին դրվեց նաեւ «Հայ արվեստ» շքեղ ամսագիրը...

Մշակութային հանդեսի ցանկը բազմազան է՝ արվեստի ու գրականության ամենատարբեր բնագավառներին վերաբերող հոդվածներ, հրատարակումներ, լուրեր: Ընդ որում, ամսագիրը փորձ է անում նորովի ներկայացնել ոչ միայն հայ արվեստի բարձրարժեք ստեղծագործությունները, այլեւ ձեւակերպել այն չափանիշները, որոնք ուղենիշ են ծառայելու այսօրվա եւ վաղվա ստեղծագործողի համար:

Հ. ԵՐԱՆՅԱՆ

Առավոտ

25.05.2002

«ԱՐՎԵՍՏԻՑ» ՀԵՏՈ «ՀԱՅ ԱՐՎԵՍ»

«Հայ արվեստ» եռամսյայի նպատակը Սփյուռքի, Հայաստանի եւ Արցախի համախմբումն է՝ մշակույթի միջոցով: Ամսագրի նյութերը տպագրվում են ինչպես արեւմտահայերեն, այնպես էլ արեւելահայերեն: Այն ունի նաեւ անգլերեն ամփոփում: Հաճելաճանաչ է, որ «Հայ արվեստի» առաջին աջակիցները հայ արվեստագետներն էին՝ սեփական նկարների նվիրատվություններով, որոնք ցուցադրվեցին շնորհանդեսի ժամանակ:

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆԴԵՍ

Ազատամարտ

ՕԳՈՍՏՈՍ Բ 2002

Հայ ընթերցողի սեղանին է դրուած «Հայ Արուեստ» ամսագրի առաջին համարը:

Պատկերատր, գունազարդ, բարձրորակ տպագրութիւն, հայ մշակոյթի տարբեր բնագաւառներ ընդգրկող գեղեցիկ մի ծաղկեփունջ, որի ծաղիկները հաւաքուել են աշխարհացրիւ մեր սփիւռքից եւ փնջուել են հայրենիքում:

Շաաիկի առաջին էջի նկարը Մինաս Աւեսիսեանի «Յիշողութիւն» կտաւից մի հատուած է. կինը վառում է լամպի պատրոյգը, որ պատահական չէ եւ համընկնում է ամսագիրը հրատարակող «Մոմիկ» միութեան կարծես նշանաբանի հետ. «Աւելի լաւ է մէկ մոմ վառել, քան թէ անվերջ դժգոհիլ խաւարից»:

«Հայ Արուեստի» նպատակն է Հայաստանում, Արցախում եւ Սփիւռքում տարածել հայ արուեստն ու մշակոյթը: Նիւթերը տպագրում են արեւելահայերէնով՝ արդի ուղղագրութեամբ եւ արեւմտահայերէնով՝ դասական ուղղագրութեամբ: Որքան էլ համահայկական երկրորդ ժողովում ժամերով եւ օրերով փորձեն միջոցներ գտնել 2 լեզուների միացման մասին, աւելորդ է: Ահա մերձեցման գործնական յսակ մի ձեւ, որ երկուսեւ կարդալով լեզուները, ժամանակի ընթացքում կ'ունենան վարժութիւն, կ'ընտացուի բնական ընդհանրութիւն:

Սփիւռքի հետ կապն իրականացնում են ամսագրի լիազօր ներկայացուցիչները, որոնք ընդունում են թղթակցութիւններ, յօդուածներ, տարածում են համարները եւ բաժանորդագրում են ընթերցողներին: Ստեղծագործական, տեխնիկական համագործակցութեան կողքին անշուշտ կարեւոր է ֆինանսական, նիւթական աջակցութիւնը (նուիրատուութիւն, վճարովի գովազդի տրամադրում), որի միջոցով է, որ պիտի շարունակուի հրատարակուիլ պետական հովանաւորութիւն չունեցող այս ամսագիրը:

Այն ներկայ հայ արուեստի հանրագիտարանն է եւ ուղեցոյցը, երկրագնդով մէկ սփռուած մեր հայրենակից արուեստագէտների միմեանց գտնելու եւ իրար ծանօթանալու ժամադրավայրն է:

Կարինէ Տ. Գէորգեան
Հայէջ

ՎԱԼՄԱՐ

Նկարչի հետ զրուցում է երաժշտագետ Դանիել Երաժիշտը

- Ներկայիս բարդ ոչայմաններում «ինչո՞ւս եք ապրում» հարցին մի մտավորական պատասխանել էր. «Իսկ ո՞վ ասաց, թե մենք ապրում ենք...»:

Հարգելի Վալմար, դուք ի՞նչ կպատասխանեք:

- Իրականությունից չես փախչի: Ամեն մարդ իրավունք ունի ապրել, գործել այնպես, ինչպես ինքն է ուզում: Եթե չարը մերժում ես ու կարողանում ես հաղթահարել, ուրեմն զորեղ ես, իսկ եթե ժխտում ես, բայց չես կարողանում դիմակայել, հանգիստ չես ապրի, կիիվանդանաս: Այնպես որ, կյանքը ոիտի ընդունել ինչպես որ կա՝ հակասություններով հանդերձ:

Այնուամենայնիվ, յուրաքանչյուր օր Աստծո կողմից տրված պարգև է: Ես ապրում եմ կյանքի լուսավոր կողմերով, աշխատում եմ լավը տեսնել: Լավ մարդկանց գոյությունը՝ ուրախություն է, լուսաբացը ուրախություն է, թոռնիկիս տեսնելն ուրախություն է... Երբ աշխատանքը լեցուն է զգացմունքներով, դուք իրականում սիրում եք ձեր կյանքը:

- Որպես մարդ, քաղաքացի, որն է ձեր հավատամքը:

- Մարդը ոիտի հավատ ունենա, առավել եւս արվեստագետը: Հավատի կորստից է, որ հիմա հասել ենք անարդարության սահմանագծին: Եթե Քրիստոսի պատվիրանները գիտակցենք ու կարողանանք կատարել, կմաքրագործվենք: Մենք պարտավոր ենք լինել հանդուրժող, ներողամիտ:

Ամեն մի գործի շարժիչ ուժը սերն է: Երբ սիրում եք, դուք Աստծու սրտում եք:

Կարեւորը արվեստի ոգին է

- Ըստ Օսկար Ուայլդի, վեհ արվեստի զարգացման միակ աղբյուրը արվեստի մի տեսակի այլուժեների փոխառումն է մյուս արվեստից, այլ ոչ թե իրական աշխարհից, քանզի կյանքն ինքը գեղեցիկը քաղում է արվեստից:

-Գուցե այդպես է Անգլիայում...

- Պարզվում է, որ գլուխդեցիք հմուտ են նաեւ անգլիական հումորում՝ բայց դա՝ ի միջի այլոց: Խնդրեմ շարունակեք:

- Մեր Սեւակն էլ ասում էր, թե կյանքը այնպիսի ողբերգություններ է ներկայացնում, որ Շեքսպիրը կնախանձեր: Անկախ մեծերի այս տեսակետներից, որոնք ինքնին արժեքավոր են, միշտ չէ, որ երեւակայականը, այսպես կոչված «երկրորդ իրականությունից» փոխառված թեմաները կարող են բավարարվածություն բերել, «փոխարինել» կյանքին: Օրինակ, ինչպե՞ս ես, լենինականցիս, չանդրադառնայի երկրաշարժին: Եւ ծնվեցին «Արհավիրք» շարքի տասը նկարները: Ի դեմ, դրանցից մեկը՝ «Սոփիսակը», մեր ժողովրդի անունից նվիրվեց Արմանդ Համերին: Իսկ «Պայքար» եւ «Իրավիճակ» շարքերում արտացոլված են մեր ժողովրդի այսօրվա հոգսերն ու ապրումները, անորոշությունը, բայց եւ հավատը վաղվա նկատմամբ:

- Գնալով մարդը բնությունից հեռանում է, ինչպե՞ս են ձեր եւ բնության հարաբերությունները:

- Բնությունը, մարդկության պատմությունը, արվեստը անբաժանելի են: Բնությունը խորհրդավոր, անբացատրելի մի բան է տալիս արվեստագետին, մարդը ոչ միայն ներշնչվում է, այլեւ խաղաղվում, նորոգվում, խոկում բնության գրկում, հիշենք Բեթհովենի «Գովվերգակաը», Վիվալդիի «Տարվա եղանակները»...

- Հասանք երաժշտությանը, ուստի ոիտի հարցնեմ նրա դերի, ազդեցության մասին...

- Այսինքն, Օսկար Ուայլդի ասած «մյուս արվեստի» մասին է խոսքը: Գրաֆիկական աշխատանքներիս բովանդակության զգալի մասը քաղում եմ երաժշտությունից՝ «20-րդ դար, ոիթմ» շարքից կնշեի «Ռեքվիեմը», «Ջազը»: Հիշենք նաեւ «Շարական» անսամբլի համերգների ազդեցությամբ ստեղծված նկարները: Երբ աշխատում եմ, ներխուժում եմ մի այնպիսի աշխարհ, որտեղ ժամանակը վերածվում է երաժշտության: Երաժշտությունը գեղանկարչության քույրն է, առանց որի, առանց հարմոնիայի չեմ պատկերացնում կյանքը: Մարդու եւ բնության հարմոնիան երաժշտությունն է:

- Արվեստագետի զարգացումը, ստեղծագործական ժառանգությունն ուսումնասիրելիս, հաճախ բաժանում են փուլերի, օրինակ, Վան Գոգի «հուզանդական», պուանտիլիստական շրջանները, Ռենուարի «սադափե» շրջանը եւ այլն: Կարելի է ձեր արվեստը եւս բաժանել ինչպոր փուլերի:

- Սկզբնական շրջանում գերադասել եմ կաղույսը, որ ավելի երիտասարդական է թվում, հետո փոփոխություններ են տեղի ունեցել, ինչպես սկզբում միրգը կաղտականաչ է, հետո դառնում է ծիրանագույն: Այդպես է եղել Ռեմբրանդտի, Պիկասսոյի եւ մյուսների հետ: Դա գույնի հասունացումն է: Այդպես կաղույսը փոխվեց կանաչի: Կանաչ շրջանում շատ էի լինում գյուղերում: Հետո գերակշռեց կարմիրը, ի վերջո՝ դեղինը... Աշխատանքի միջոցով հնարավոր է դառնում բացահայտել կյանքի գաղտնիքների մեծ մասը:

- Դիմանկարներ ստեղծելիս ի՞նչ խնդիր եք ձեր առջեւ դնում:

- Դիմանկարներ պատկերում եմ հատկապես այն ժամանակ, երբ անձը, բնորդը ինձ հուզում է: Միայն արտաքինը չէ, որ պատկերում եմ, անդայման պետք է հոգեւոր կապ ունենամ: Նկարել եմ կնոջս, աղջկաս, մտերիմներիս: Նկարելիս փորձել եմ ճանաչել նրանց, բացահայտել, տեսնել այն, ինչը մարդն ինքն իր մեջ չի տեսնում...

- Ուրախալի է, որ անհավատության տարիներից հետո արթնանում է մարդկանց ոգեկանությունը, հոգեւորը հուզում է արվեստագետներին, սակայն որոշ պատեհապաշտների համար դա լոկ թեմա է, մոդա, եւ Աստծո անունը «պարապ տեղը» շատ են տալիս: Ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքը:

- Դեռ 80-ական թվականներն էին, որ հափշտակվել էի հոգեւոր գաղափարներով եւ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի պատվերով մի քանի աշխատանքներ արեցի: Միջնադարից մինչեւ հիմա չմարող թեմաներ են Քրիստոսի Ծնունդը, Հրեշտակի հայտնությունը, Պատարագը... Այդ շարքի գործերից մի քանիսը գտնվում են Երուսաղեմի հայկական եկեղեցում, Գյումրիում..

- Իսահակյանը Արարատի մասին գրել է. «Մահախուճապ սերունդների աչքն է դիտել լույս գագաթին ու անցել...»: Սակայն մահն անզոր է արվեստի առջեւ, դրա վկայությունն են Բաշինջաղյանի, Սարյանի հավերժացրած «Արարատները»: Հիշենք նաեւ երկրաշարժից հետո նկարած ձեր «Արարատը», որի սպերն ասես եկեղեցու գմբեթ է:

Ի՞նչ է Մասիսը ձեզ համար:

- Ինձ շատ է ոգեւորում Արարատը: Այդ ասվածային, բիբլիական լեռն ունի անբացատրելի, կախարդական ինչ-որ բան: Երբ վերադառնում եմ Հայաստան, աչքս առաջինը նրան է առնում, ու փորձում եմ կռահել նրա տրամադրությունը: Կարծես թե նա գիտե ամեն ինչ, տեսնում է մեր ժողովրդի վիճակը եւ չի կարողանում արտահայտվել...

«Իրավիճակ», 2001թ.

- Կարո՞ղ է արդյոք գլոբալացումը վնասել ազգային արժեքները:

- Մենք չենք կարող չսիրել, չընդունել Նարեկացուն, Թորոս Ռուսինին եւ անկախ նրանցից ստեղծել մեր արվեստը, այն պետք է լինի անցյալի օրգանական շարունակությունը: Մենք չենք կարող մտածել ամերիկացու, ֆրանսիացու պես: Այն, ինչը շատ է կաղված հողի եւ ազգի հետ, դառնում է համամարդկային: Իսկական արվեստը դուրս է ժամանակի, տարածության եւ ազգային սահմանափակումներից: Կարեւորը ոգին է, արվեստի ոգին:

- Ո՞րն է ձեր արվեստի հիմնական առաքելությունը:

- Ինձ շրջապատող աշխարհի վերարտադրությունը ներքին աշխարհի կողմից: Ամեն մարդ պետք է յուրովի մտածի: Իր սեփական ուղու վրա նա զգնում է ճշմարտությունը կամ գոնե մոտիկ մի բան, որն օգնում է նրան ողջ կյանքի ընթացքում: Մարդ արարածն իր էությամբ այնքան թաքուն խորքեր, ներքին հարստություն ունի, որ ինչքան էլ իրեն մոտենա, ողջ գիտակցական կյանքը չի հերիքի լիովին բացահայտվելու համար:

Եթե իմ ստեղծածով կարողանամ մի փոքր բան ավելացնել մարդկանց հոգու գեղեցկությանը, մեր ազգային մշակույթին, կհամարեմ, որ իզուր չեմ ապրել...

Հովսեփ (Յուսուֆ) Քարշ

Նրա լուսանկարչական սարքերի դիմաց կանգնել են այնպիսի նշանավոր անձինք, ինչպիսիք են Քենեդին, Կասրոն, Էյնշտեյնը, Չերչիլը, Մանդելան, Հեմինգուեյը, Շվեյցերը, Խրուշչովը եւ շատ ուրիշներ:

Ըստ «Ossավա սիթի» թերթի, «լուսանկարչության մեջ Քարշի սեփական ու սպիտակի տեխնիկայի վերահսկումը անզուգական է: Լույսի զգացողությունը հիշեցնում է Ռեմբրանդտին... Նա նշանավոր մարդասեր էր ու մեղմաբարո»: Քարշը ծնվել է Թուրքիայում, գրում է թերթը: Նրա ծնողները հայ քրիստոնյաներ էին: Թուրքական իշխանությունները կոտորել են նրա հարազատներին եւ վերացրել Քարշի տոհմը: Երկու հորեղբայրները բանտարկվում են եւ սպանվում: Ընտանիքի փրկված անդամները ճողոպրում են Սիրիայի Հալեպ քաղաք:

«Տորոնտո սթարը» գրում է, որ իր 350 հազար նեգատիվները Քարշը նվիրել կամ վաճառել է Ossավայի ազգային արխիվներին: Լուսանկարչության մեջ նա նորարար էր: Կանադայի վարչապետ Ժան Կրետիենը, ինչպես բոլոր վարչապետները, լուսանկարվել են Քարշի մոտ: Վարչապետը լուսանկարչին բնութագրել է որպես ամենակատարյալ եւ արդարեւ ամենանորարար արվեստագետներից մեկի:

«Դելի տելեգրաֆը» (Լոնդոն) պատմում է, թե ինչպես է Քարշը 1941 թվականին լուսանկարել Չերչիլին: Իսկ բրիտանական մեկ այլ թերթ՝ «Թայմսը», գրում է. «Եթե ոչ ամենուրեք, ապա առնվազն Բրիտանիայում Յուսուֆ Քարշը կիիշվի Ուինստոն Չերչիլի բուլդոգակերտ եւ խոժոռադեմ լուսանկարով»:

«Նյու Յորք թայմս» թերթում տպագրված հոդվածում մասնավորապես նշված է, որ հանրահռչակ լուսանկարիչն աշխատում էր 8-10 լուսանկարչական սարքերով եւ գործածում արհեստական լույսեր: Արտասահման կատարած ուղեւորությունների ժամանակ նա իր հետ տանում էր տուրջ 200 կիլոգրամ սարքավորումներ... Արվեստի պատմության մասնագետ Պոլակն իր «Լուսանկարչական պատմություն» մենագրությունում գրել է, թե նա դարձավ հզոր դիմանկարիչ, մարդկային դեմքը վերածելով լեգենդի:

«Սարգիս Խաչենց» հրատարակչությունը լույս է ընծայել արվեստաբան **Վիլհելմ Մաթեւոսյանի** (1931-2001) հետմահու առաջին գիրքը՝ **«Երեք կիսադեմ»**, որը նվիրված է Մարտիրոս Սարյանին, Հակոբ Կոջոյանին եւ Միքայել Արուեչյանին: Գրքի ընդարձակ առաջաբանում Յուրի Խաչատրյանն անդրադառնում է հեղինակին, որը մեր ժամանակի հայ արվեստաբանության մեջ բացառիկ անհատականություն էր, ներկայացնում նրա որդեգրած սկզբունքները, վաստակը:

Վիլհելմ Մաթեւոսյանի՝ մեծ մարդու ու գիտնականի արվեստաբանական մեծարժեք ժառանգությանն ավելի հանգամանորեն կանդրադառնանք մեր հանդեսի առաջիկա համարում:

ՎԱԼՄԱՐ (Վլադիմիր Մարգարյան) ծնվել է 1948-ին, Լենինականում: 1967-1972 թթ. սովորել է Երեւանի Գեղարվեստաթատերական ինստիտուտում, որից հետո աշակերտել է Երվանդ Քոչարին: 1976-ին ընդունվել է ԽՍՀՄ Նկարիչների միության, 1994-ին՝ Միջազգային նկարիչների միության շարքերը: Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Երեւանում, Մոսկվայում, Լաուզիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Շվեյցարիայում, Լոնդոնում, Դուբայում...

Վալմարի աշխատանքները պահվում են Հայաստանի Ազգային պատկերասրահի էջմիածնի, Գյումրիի, Ջերմուկի մասնաճյուղերում, Երեւանի ժամանակակից արվեստի թանգարանում, Մոսկվայի Տրեյակովյան պատկերասրահում, Ա. Մանուկյանի թանգարանում (Դեթրոյթ), տարբեր երկրների մասնավոր հավաքածուներում:

«Վալմարի ամենափոքր կտավն անգամ հսկայական մոնումենտալ տպավորություն է թողնում: Արվեստագետն իր ստեղծագործությունների արտացոլումն է, միշտ ուժեղ եւ դինամիկ: Ես Վալմարին ցանկանում եմ այն հաջողությունները, որոնց նա արժանի է»:

Ժանսեմ
Փարիզ, 1999 թ.

«Վալմարի՝ նկարներին փոխանցած խորին զգացմունքայնությունն առիթ կնող է, միջնադարյան նկարչության ոճով, որի մեջ կա թե տառապանք, թե միաժամանակ հույս: Որքան մանրակրկիտ աշխատանք կա նրա գործերում: Նրա կոմպոզիցիաներն ու գունային լուծումները բացառիկ են: Վալմարը ջերմությամբ եւ կարեկցանքով լեցուն արվեստագետ է:

Ալբերտո Բռաուսնշեյն
Նյու Յորքի KW պատկերասրահի տնօրեն, 2001 թ.

«Վալմարի նկարչությունը մի առանձնահատկություն ունի. առաջին հայացքից այն թվում է չափազանց խիստ, բայց հետո նկատում ես, որ իրականում դա մի խտացում է, որ լույս է ճառագում: Մանրամասնորեն մտածված ու մշակված նրա յուրաքանչյուր պատկերի մեջ կարծես մի խորհրդավոր հզորություն է բմակվում, ուր նկատվում են հեղինակի հայացքի սրությունն ու վրձնի կատարելությունը»:

Ժոսլին Ջաբլա
Գրենդորժ պատկերասրահի տնօրեն
Մարսել, 2002 թ.

Valmar
13 Kochar, studio 69, Yerevan 375012, Armenia
Tel. 27-05-22, 26-07-68: E-mail: valmar@freenet.am

Հայոց աշխարհում ամենուր՝ եք հիմնադրվել են սրբավայրեր Սուրբ Սարգսի անվամբ: Այսօր գրականությունից հայտնի 200-ից ավելի նույնանուն եկեղեցիներից հնագույնը Ուշիի Ս. Սարգիսն է, որը կառուցվել է V դ. առաջին քառորդում, հեթանոսական սրբավայրի տեղում: Եկեղեցու պեղումների ընթացքում բեմի հատակին, ոչ խորը փոսորակի մեջ հայտնաբերվել են մարդու ոսկորներ: Թերեւս դրանք սրբազան նշխարներ են, որ կարող են կապվել Ս. Սարգսի անվան հետ:

Պեղումներ Ուշիի Ս. Սարգիս վանքի տարածքում

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԱՆՎԱՄԲ ՀՆԱԳՈՒՅՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արամ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ
Ֆրինա ԲԱԲԱՅԱՆ

1999-2001 թվականին ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի արշավախումբը պեղումներ է կատարել Ուշիի Ս. Սարգիս վանական համալիրի տարածքում: Պեղման աշխատանքների հովանավորն է ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Շահե արք. Աճեմյանը:

Միջնադարյան Հայաստանի նշանավոր հոգեւոր եւ մշակութային կենտրոն Ուշիի վանքը գտնվում է Արագածոտնի մարզի համանուն գյուղի արեւմտյան կողմում, մոտ 300 մ հեռավորության վրա: Համալիրը կառուցվել է ուշ բրոնզ-վաղ երկաթի ժամանակաշրջանի հսկայաչափ ամրոց-բնակավայրի հարավային եզրին, թեք լանջի վրա:

Վանքի շինությունները կառուցվել են տարբեր ժամանակներում (5-18-րդ դդ.), իսկ 1827 թ. երկրաշարժի հետեւանքով հիմնովին կործանվել են եւ ծածկվել 3-5 մ բարձրության փլատակների, հողի սվար շերտով: Մասամբ պահպանվել են Ս. Սարգիս մատուռը, գավիթի հարավային ճակատը, պարսպի պատերի հատվածներ:

Պեղումների ընթացքում ամբողջովին բացվել է Ս. Սարգիս եկեղեցի վկայարանը, կաթողիկե եկեղեցին, գավիթը, զանգակատունը, հյուրատունը, վանական խցերը, տնտեսական եւ արտադրական շինություններ, հինգ աշտարակներ ունեցող քարակերտ պարիսպը, եւ դրանից դուրս՝ օժանդակ բնակելի կառույցներ: Ս. Սարգիս եկեղեցին երկթեք տանիքով միանավ սրահ է՝ կառուցվել է 5-րդ դարում, մ.թ.ա. երրորդ-առաջին հազարամյակով թվագրվող շինությունների ավերակներից վերցված բազալտե քարերով: Հետագա դարերում այն վերակառուցվել է սրբատաշ տուֆով: Եկեղեցին կապվում է Մեսրոպ Մաշտոցի կողմից՝ Ս. Սարգսի նշխարները Հայաստան տեղափոխելու հայտնի փաստի հետ:

Ս. Սարգիս եկեղեցուն կից բացվել է 13-րդ դ. սկզբներին Վաչուտյան իշխանական տան ներկայացուցիչների կառուցած կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցին՝ բեմով եւ երկու ավանդատներով: Շինությունն ունի ուղղանկյուն-խաչաձեւ հատակագիծ, հայտնաբերվել են բազմանիստ գմբեթի շքամուտքերի քանդակազարդ քարերը եւ այլ մանրամասներ:

Պեղումներով բացվել է գավիթը, որը հզոր որմնասյուներով եւ չորս խաչվող կամարներով քառակուսի մեծ սրահ է: Ըստ բարավորի արձանագրության՝ կառուցվել է 1264 թվականին:

Պեղումներով բացված վանքի մյուս շինությունները թվագրվում են 17-րդ դարով եւ կապվում են հիմնականում Ոսկան Երեւանցու շինարարական գործունեության հետ (1654-1662թթ.):

Պեղավայրից հայտնաբերվել են հնագիտական բազմաստեսակ նյութեր. կավե անոթների ամբողջական եւ թերի բեկորներ, հախճապակի, ապակի, մետաղյա իրեր, դրամներ, քարե աշխատանքային գործիքներ:

Ուշիի վանքի որմերին պահպանված եւ պեղումների ժամանակ գտնված արձանագրությունները փաստագրական կարեւոր նյութ են տալիս վանքի պատմության, Վաչուտյանների իշխանական տան վերաբերյալ, ինչպես նաեւ Արագածոտնի 13-18-րդ դդ. հասարակական, տնտեսական, սոցիալական, քաղաքական կյանքի եւ այլ խնդիրների վերաբերյալ:

Ուշիի վանքի պեղումները վերջին շրջանում հայկական վանական համալիրներում իրականացված ամենածավալուն ձեռնարկն են:

ՎԱՐԴԵՆԻԿԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԳՐԵՐԸ

Գագիկ ՍԱՐԳՍՅԱՆ
Հուսիկ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Վարդենիկը ինչպես Գեղարքունիքի մարգի, այնպես էլ հանրապետության խոշորագույն գյուղերից է, որը հարուստ է տարբեր դարաշրջանների հուշարձաններով: Գյուղի տարածքում յոթ գերեզմանոցի առկայությունը վկայում է, որ միջնադարում եւս այն հոծ բնակչություն է ունեցել:

Գրավոր աղբյուրներում գյուղի վաղագույն հիշատակությունը Ներքին Վարդենիք անվամբ պահպանվել է 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի մոտ: Գյուղը եղել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի Գեղարքունիք գավառի մեջ եւ սկզբնապես պատկանել Սյունաց նախարարական տանը: 13-րդ դարում գավառը Օրբելյան իշխանների տիրույթներում էր: Ուշ միջնադարում գավառի մեծ մասի տերն էին Աղբուղայան կամ Պողիկյան մելիքները:

Վարդենիկ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին ներկայիս ճարտարապետական հորինվածքով 17-րդ դարից Հայաստանում լայն տարածում գտած եռանավ սրահ է (21.20x12.20 մ): Կառույցի փայտածածկ տանիքը կրել են երեքական երկբարք սյուները: Արեւելյան հատվածում Ավագ խորանն է՝ մոտ մեկ մետր բարձրությամբ բեմով, որի ճակատը շարված է խաչքարերով: Խորանի երկու կողմերում ավանդատներն են: Դրանք խորքում ունեն գաղտնարաններ: Եկեղեցու մուտքը հարավային կողմից է:

Եկեղեցին շրջապատված է 16-18 դդ. գերեզմանոցով:

2001թ. գարնանը Վարդենիկի գյուղապետարանը բնակիչներից մեկի մեկենասության ակնկալիքով ցանկություն է հայտնել վերականգնել Ս. Աստվածածին եկեղեցին, նրա վրա կառուցել նորը, իսկ հինը դարձնել քարեղարան-թանգարան (ներկայումս հիշյալ եկեղեցին կառուցվում է եւ մոտ ապագայում կզարդարի գյուղի կենտրոնը):

Այս նրագրի իրականացման առաջին փուլում եկեղեցու ներսում կատարվեցին պեղումներ, որոնք նպաստակ ունեին վեր հանել շինության նախնական ճարտարապետական հորինվածքը, հնագիտական, վիմագրական գտածոների միջոցով որոշել հուշարձանի պատմության, շինարարության ժամանակագրությունը:

Աշխատանքներն իրականացվեցին 2001 թ. հուլիսին: Եկեղեցու հատակից հեռացվեց 0.5-1մ բարձրությամբ հողաբերտը, բացվեցին վեց փայտյա սյուների խարիսխները, որոնք աչքի են ընկնում յուրօրինակ քանդակագործական մշակմամբ ու հարդարանքով:

Հատակի մի մասը ծածկված է տապանաքարերով: Դրանք հիմնականում հարթ, ուղղանկյուն սալեր են, մի քանիսն ունեն մարդկային գրաֆիկական պատկերներ:

Պեղման աշխատանքների գլխավոր արդյունքը համարում ենք տապանաքարերին եւ խարիսխներին փորագրված վիմագրերը: Հուշարձանի պատմության հավատի լուսաբանման համար կարեւորագույն նշանակություն ունի խուրտեր քահանայի տապանագիրը.

ԹՎԻՆ/ ՉԴ (1321) ՇԻՆԵՑԻ / ՁԵԿԵՂԵ/ՑԻՍ/ ԱՅՍ Է ՀԱՆԳ / ԻՍՏ ԽՈՒՐՏԵՐ / ՔԱՀԱՆԱՅԻ, ՈՎ ԿԱՐ/ԴԱՅՔ Յ/ԱՂԱՒԹ/Ս ՅԻՇԵՑ/ԵՔ

Տապանագիրն ուշագրավ է հանգույալի կողմից եկեղեցու կառուցման փաստի արձանագրմամբ: Կարծում ենք, որ թվականը վերաբերում է ոչ թե քահանայի մահվանը, այլ շինարարությանը:

Գյուղի արեւմտյան գերեզմանատանը թաղված են խուրտեր քահանայի երեք որդիները՝ Մամիկոն սարկավագը, Մռիհոնը, Սայինը, որոնք, ըստ տապանագրերի, զոհվել են 1322 թ. երկրաշարժից: Այստեղ նշված է նաեւ գյուղում զոհվածների ընդհանուր թիվը՝ 11: Ի դեպ, այս երկրաշարժը մատենագրական աղբյուրներում վկայված չէ:

Խուրտեր քահանայի տապանաքարի հարեւանությամբ բացվեց Սեդրակ քահանայինը.

ԹՎԻՆ Չ:Ղ:Բ: (1323) / ԱՅՍ Է ՀԱՆԿԻՍՏ/ ՍԵԴՐԱԿ/ ՔԱՀԱՆԱ/ՅԻ, ՅԻՇԵՑ/ԵՔ ԱՂԱՉ/ԵՄՔ

Կարծում ենք, որ ինչպես վերը հիշված հանգույալները, այնպես էլ նրանց կողքին թաղված Ստեփանոսը, վանքի առաջնորդներն են եղել:

ԹՎԻՆ Զ (1451) ՀԱՆԳԻՍ/Տ ԸՍՏ/ԵՓԱՆ/ՈՍ ՔԱՀԱՆԱՅԻ ԱՂՈ/ԹՍ ՅԻՇԵՑ/ԷՔ

Եկեղեցու վերաշինության ժամանակը ճշգրտելու համար կարեւորվում են երկու խարիսխների վրա փորագրված հիշատակագրերը:

Հյուսիսարեւելյան խարսխի նիստին.

ԹՎԻՆ ՌՃԾԲ (1703)

Հարավային խարսխաշարի կենտրոնական նիստին՝

ՏՐ ՆԵՐՍԷՍ... ՇԻՆԻԼ ԴԻՎԻ

Մյուս նիստին՝

ԵՍ ՏՐ ԲԱՐՍՈՒՄ

Կարծում ենք, այս վիմագրերը շինարարական բնույթ ունեն:

Ուշագրավ է, որ Ս. Աստվածածնի պատի միջից հայտնաբերվել է նաեւ Արտաշիսյան ժամանակաշրջանի սահմանաքար:

Հուշարձանի ճարտարապետական վերլուծությունը եւ վիմագրական գտածոները թույլ են տալիս կատարել հետեւյալ եզրահանգումները.

1310-ական թվականներին վանահայր Խուրտեր քահանան կառուցել է եկեղեցի եւ գավիթ, որոնք պահպանվել են առնվազն մինչեւ 15-րդ դարի վերջերը: Դրանք ավերվել կամ քանդվել են մինչեւ 17-րդ դարի վերջը:

1703-04 թթ. վանահայր Ներսես քահանան եւ տեր Բարսումը նախորդ շինությունների տեղում կառուցել են նոր եռանավ եկեղեցի (Ավագ խորանով ու ավանդատներով), որոնք շինաքար օգտագործելով նաեւ շրջակա գերեզմանատան 15-17-րդ դդ. խաչքարերն ու տապանաքարերը: 19-րդ դարի 20-ական թվականներին եկեղեցին վերանորոգվել է նորեկ գաղթականների ձեռքով: Ներկայիս եկեղեցու մեջ թաղումների առկայությունը վկայում է, որ ժամանակին դրանք եղել են խուրտեր քահանայի կառուցած գավթի մեջ:

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄ՝ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

Հեթում Ա-ի նույն թողարկման դրամ Հայաստանի պատմության թանգարանից:

Էդգա ՎԱՐԴԱՆՅԱՆ

Չինական «Սինցզյան քիանբի» («Սինցզյանի դրամագիտություն») դրամագիտական հանդեսի 1998 թվականի 3-րդ համարում լույս է տեսել Գոքսինգ Թանգի «Մուլեյում գտնված «ՄԻ» նշանով մոգական պղնձե դրամ» հոդվածը[1], որի նյութը կազմող դրամը (կշիռը՝ 6,3 գ, տրամագիծը՝ 29 մմ) գտնվել է Մուլեյ կանտոնի Տոնչանշյան վայրում, իր դաշտում աշխատող մի գյուղացու կողմից:

Դրամի Ա կողմում պատկերված է առյուծազարդ գահին նստած թագավորը, որն աջ ձեռքին ունի ֆրանսիական շուշանով («fleur de lis») ավարտվող գավազան, ձախում՝ խաչազարդ գունդ: Պատկերը շրջանակում է **«ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈ(Ց)»** գրությունը: Դրամի Բ կողմում չորս փոքր ճառագայթներ ունեցող խաչն է եւ **«ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ»** գրությունը:

Գ. Թանգը դրամը մանրազնին չհետազոտելով եւ անտեսելով դրա վրա եղած գրությունները, ճառագայթավոր խաչի պատկերում տեսել է չինական «ՄԻ» («բրնձի հաշիկ») նշանը, իսկ գահին նստած թագավորին նմանեցրել է ջունգար ձիավորի[2]:

Չին գիտնականը, այս դրամը Տյան Շանի լեռների հյուսիսի ժողովուրդներին վերագրելիս, հիմնվել է նրա հայտնաբերման վայրի եւ դրամի Ա կողմում պատկերված անձնավորության հագուստի վրա, որը հեղինակը մեկնաբանել է որպես այդ տարածաշրջանի ազգային փոքրամասնություններին բնորոշ տարազ:

Թյուրիմացությունը կնաեել է Ֆրանսուա Թիերին՝ Ֆրանսիայի Ազգային գրադարանի չինական դրամների ֆոնդապահը: Ճշտելով, որ խոսքն իրականում կիլիկյան Հեթում Ա թագավորի (1226-1269) պղնձե դանգի[3] հայտնի տիպի մասին է, Ֆրանսիացի դրամագետն այն հրատարակել է Ֆրանսիական դրամագիտական ընկերության տեղեկատուի էջերում՝ տալով դրամագլուխի վերաբերյալ պատմական համառոտ մեկնաբանություն[4]:

Մոնղոլ խաների պատմական մայրաքաղաք Կարակորումից մոտ 1000 կմ հարավ-արեւմուտք 13-րդ դարի հայկական դրամի հայտնաբերումն, ըստ երեւույթին, կապվում է մոնղոլների հանդեպ Հեթում Ա-ի քաղաքական դիրքորոշման եւ դրան առնչվող իրադարձությունների հետ:

Քրիստոնյա Արեւելքի վրա 13-րդ դարի կեսերին ծանրացել էր մոնղոլ-թաթարների ներխուժման վտանգը, որոնք գրավել էին ողջ Ասիան եւ սպառնում էին Եվրոպային: Միեւնույն ժամանակ, բարյացակամորեն տրամադրված լինելով Արեւելքի քրիստոնյաների հանդեպ, մոնղոլները վերջիններիս մեջ հակամահմեդական ակնկալիքներ էին արթնացրել: Այս հանգամանքը նկատի ունենալով եւ իր թագավորությունը հնարավոր ավերածությունից փրկելու համար, Հեթումը դիվանագիտական համարձակ քայլի է դիմում, որոշելով բարեկամական հարաբերություններ հաստատել մոնղոլների հետ: 1247 թվականին Հեթումն իր եղբորը՝ Սմբատ սպարապետին, որպես դեսպան ուղարկում է Մոնղոլիայի մայրաքաղաք Կարակորում, ուր նրան ընդունում է Գույուք մեծ խանը եւ հայտնում Կիլիկիայի հայկական թագավորությունը հովանավորելու իր պատրաստակամությունը:

Սմբատը պայմանավորվում է Հեթում Ա-ի այցելության եւ դաշնագիր ստորագրելու մասին: 1254-ին Հեթումն անձամբ մեկնում է Կարակորում՝ իր հոյակապությունը հավաստելու, որի բուն նպատակը մոնղոլների Կիլիկիա ներխուժման սպառնալիքը կանխելն էր:

13-րդ դարի հայ պատմիչները նկարագրում են այդ ճանապարհորդությունը: Հեթումը, վախենալով ճանաչվելուց, քանի որ թշնամի էր սելջուկ սուլթան Ալադինին, 1254-ի գարնանը գաղտնի անցնում է Անատոլիայով, ապա՝ Հայաստանով: Կարսում հանդիպում է թաթարական զորապետ Բաչու Նուփնին, այնուհետեւ կանգ է առնում Արագածոտնի Վարդենիս գյուղում, սպասելով Եթախմբին, որն իր հետ պետք է բերեր Կարակորում տարվելիք ընծաները: Այստեղից, հայ իշխաններից եւ հոգեւորականներից կազմված իր Եթախմբի հետ, Ոսկե Հորդայի վրայով, «ընդ երկարաձիգ ճանապարհն», չորս ամսում հասնում է Կարակորում:

Սեպտեմբերի 13-ին Հեթումը հանդիպում է Գույուքին հաջորդած մեծ խան Մանգուին, որի հետ եւ կնքում է հայ-մոնղոլական դաշինքը: Մեծ խանի արքունիքում նա մնում է 50 օր՝ սանձնելով Իկոնիայի եւ Եգիպտոսի սուլթանությունների դեմ մոնղոլական զորքերին զինակցելու պարտավորությունը, իսկ դրա փոխարեն Մանգուից ստանում է Կիլիկիայի թագավորության սահմանների անխախտելիության, ինչպես նաեւ հարկերը չափավորելու խոստում: Կիլիկյան Հայաստանը պարտավորվում է աջակցել մոնղոլներին Յուսիսային Միջագետքը, Ասորիքը եւ Պաղեստինը գրավելու գործում:

Հեթումի վերադարձը տեւեց ութ ամիս: Այս անգամ նա անցավ Կասպից ծովի հարավով, նորից կանգ առավ Հայաստանում եւ վերադարձավ Սիս 1255 թվականի վերջին: Ճանապարհին Կիլիկիայի արքան հանդիպեց պարսկական իշխանության ատաբեկ տիրակալ Հուլաղուին: Իր քրիստոնյա կնոջ հետ Հուլաղուն հայատես քաղաքականություն էր վարում, որը որդեգրեցին նրա ժառանգները՝ գրեթե կեսդարյա հարաբերական խաղաղություն ապահովելով Կիլիկյան թագավորության համար:

Հայ-մոնղոլական դաշինքը Հեթում Ա թագավորի դիվանագիտական հաղթանակն էր:

Հայ-մոնղոլական դաշինքը սկզբնական շրջանում դրական նշանակություն ունեցավ Կիլիկյան թագավորության համար. ամրապնդվեց նրա միջազգային դիրքը, արտաքին առեւտրական հարաբերությունները նպաստեցին երկրի տնտեսական վերելքին:

Այսպիսով, Կարակորումի ճանապարհին հայտնաբերված պղնձե այս դրամը Կիլիկյան թագավորության եւ նրա մոնղոլ դաշնակցի միջեւ հյուսված կապերի խորհրդանշական վկաներից մեկն է:

C. MUTAFIAN, Le Royaume arme'nien de Cilicie (XIXe-XIVe sie`cle), Paris, 1993, p.56: Այաքով նշված է դրամի հայտաբերման վայրը:

[1] TANG Guoxing, «Mulei faxian "mi" zi fu tongbi», Xinjiang qianbi, 1998-III, 12

[2] Ջունգարիան (Ջունգարական հարթավայրը) գտնվում է Չինաստանի հյուսիս-արեւմուտքում, Տյան Շան լեռնաշղթայի հյուսիսային կողմում:

[3] Կիլիկյան դանգը խոշոր չափի պղնձե դրամ էր եւ առավելապես թողարկվել է Լեւոն Ա-ի (1190-1198) եւ Հեթում Ա-ի օրոք: Տես P. Z. BEDOUKIAN, Coinage of Cilician Armenia, Danbury, 1979, p. 55:

[4] F. THIERRY, «Une monnaie arme'nienne de Hetoum I (1226-1270) trouve'e au Xinjiang (Chine)», Bulletin de la Socie'te' Francaise de numismatique, Paris, 2000, No. 3, p. 49-50.

Դրամի լուսանկարի տրամադրման համար ընդունակություն ենք հայտնում դրամագետ Ռուբեն Վարդանյանին (Է. Վ.)

ԱԿԱԴԵՄԻԿՈՍԻ ՍՈՒՐԸ

հանձնվելու է ֆրանսիացի հայագետ Ժան-Պիեռ Մահեին

Այս տարվա հոկտեմբերի 24-ին տեղի է ունենալու հանդիսավոր երեկո՝ անվանի կովկասագետ եւ հայագետ Ժան-Պիեռ Մահեի՝ Հնագրության եւ բանասիրության ակադեմիայի իսկական անդամ ընտրվելու (2001թ. մարտ) առթիվ, Սորբոնի համալսարանի մեծ ամֆիթատրոնում, շուրջ 800 հրավիրյալների ներկայությամբ:

Ժան-Պիեռ Մահեն (ծնվ. 1944) 1975-1977թթ. Երեւանի պետհամալսարանում դասավանդելուց եւ Մատենադարանում հայերեն ձեռագրական հարուստ ժառանգությանը ծանոթանալուց հետո իր գիտական ուսումնասիրությունների գլխավոր ուշադրությունը դարձրեց հայագիտությունը: 1977-ից խմբագրում է «Revue des etudes Armeniennes» հայագիտական տարեգիրքը: Նրան ենք պարտական Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի, Նարեկացու «Մատյան ողբերգության», Խորենացու «Հայոց պատմության», միջնադարյան բազմաթիվ բնագրերի ֆրանսերեն թարգմանության, ինչպես եւ հայագիտական բազմաթիվ ուսումնասիրությունների ու հրատարակումների համար:

Ակադեմիկոսի տիտղոսի հանձնման միջոցառման առանցքային իրադարձությունը նորընծա տիտղոսակրին ակադեմիկոսի սրի հանձնման հանդիսավոր արարողությունն է, մի գեղեցիկ սովորություն, որ սրբագործում է գիտնականի երախտաշատ ուղու ճանաչման հերթական աստիճանը: Ժան-Պիեռ Մահեի սուրը կովկասյան արծաթագործության հին նմուշ է, որը կոչված է խորհրդանշելու նրա մասնագիտությունը, հանձնելու է արարողության նախագահ, նույն ակադեմիայի անդամ պատմաբան Մարկ Ֆիլոնենկոն:

Հակիրճ անդրադարձով հայ ընթերցողներին ծանոթացնենք այս արարողության պատմությանը:

1635 թվականին կարդինալ Ռիշելյոն Լյուդովիկոս 13-րդին հերթական պատահական այցելության ժամանակ ստորագրության է ներկայացնում գիտական նորաստեղծ հասատության՝ Ֆրանսիական ակադեմիայի կանոնադրությունը: 1637-ին Պառլամենտը վերջնականապես հաստատում է գիտական այս օրրանի ստեղծումը:

Մեկուկես դար հետո, 1795 թվականին հեղափոխական Կոնվենտը, ցրելով Արքայական ակադեմիան, հիմնեց նոր հասատություն՝ Ֆրանսիայի Ինստիտուտը, որի կազմում ներգրավեցին հինգ ակադեմիաներ. Ֆրանսիական, Հնագրության եւ բանասիրության, Ճշգրիտ գիտությունների, Գեղարվեստի, Բարոյագիտության եւ քաղաքագիտության: Որպես գիտական աշխարհի խորհրդարան հռչակված Ինստիտուտի նոր առաքելությունն էր կատարելագործել գիտությունները ու արվեստները բոլոր ծյուղերի համակողմանի զարգացման սկզբունքով: Ֆրանսիայի Ինստիտուտը միակն է աշխարհում, ուր պոետն ու ֆիզիկոսը, փիլիսոփան ու երաժիշտը, պատմաբանն ու մաթեմատիկոսը, տնտեսագետն ու քանդակագործը, քննադատը, ասդագետը, նկարիչը, իրավաբանը կարող են իրար տիտղոսակից եղբայրներ կոչել:

Ներկայումս ակադեմիաներից յուրաքանչյուրը, բացի թղթակից անդամներից եւ արտասահմանյան ներկայացուցիչներից, ունի իսկական անդամների անփոփոխ քանակ (օրինակ, Ֆրանսիական ակադեմիան՝ 40, Հնագրության եւ բանասիրությանը՝ 55, Ճշգրիտ գիտություններինը՝ 140) եւ մեկ կամ երկու մշտական քարտուղար, իսկ ինստիտուտը ինչպես հնում՝ ղեկավարում է կանցլերը: Այսօր այդ պատասխանում է նախկին վարչապետ Պիեռ Մեսմերը:

Տիտղոսակրի աթոռը թափուր է հայտարարվում միայն որեւէ անդամի մահվան դեպքում, եւ, ըստ էության, ցանկացած անհաս կարող է ներկայացնել իր թեկնածությունը՝ մշտական քարտուղարին հղված նամակով: Ընտրվում է այն թեկնածուն, որը հավաքում է ձայների մեծամասնությունը: Ընտրությունը վերջնական է համարվում միայն Հանրապետության նախագահի՝ ակադեմիայի իրավական հովանավորի վավերացմամբ, որն այդ առիթով ընդունելություն է նշանակում նորընծա ակադեմիկոսին:

Երբ Կոնվենտը լուծարեց ակադեմիան, միաժամանակ չեղյալ հայտարարելով անդամների արտոնությունները, նոր Ազգային ինստիտուտում ներգրավված անդամներն այլեւս իրավունք չունեին կրելու խավային պատկանելությունը եւ հետո որեւէ տարբերանշան: Այդ տարիներին ակադեմիկոսները շրջում էին Մինիերվայի պատկերով զարդարված ձեռնափայտով: Շուտով պահանջ զգացվեց տարիների ծանրակշիռ վաստակը հետեւել ավելի պատշաճ արտաքին հարդարանքով: Ի վերջո, Կոնվենտի տարբեր հրամանագրերով ասիճանաբար սահմանվեց ակադեմիկոսների համազգեստը, որ պահպանվում է քայսօր: Նորընծան պետք է ձեռք բերի սեւ մահուդե զգեստ՝ կանաչ մետաքսաթելով (կաղույտ՝ կանանց համար) բոլորակ ասեղնագործած ձիթենու ծյուղեր հիշեցնող զարդանախշով, երկծայր գլխարկ, թիկնոց եւ սուր:

Քանի որ Ֆրանսիական ակադեմիան սկզբնավորման օրից արքունիքի մաս էր կազմում, նրա անդամներին սուր կրելու իրավունք էր վերապահված: Երբ կայսրության եւ ռեստավրացիայի շրջանում ազնվականության հալածանքը դադարեց, Ակադեմիայի ազնվական անդամները պահպանեցին սուր կրելու սովորությունը:

19-րդ դարի ընթացքում պետական իշխանության առաջընթացը նոր իմաստ տվեց սրին՝ այդուհետեւ այն դարձավ պետության պատշաճական մարմինների զինանշանը: Բանակի սպաներից բացի սուր կրելու իրավունք ստացան դեսպաններն ու նրանց քարտուղարները, ծովակալները, նահանգապետները, ոստիկանապետները եւ նույնիսկ որոշ բարձրակարգ ուսումնական հասատությունների սաները: Քանի որ ինստիտուտի անդամների առաքելությունն էր կատարելագործել լեզուն, գրականությունը, արվեստները ու գիտությունները, բնական էր, որ նրանք եւս հեղինակության այս նշանը կրելու պատիվը ստացան: Սակայն գիտնականները, գրողներն ու արվեստագետները շատ արագ կարողացան իշխանությունը խորհրդանշող սրի սովորական իմաստին նոր խորհուրդ հաղորդել: Ակադեմիկոսի սուրը ոչ թե նրա պատշաճի մարմնավորումն է, այլ արտահայտում է իր հանրաճանաչ տիրոջ անհատական բնութագիրը եւ գիտական անցած ճանապարհը: Ոսկեզօծ եւ արծաթապատ երախտակալի յուրաքանչյուր դրվագը (պահպանակը, ողնափայտը, բռնակը թե գնդիկը) ունի իր այլաբանական նշանակությունը եւ կրում է նորընծա ակադեմիկոսի տիտղոսներից մեկը: Անկասկած այս յուրահատկության շնորհիվ է, որ սուրը կրելու սովորությունն առայսօր պահպանվում է, չվերածվելով անցած ժամանակների հնապատշաճական վերապրուկի, միմյանց եւ այլ պետական մարմիններում այն վաղուց գեղեցիկ հիշողություն է դարձել: Չէ՞ որ որոշես իշխանության տարբերանիշ այն այլեւս ոչ մեկին ակնածանք չի ներշնչում, այնինչ, որպես արվեստագետի, մտածողի կամ գիտնականի անհատականության խորհրդանիշ, սուրն ուրիշ հմայք ունի: Սակայն սուրը լոկ ակադեմիկոսի հագուկապի գեղեցիկ տարր չէ, այլեւ խորհրդանշական առանցքն է հանդիսավոր իրադարձության՝ սրի հանձնման արարողության, որ ամենայն պատշաճությամբ նախապատրաստվում է ամիսների ընթացքում:

Սուրը նվիրվում է նորընծայի ազգականների եւ բարեկամների, ընկերների եւ երկրպագուների կամ որեւէ ընկերության, հարազատ քաղաքի կողմից: Արարողության ժամանակ այն նորընծային է հանձնում ազգային մտքի հանրաճանաչ գործիչներից եւ նույն Ակադեմիայի անդամներից մեկը, որը նշանակվում է նորընծայի ցանկությամբ:

Էդգա Վարդանյան
Նազենի Ղարիբյան



Արեւելեան քաղաքդ Անի...
Մերձաւորաց յոյժ ցանկալի
Հեռաւորաց՝ փափագելի:
Ներսես Շնորհալի, 12-րդ դար

ԵՐԲ ԱՆԻՆ ՄՆՈՒՄ Է ՀԵՌՎՈՒՄ

Կարեն ՄԱԹԵՒՈՍՅԱՆ

Եթե տեսել եք Անին սահմանի այս կողմից, թերեւս կհասաս-տեք, որ երբեմնի մայրաքաղաքի ավերակներին նայելիս այնքան չեք տխրում, որքան տունդարձի ճանապարհին: Մի անբացատրելի թախիծ է պատում ձեզ, երբ Անին մնում է հեռվում:

Բայց անցյալ դարի սկզբին Անին սահմանի այն կողմում չէր, եւ ժամանակի հայ մտավորականները նրա հաճախակի այցելու-ներից էին: Ահավասիկ մի բնութագրում Ավետիք Իսահակյանից. «Երբ մարդ Անի է մտնում, կարծես մի ուրիշ աշխարհ է ընկնում, մի կախարդական աշխարհ, բայց շատ հարազատ, շա՜տ դարեր, հա-զար տարիներով ծանոթ, մտերիմ, սրտակից: Մի քաղցր եւ տխուր զգացում համակում է քեզ՝ հայրենի հին տան զգայությունը. այս-տեղ են ապրել քո բոլոր հայրերն ու մայրերը, ու քեզ նրանք բոլորը սիրել են այստեղ»:

Ես միշտ մտածել եմ, թե ո՞րն է Անիի գաղտնիքը, ի՞նչն է նրան այդքան մոտեցրել հայի հոգուն: Ամենապարզ պատասխանը՝ Անիի դրամատիկ ճակատագիրն է: Հայաստանի ամենագեղեցիկ ու փա-ռավոր քաղաքը, թագավորանիստն ու կաթողիկոսանիստը, որի մասին ասվում էր, թե հազար ու մեկ եկեղեցի ուներ, հանկարծ դարձել է անմարդաբնակ, լքյալ:

Այս ողբերգական իրողությունը բավական էր, որ հուզառաս ու նրբազգաց հայը զուգահեռներ տեսներ Անիի ու Հայաստանի, Անիի ու հայ ժողովրդի, Անիի ու իր տոհմի ճակատագրի միջեւ: Այս ամենին հավելվեց 1921-ին Մոսկվայում՝ Հայաստանի ու Թուրքի-այի միջեւ որոշված սահմանագիծը, որը հայոց միջնադարյան մայրաքաղաքը թողեց սահմանի ոտնկին՝ թուրքի ձեռքում:

Բայց Անիի ձգողականության գաղտնիքին հասու լինելու հա-մար հարկավոր է ավելի հեռ գնալ, դեռի պատմության խորքը:

885թ. վերականգնված հայոց անկախ պետության առաջին չորս թագավորները հաջորդաբար գա-հանիստ դարձրեցին Բագարանը, Շիրակավանը, Կարսը: Վիճակն արմատապես փոխվեց 961 թ., երբ Աշոտ Գ Ողորմածը Կարսից փո-խադրվեց Անի, այստեղ էլ թագադրվեց ու այն հռչակեց երկրի մշ-տական մայրաքաղաք:

Աշոտ Ողորմածի նպատակը Անին ոչ միայն թագավորանիստ, այլեւ կաթողիկոսանիստ դարձնելն էր, եւ այդ ուղղությամբ նա որոշ քայլեր ձեռնարկեց: Սակայն նրա ծրագիրն իրականություն դար-ձավ ավելի ուշ՝ 992 թ., երբ կաթողիկոս Սարգիս Ա Սեւանցին կա-թողիկոսական Աթոռն Արգինայից փոխադրեց Անի: Այսպիսով, երկ-րի գահանիստ կենտրոնը դարձավ նաեւ հոգեւոր մայրաքաղաք: Անին ստացավ այնպիսի դեր, ինչպիսին ունեին քրիստոնեական Հա-յաստանի առաջին մայրաքաղաքներ Վաղարշապատն ու Դվինը:

Բագրատունյաց Անիում մեկը մյուսի հետեւից վեր խոյացան հրաշագեղ եկեղեցիներ, որոնք եւ՛ ճարտարապետական ձեւերով, եւ՛ հարդարանքի տարրերով անդրադարձն էին ոսկեդարյան շր-ջանի հայ ճարտարապետության: Անգամ կատարվեցին մասնակի ընդօրինակություններ (Գագկաշեն Ս. Գրիգոր - Զվարթնոց, Ս. Առաքելոց - Էջմիածնի Մայր տաճար), որոնք արվում էին Անիի՝ «Հայոց նախնյաց փառքի» ժառանգորդը լինելու հանգամանքը շեշտելու համար:

Անիի գահակալները, եկեղեցանպաստ բազմազան ձեռնար-կումներից բացի, թե՛ զինանշաններում եւ թե՛ արքայական տարա-զում մեծ տեղ էին հատկացնում քրիստոնեական գլխավոր խորհր-դանշան խաչին: Քաղաքի պարսպի վրա պատկերված Բագրա-տունյաց հովազաթակեր զինանշանը, որը նաեւ ժամանակի ողջ հայոց պետականության խորհրդանշանն էր, պատկված է վերաս-լաց խաչաթակերով: Կարելի է ենթադրել, որ հովազն ու խաչը համապատասխանաբար խորհրդանշում են աշխարհիկ եւ հոգե-ւոր իշխանությունները, որոնք երկուսն էլ կենտրոնացած էին Անի մայրաքաղաքում:

Պակաս հետաքրքրական չէ խոշոր խաչի առկայությունը Գագիկ Ա թագավորի քանդակում, քանի որ միջնադարյան քան-դակագործության եւ մանրանկարչության մեջ պատկերված ու-րիշ հայ թագավորների բազմաթիվ պատկերներում նման բան չենք տեսնում:

1001 թվականին, Քրիստոսի ծննդյան 1000-ամյակին, հայոց մայրաքաղաքում ավարտվում է թագավորաշեն երկու իսկա եկե-ղեցիների՝ Մայր տաճարի եւ Գագկաշեն Ս. Գրիգորի կառուցումը: Այդ նույն ժամանակ Սարգիս Սեւանցի կաթողիկոսը Անիում կա-ռուցում է Ս. Հռիփսիմյանց կույսերին նվիրված եկեղեցի եւ մեծ

շուքով Վաղարշապատի վկայարաններից այս-տեղ փոխադրում սուրբ կույսերի մասունքների մի մասը: Այս դեպքը ցույց է տալիս, որ կաթող-իկոսն Անին ուզում էր տեսնել ոչ միայն որպես եկեղեցական վարչական կենտրոն, այլեւ հայոց եկեղեցու նվիրական սրբություններն ամփոփող սրբավայր:

Հարկ է նշել, որ Անին իր վաղ շրջանի պատմության մեջ արդեն իսկ ուներ մի էջ՝ կապ-ված հայոց ազգային եկեղեցու հիմնադիր Ս. Գրիգոր Լուսավորչի անվան հետ: Ինչպես տեղե-կացնում է Վարդան Արեւելցին, ժամանակին Գրիգոր Լուսավորիչը մկրտել է Անիի «հին ժա-մանակաւ Շինեալ» Ներքին բերդի համառ իշ-խանին: Իսկ 13-րդ դարի սկզբներին Անիի տերը՝ Զաքարե ամիր-սպասալարը, Ներքին բերդում կառուցում է մի եկեղեցի եւ շինա-րարական արձանագրության մեջ նշում, որ այն հիմնել է «Մեր սուրբ լուսավորչի՝ Գրիգորի շինած եկեղեցու մոտ...»: Սարգիս Սե-ւանցու նախաձեռնությամբ Հռիփսիմյանց կույսերի մասունքների փոխադրությունն Անի՝ գալիս է ամրապնդելու արդեն իսկ Գրիգոր Լուսավորչի գործունեությամբ հիմնասավորված բնակավայրի դե-րը որպես համահայկական հոգեւոր կենտրոնի ու սրբավայրի:

Այս նույն միտումի չափազանց հատկանշական զարգացմանը հանդիպում ենք հայոց եկեղեցու խոշորագույն գործիչներից մեկի՝ կաթողիկոս Ներսես Շնորհալու մոտ: «Ողբ Եդեսիոյ» հայտնի ստեղ-ծագործության մեջ փառաբանելով Անին՝ նա քաղաքի անվան **եռատառ** լինելը կապում է **Սուրբ Երրորդության** խորհրդի հետ.

Արեւելեան քաղաքդ Անի...
Գեղեցկանուն զարմանալի,
Որ երկակի տառիւ բերի
յԵրրորդութեանն խորհրդի,
Որ միշտ ի քէն երկրոպագի...

Անիի հոգեւոր դերի շեշտումը միայն Բագրատունյաց դարա-շրջանին չէր բնորոշ: Այն շարունակվում էր անգամ սելջուկյան տիրապետության ժամանակ: Մասնավորապես հայտնի է, որ Մա-նուչեհի ամիրայության եւ Բարսեղ Ա Անեցու աթոռակալության շր-ջանում Անի է բերվել Նունեի (Նինո, Վրաստանում քրիստոնեու-թյուն տարածած, սրբերի շարքը դասված կույս) հրաշագործ խաչը: Անիում է պահվել նաեւ «Հազարափրկիչ» կոչվող նշանավոր խաչը, որը հետագայում տարվել է Գեղարդ: Իսկ քաղաքի արվարձանամերձ Հոռոմոսի վանքում բազմաթիվ այլ սրբությունների կողքին պահվել է Գեսարգել Ս. Նշան զորավոր խաչը:

Անին կառուցողներն ու շենացնողներն այն հարդարել են որ-պես քրիստոնեական միջնաբերդ, եւ պատահական չէ, որ անգամ նրա պաշտպանական շինարարությունների՝ պարիսպների բուր-գերի մեջ ներսի կողմից մատուռներ կամ խորաններ են կառուցել: Դեռեւս Աշոտ Ողորմածը պարսպաբուրգերի մեջ եկեղեցիներ է հիմնել, իսկ Սմբատաշեն պարիսպները մատուռներից բացի ար-տաքինից ունեն տարբեր գույնի քարերից կամ սովորականից տար-բերվող շարվածքով կազմված խոշոր խաչեր, տասնյակ խաչքա-րեր եւ խորհրդանշական այլ քանդակապատկերներ: Անիում պարսպի բուրգ կառուցելը համարվում էր աստվածահաճո գործ, որի դիմաց կառուցողը հոգու փրկություն էր ակնկալում:

Այս ամենը կատարվում էր քաղաքի ամրակուռ պարիսպները նաեւ երկնային զորությամբ անառիկ դարձնելու համար: Գրիչնե-րից մեկը պատմելով Անիի պաշարումն անօգուտ համարած ու հե-ռացած մահմեդական ասպատակողի մասին, նշում է. «Եւ դարձաւ յաշխարհ իւր, ոչինչ կարացեալ սնանալ նմա, զի Տէր պահպանէր եւ Ինքն հովանի՝ Աջովն իւրով»:

Անին բառացիորեն ողողված էր եկեղեցի-ներով, որոնց բազմաթիվ վերասլաց, խաչա-զարդ գմբեթները ժամանակակիցների վրա ալեցուցիչ տպավորություն են թողել: Եկեղեցի-ներ, մատուռներ եւ անգամ վանական համալիր-ներ կային նաեւ Անիի ձորերի քարայրներում, ինչպես եւ քաղաքային պարսպից դուրս գտն-վող ընդարձակ արվարձաններում: Անիի կյան-քում առանձնահատուկ տեղ է գրավել Հոռոմոսի վանքը: Բավական է նշել, որ մահից հետո այս-տեղ են հողին հանձնվել Բագրատունի թագա-վորները՝ սկսած Աշոտ Ողորմածից մինչեւ Հով-հաննես Սմբատ:

Անի-Հոռոմոս ճանապարհին, վանքից ոչ հեռու բարձունքի վրա պահպանվել է մի ինքնատիպ շինություն՝ զույգ եռահարկ աշ-տարակավոր կամար, որը գրականության մեջ կոչվել է տարբեր կերպ. հաղթակամար, զանգակատուն, մուտքի կամար, բայց նշա-նակությունը ճշտորեն չի որոշվել:

1211 թ. նկարիչ Մարգարեն Սահակ Անեցու պատվերով քա-ղաքի Բեխենց վանքում պատկերազարդած «Հաղբատի Ավետարա-նի»՝ «Քրիստոսի մուտքը Երուսաղեմ» մանրանկարում, որպես սուրբ քաղաքի մուտքի նախատիպ, օգտագործել է հենց անիական հիշյալ հուշարձանը: Հիրավի, նրա աշտարակը եւ մանրանկարում պատկերված աշտարակը հարկերի համաչափային համադրու-թյամբ, ընդհանուր հորինվածքով, անգամ փոքր լուսամուտի ձեւով միանգամայն նման են, եւ ակնհայտ է, որ անեցի արվեստագետը որ-պես Երուսաղեմի մուտք պատկերել է Անիի մուտքը: Անեցի նկարի-չը «Քրիստոսի մուտքը Երուսաղեմ» ավետարանական հայտնի թե-մային հաղորդել է «Քրիստոսի մուտքը Անի» ենթատեքստը: Սա աստ-վածաշնչյան իրողությունների տեղայնացման՝ հայկականաց-ման եզակի դեպք չէ:

Անին սրբազան քաղաք համարելու մի հատկանշական օրի-նակ է պահպանվել «Պատմութիւն քաղաքին յԱնւոյ» բնագրում: Անանուն հեղինակը, խոսելով վրաց թագավորի Անի արշավելու մասին, գրում է. «թագաւորի Վրաց... եկն... ի վերայ յԱնւոյ թագա-տրաբնակ քաղաքին, նաեւ աստուածաբնակ ասեմ եւ ոչ ամաչեմ»: Հայ մատենագիրներն ու գրիչները «**աստվածաբնակ**» են կոչում միայն խոշոր վանքերը, նշանավոր սրբավայրերը, բայց ոչ երբեւէ որեւէ քաղաք, բացի Երուսաղեմից: Եվ ահա հիշյալ բնագրի հեղի-նակը նույնն է ասում Անիի մասին: Հնարավոր է, որ «աստվածա-շնչային» զուգահեռների ոլորտում պետք է որոնել Անիի անվան մասին Վարդան Արեւելցու հայտնած վկայության բանալին՝ «...զքաղաքն Անի, որ կոչի **խնամք**»: Խնամքը նաեւ «պահպանու-թյուն» եւ «հովանավորություն» է աստվա-ծային նախախնամության կողմից, քանզի, ինչպես Ս. Գիրքն է վկայում՝ «Որ յուսա-ցեալ է ի Տէր, ընդ խնամով կեցցէ» (Առա-կաց, ԻԸ, 25): Կարո՞ղ էր Անին կապ ունե-նալ «աստվածային խնամք» հասկացու-թյան հետ: Ինչպես վերը տեսանք, քաղաքի թե՛ աշխարհիկ, թե՛ հոգեւոր պետերը ջա-նում էին զանազան ձեւերով այդ կապը զգալի ու տեսանելի դարձնել՝ ամեն կերպ ընդգծելով քաղաքի՝ որպես «հոգեւոր մայ-րաքաղաքի» դերը:

Հարկ է նշել, որ Անիի հետագա տխուր ճակատագրի մեկնաբանությունը հայ միջ-նադարյան մատենագրության մեջ նույնպես սովորաբար կապվել է աստվածային

նախախնամության հետ, եւ քաղաքի բազմակի ավերումները ոչնչառաբանվել են որոշես քաղաքացիների կասարած մեղքերի դիմաց սասցված ասվածային պասիժ: Նման մոսեցման վաղ շրջանի առավել ցայսուն գաղափարակիրը Արիսսակես Լասիվերցին է, որն Անիի սելջուկյան զավթման ու ավերման մասին պասմելիս ավելի մեծ սեղ է հասկացնում բարոյախրասական դասողություններին, քան բուն ռազմական գործողությունների նկարագրությանը: Ընդ որում, Լասիվերցին Անիի ճակասագրի զուգահեռները շարունակ որոնում է հենց Ս. Գրքում՝ սկսած Բաբելոնյան աշսարակաշինությունից մինչեւ Երիքովի կործանումն ու Երուսաղեմի ավերումը: Պասմիչը հիշում է Երեմիա մարգարեի Ողբը եւ գրում, թե այն, ինչ ժամանակին կասարվեց Երուսաղեմում, հիմա եղավ նաեւ մեզ մոս՝ Անիում:

Հիմնականում նույնոիսի սեսակեսով են Անիի պասմության ողբերգական էջերին անդրադառնում նաեւ Սամվել Անեցին, Մասթեոս Ուռհայեցին եւ ուրիշները, իսկ այդ միսումի առավելագույն զարգացումը գսնում ենք Աբրահամ Կրեսացու «Պասմութիւն Անի քաղաքին» վերնագրված գործում, որը բառիս բուն իմասով, կրոնաբարոյախոսական երկ է:

Բայց արդյոք այսսեղ հակասություն չկա. մի կողմից՝ Անին սրբազան «ասվածաղաի» քաղաք է, մյուս կողմից՝ նրա բնակիչներն իրենց մեղասիրությամբ շարժում են Աստծո զայրույթը: Պասասխանը տալիս են մեր նույն մասենագիրները: Նրանք քաջ գիսեին, որ առաջին ու գլխավոր սրբազան քաղաքը Երուսաղեմն է, բայց այն եւս չխուսափեց Աստծո պասժից: Սամվել Անեցու դիմոդուկ գնահասմամբ՝ «...սեսավ Արարիչը մեր հոգարսությունը եւ հակառակվելով կսկծացրեց մեզ, ինչպես հնում Իսրայելին, քանզի եթե անդրանիկին չխնայեց, ինչու պիսի կրսսերին խնայեր»:

Այնուամենայնիվ, որքան էլ մարդկային մեղքերը պարսավելու գործում սկզբունքային էին հայ հոգեւորական մասենագիրները, նրանք անսարբեր չէին Անիի ճակասագրի նկասմամբ, ընդհակառակը, դառնորեն ողբում էին՝ հիշելով նրա նախկին փառքը: Անիի գրավումը սելջուկների, մոնղոլների ու այլոց կողմից, այլազգիներից կրած բազում սառապանքները, կործանիչ երկրաշարժերը, անեցիների աշխարհասփյուռ արսագաղթը եւ վերջապես՝ այս ամենի հեսեւանքով երբեմնի չքնաղ քաղաքի անմարդաբնակ ու ավերակ դառնալը, այն հայ ժողովրդի պասմական հիշողության մեջ ամրագրեցին ոչ միայն որոշես պեսականության ու անկախության խորհրդանիշ, այլեւ պարարեցին մարսիրոսի, նահասակի լուսապսակով, եւ Անին, թեկուզ հաճախ ենթագիսակցորեն, համարվեց հայոց ազգային գլխավոր սրբություններից մեկը:

Անիի գաղթականությունն ու նրանց սերունդներն ուր էլ որ գնացին, իրենց հետ սարան գեղակերս Անիի հուշը եւ ամենուր իրենց ծննդավայրի սեղծագործ ոգուն ու ավանդներին հավասարիմ մնացին:

Իսկ Անին ինքը շարունակեց հայրենասիրական ոգեւորության աղբյուր մնալ: 1722 թ. սեղեկանալով Դավիթ Բեկի գլխավորած ապսամբության մասին, 285 ղրիմահայ երիսասարդներ csաղում են Սյունիք՝ իրենց ազգակիցներին օգնության: Նրանք, որ այս մասին պասմող բնագրում կոչվում են «ղրիմաբնակ անեցի հայեր», Տրամիզոնից Սյունիք մեկնելու ճանապարհին, անսեսելով բոլոր դժվարությունները, նախ այցելում են Անիի ավերակներ՝ հայրենասիրական իրենց երդումն այդսեղ տալու եւ կենաց մահու մարդից առաջ, ասես, սրբազան քաղաքի օրհնությունն սանալու համար: Բնութագրական է նաեւ, որ հայերին այնքան շաս հույսեր ներշնչած 1877-78 թթ. ռուս-թուրքական պասերազմից հեսո Կոսսանդնուպոլսի Հայոց Ներսես Վարժապեսյան խիզախ պասրիարքն իր պաշոնական «պասրիարք օսմանյան հայոց» կոչումից առաջ սկսել էր կրել «արքեպիսկոպոս Անւոյ» պասվանումը, իսկ դրանից դեռ մեկ դար առաջ ռուսական արքունիքին Հայասսանի ազասագրության ծրագիր ներկայացրած Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը որոշես ինքնիշխան Հայասսանի մայրաքաղաք առաջարկում էր Վաղարշապասը կամ Անին:

Հեսո հերթը հասավ բանասեղծներին: Աբովյանից դեռ շաս առաջ ու հեսո, մինչեւ Թումանյան ու Իսահակյան, մինչեւ Հովհաննես Շիրազ, հայ գրիչը բանասեղծական ամենահուզիչ սողեր ընծայեց Անիին, որին հաճախ նույնացրեցին շնչավոր էակի հեսե:

Անի՛, դու չես լոկ հողեղեն մի գանձ,
Դո՛ւ, ինքդ ես ոգին - մի ողջ ժողովուրդ,
Ամեն ձեւ այսսեղ ոգ է գերազանց,
Ամեն ինչ այսսեղ - իմաս ու խորհուրդ:
(Ավ. Իսահակյան)

Այսօր էլ անհնար է գսնել ազգային ինքնագիսակցությամբ որեւէ հայի, որին չհուզի երբեմնի ծաղկուն, այժմ ավերակ Անիի ճակասագիրը: Հիրավի, դարերի հոլովույթում բազում սերունդների վասակով, հարյուրավոր եկեղեցիներով ու բյուրավոր աղոթքներով սրբագրոծված մի հող է Անին, որի ձգողական ուժը կենսունակ է նաեւ այժմ: Իր պասմությամբ ու ճակասագրով «ամենահայկական» այս քաղաքն իրասես նյութականից ազեւ ու հոգեւր արժեք է ձեռք բերել, ուսսի իրավունք ունենք ասելու, որ հոգեւոր Անին շարունակում է աորել, հարասեւում է:

Ավսոքուսը շարժվում է դեպի Երեւան: Ախուրյանի հայասասնյան ափից Անին դիսելու «էքսկուրսիան» ավարսվեց: Բոլորը լուռ են, ինքնամփոփ: Պարսադիր չէ, որ Անիի մասին մսածեն: Ավելի հաճախ թերեւս մսածում են կորած սիրո մասին: Մի անբացասրելի թախիծ է պասում բոլորին, երբ Անին մնում է հեռվում:

ԱՐՈՒԵՍՏԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՄԷՋ

Մեսրոպ Հայունի

Արուեսը համադրումն է, արսայայսումն է, դրսեւորումն է եւ գեղագրումն է մարդկային հոգիին, սրսին, մսքին, աչքին ու դասակին:

Դասակը կը գոհացնէ սեսողութիւնը: Աչքը կը համաթասասխանէ մսածողութեան: Միսքը կ՚արարէ զգացողութենէն: Սիրսը կը տրուիէ ներհայեցողութենէն: Հոգին կը գոյանայ «Է» հռչակեալ Գոյէն:

Հինգ իմացութիւններուն ազդակը եւ շարժիչն է կամքը: Կամքը, որ կամենալը եւ կարենալն է, սիրահոսքն է «Է»-ին կամեցողութեան ու կարողութեան. անոնցմով «ի սկզբանէ» ոչնչէն սեղծեց ամէն բան եւ «սեսաւ, որ ամէն ինչ շաս լաւ է»:

Արուեսը, որ հինգ իմացութիւններուն արուեսն է, ներքուս կը դառնայ արարումը Գոյին մէջ, արսաքուս՝ Գոյին համար: Այս արուեսին մէջ ինքզինքը կը բացայայսէ «Է»ն:

Միայն այսպէս արուեսը կը բարձրացնէ մարդը ամբողջապէս՝ ըմբռնելնումով Գոյին: Արուեսին վայելքը կը հանդիսանայ նաեւ կրօնական նշանակութիւն եւ հոգեւոր արժէք, որոնք ոչ միայն չեն ժխտեր աշխարհական նշանակութիւնն ու նիւթական արժէքը, այլ ընդհակառակն՝ կը բիւրեղացնեն եւ կը բարձրակերսեն զանոնք:

Արուեսը, որ կու գայ առօրեայէն, բնականէն, պարզէն եւ նոյնիսկ անընսական, գեղեցիկ ու գեղեցկացնող, ուրախ ուրախացուցիչ կը դարձնէ առօրեան, բնականը, պարզը, անընսականը:

Արուեսը բնութեան մէկ մասը չէ, որ կը սեսնուի խառնուածքէն, կամ մէկ հասուածը չէ, որ կը գոյանայ նկարագիրէն: Արուեսը չու�դիսաւորութիւնը՝ բնութիւնն ըլլալու: Այո՛, արուեսը ունի բան մը բնութենէն, ինչք մը Գոյէն, որովհեսեւ արուեսը կը դրուի բնութեան մէջ՝ ասոր հեսե վերադառնալու Սկզբնաղբիւրին, որ թէ՛ բնութեան առաջին Գեղակերսիչն է թէ՛ արուեսին Նախարարողն է:

Արուեսին այս վերադարձը ժամանակին մէջ եւ ժամանակին հոլովոյթով՝ վերադարձումն է մարդուն դէպի «Աղբիւրը Լոյսին», որ նաեւ արուեսին մէջ եւ արուեսին միջոցաւ կ՚իրագործէ պաշտամունքը եւ կ՚ապրի հաւասքն Ինքնագոյին:

Արուեսին առանձնաշնորհումը, գաղսնիքն այն է, որ մարդուն սեսնել, ըմբռնիլել կու սայ թէ՛ արսաքին ու թէ՛ ներքին գեղեցկութիւնը: Արուեսին մէջ, արուեսին հեսե լաւագոյնս կը համադրուին ու կը համընթանան նիւթականն ու հոգեղէնը, զգացականն ու մսաւորը, օրդասականն ու վերացականը, բնականն ու գերբնականը:

Այս առարկայական սեսութենէն մեկնելով՝ կրնամ մսածել ու պէսք է մսածումս արսագրեմ ոչ միայն արուեսին փիլիսոփայութեան, այլ մանաւանդ արուեսին միսթիկին մասին: Եթէ առաջինը մսքին ու սրամաբանութեան իմասասիրութիւնն է, առաջ երկրորդը՝ հոգիին հոգեկանութեան խորհրդագիսութիւնն է:

Երկուքը, փիլիսոփայութիւնն ու միսթիկը, բաժնելու չէ իրարմէ, ինչպէս որ կարելի չէ իրարմէ զասել գիսութիւնն ու հաւասքը: Քրիսսոնէական կրօնը, որ Խօսքին տուածն է մարդուն, կը սնուցանէ, կ՚որակէ, կը վեհացնէ այս չորս իմացութիւնները՝ փիլիսոփայութիւնը, միսթիկը, գիսութիւնն ու հաւասքը: Նաեւ ոճը, գեղեցկութիւնը, որոնք Բանին հարազաս իւրայսակութիւններն են. ասոնք կը հանդիսանան ելակեսերը մշակոյթին՝ իր բոլոր մարզերուն եւ սեսերուն մէջ:

Արուեսն ունի իր ինքնուրոյն միսթիկը: Արուեսը պէսք է սասարէ մարդուն ժամանակին՝ ընթանալու «Է»-ին ժամանակին մէջ, որ մարդկային հասողութեան համար իրականին՝ Անժամանակը կամ Գերժամանակն է, այլաւէս կը վրիպի ժամանակին մէջ իր արարումին՝ իրեն նախագծուած նպասակէն:

Ժամանակին մէջ արուեսին անդասեհութիւնը, անկարողութիւնը կը սկսին կայանալ այն իրողութեան մէջ, երբ կը սկսի ճանչնալ ու տալ անցաւոր կեանքը լոկ եւ այլեւս կը սկսի մոռնալ կեանքին ԿԵՄՆՔԸ:

Արուեսը ժամանակին մէջ ըլլալու է լուսաբողն ու սիրերգը տիեզերական լինելութեան, որուն մաս կազմելու կամ իր բաժինը բերելու պիսի նպասաւ մարդուն, երբ կ՚ուզէ դառնալ ու մնալ լուսաբնակ եւ սիրակեաց իմացական էակը տիեզերական «Է»-ին հեսե:

Արսաքինը պահելով եւ զարգացնելով իսկ, արուեսը թափանցելու է ներքինին, խորքին, իրողութեան ներաշխարհին: Անկէ աւելի զսուած, բիւրեղացած կ՚ելլէ եւ այսպէս միայն կրնայ ներգրոնել ու մնալ գոյասեւելու ժամանակին մէջ, որ զինքը կը միաձուլէ Անժամանակին հեսե:

Ուրեմն, լոկ արսաքինով, արսաքուս ներկայացուածով բաւարարուելու չէ արուեսը: Այսպիսի գոհունակութիւն մը կը նշանակէ թաղումը արուեսին ժամանակին մէջ, որ հուսկ կը վերջանայ Կասարածին: Եւ անկէ եսք՝ ոչ՛ինչ: Անէական:

Արուեսը ժամանակին մէջ արդէն մաս կազմելու համար Գերժամանակին՝ ներկայանալու, բանելու եւ արսադրելու է միայն Գեղին, Կասարեալին, Ճշմարիսին, Վսեմին ու Բացարձակին համար, որոնք անկորնչելի սորոգելիներն են Գոյին:

Այո՛, արուեսը ժամանակին մէջ ամբողջովին լեցնող ու համակող «Է»ն թէեւ հոգեկան վերացական է ու արուեսէն անհասանելի է, սակայն արուեսը կարողութիւնը, ուժականութիւնն ունի տրամադրուելու Բանին փառքին, որ կար «աշխարհի սեղծումէն առաջ»:

«Արուեսը արուեսին համար» արժէք չունի, եթէ պիսի չնպասաւ «արուեսը կեանքին համար» կարգախօսին...: Կամ՝ «արուեսը կեանքին համար» արժանիք չունի, եթէ պիսի չսանի ԿԵԱՆՔԻՆ...:

Եթէ կենսախօսական փիլիսոփայութեան իր հարկը կ՚ուզէ տալ արուեսը ժամանակին մէջ, առա այդ արժան եւ իրաւ կը նկասեմ: Սակայն, եթէ ասսուածախօսական իմասասիրութեան իր տուրքը կ՚ուզէ ընծայել արուեսը ժամանակին մէջ, առա այդ իբր անդայմանական անհրաժեշսութիւն առաջնահերթութիւն կը պահանջեմ:

«Արուեսը արուեսին համար» կը դառնայ, երբ «արուեսը կեանքին համար» կը հանդիսանայ: Պահելով առումներուն որակն ու կարգը՝ ըսելու ենք, թէ արուեսը կեանք է, կեանքը արուեսս է: Ժամանակին մէջ, որ կը հոսի անէութիւնն ոչնչացնող Գերժամանակին մէջ:

Ժամանակին մէջ... Որ կը պարփակէ արուեսին անցեալը, ներկան, առագան, ու նաեւ իբր սիեզերական հոլովոյթը մարդուն կեանքին մէջ՝ կը ծորի միշս «Է»-ին սեսողութեան մէջ՝ տալով արուեսին սեսականութեան կնիքը: Այն «Է»-ին, անցեալին, առագային կամ անցաւորութեան անանցաւորութեան, Ներկայի՛ն, որուն վսեմական ու վսեմացուցիչ քերթողը՝ Դ. Վարուժան կը ձայնէ. «Դուն ամէն ինչ ես. Դուն կե՛անք ես. Դուն Յաւիսենական Սէրն ես: Թո՛ղ, որ խորին երկիւղածութեամբ խոնարհիմ առջեւդ»:

Արուեսը, մարդկային արուեսը ժամանակին մէջ, սկսաւ արուեսով ընդհանրապէս, գեղարուեսով՝ մասնաւորապէս, բայց գեղանկարչութեամբ՝ յասկապէս:

Կեանքին եւ լոյսին սիրերգութիւնն է այս արուեսը, որուն հեղինակն է Արարչագործ «Է»ն, երբ Իրմէ սեղծուած ժամանակին մէջ սկզբնաւորեց արուեսագործութիւնը: Ասոր ներկայութեամբ հրձուեցաւ Աստուած, որ «սեսաւ, թէ լաւ է»:

Արուեսը, քրիսսոնեայ արուեսը ժամանակին մէջ, սկսաւ «ժամանակներու լրումին», երբ տիեզերքին Լոկոսը, Բանը, Խօսքը, որ «սկիզբէն էր» «ամէն ինչ Իրմով սեղծուեցաւ», «ճնաւ Կոյսէն», «Կոյսին անունն էր Մարիամ», որ եղաւ ժամանակաւորումն **ԱՐՈՒԵՍՏԻՆ**:

- Շնորհքին ու ճշմարսութեան սիրերգութիւնն է այս արուեսը, որ կը տանի քրիսսոնեան Անդենականին, ուրկէ գոյացաւ արուեսը ժամանակին մէջ: Հո՛ն արուեսը վերադարձնելու է մարդը՝ հեսեւողը արուեսագէս, արուեսասեղծ, արուեսագործ եւ արուեսակերս Գոյին...

Պէյրութ, 18 յուլիս 2002

ԱՍՈՄ ԷԿՈՅԵԱՆԻ «ԱՐԱՐԱՏԸ» ՔԱՆԻ ՓԱՌԱՏՕՆԻ ՄԷՋ

Քանի փառատօնը իւրայատուկ տեղ ունի ֆիլմարուեստի աշխարհին մէջ, որովհետեւ ան, ի տարբերութիւն ամերիկեան Օսքարի մրցանակէն, աւելի շատ շեշտը կը դնէ ներկայացուած ժառանգներու գեղարուեստական որակին եւ շօշափուած նիւթի գեղեցկութեան վրայ:

2002-ի Քանի փառատօնը հայերուս համար դարձաւ նշանակալի, որովհետեւ առաջին անգամ ըլլալով հայ բեմադրիչ մը՝ Ասոմ Էկոյեան այս փառատօնին կը ներկայացնէր Հայկական Ցեղասպանութեան նիւթը արծարծող գեղարուեստական ժառանգ մը: Թէեւ Էկոյեան փառատօնը սկսելէն շատ կարճ ժամանակ առաջ հրաժարեցաւ «Արարատ» ժառանգը մրցանակի ներկայացնելէն, բայց անոր շուրջ բարձրացած աղմուկը նոյն թափով շարունակուեցաւ: Յիշեցնենք, որ «Արարատ» ժառանգին շուրջ փոթորիկ բարձրացուցած են թուրքերը, որոնք ամէն ձեւով կը փորձեն հակազդել ոճաւորական իրականութիւնը գեղարուեստական ոճով Արեւմուտքի հանրութեան ներկայացնելու Էկոյեանի այս քայլին:

«Արարատ»-ը ցուցադրուեցաւ փառատօնի ընթացքին եւ արժանացաւ հակասական գնահատականներու: Փառատօնէն առաջ, գանատական «The Star» թերթը անդրադարձած էր Էկոյեանի այս ֆիլմին: Թերթը գրած է.

«Ասոմ Էկոյեանին զարմացուցած էր «Արարատ» ժառանգին նկատմամբ ժողովուրդին ցուցաբերած հետաքրքրութիւնը: «Մարդիկ, որոնք ներկայ չեն եղած այդ ժառանգի ցուցադրութեան, կը զրուցեն անոր մասին, իսկ շատեր կը խօսին արարքներու մասին, որ ժառանգին մէջ ընդհանրապէս գոյութիւն չունի»,-կ'ըսէ Էկոյեան:

«Արարատ» ֆիլմը, որ ոճաւորուած էր Թորոնթոյի մէջ, ոճաւորական ակնարկ մըն էր 1915-ին օսմանեան թուրքերուն կողմէ գործադրուած Հայկական Ցեղասպանութեան մասին:

Էկոյեան մերժած է «Արարատ»-ի մասնակցութիւնը փառատօնին, որովհետեւ ան կը ներկայացնէ ոճաւորական այնոիսի շրջան մը, որ նախադէպ չէ ներկայացուած որեւէ ժառանգի ընդմէջէն եւ արժանացած համաոճաասխան քննադատութիւններու:

Անդրադառնալով թուրքերու հակահայ կեցուածքին, որոնք դէմ եղած են անոր ցուցադրութեան՝ ոճաձառաբանելով, որ դէմքերը հոն կը ներկայացուին ամէնէն կոշտ ու կոռոիտ ոճակերներով, Էկոյեան կը ոճաասխանէ. «Ես կ'ենթադրեմ, որ երբ թրքական միջավայրը այս ֆիլմը դիտէ, հոն ոճիտի գտնէ արդարութիւնը, նկատի ունենալով որ թրքական այդ միջավայրը ազդուած է կարգ մը ժառանգներէ, ինչպէս՝ «Midnight Express», «Lawrance Of Arabia», բայց կրնամ ըսել թէ այս ժառանգը կը տարբերի անոնցմէ:

Թուրքերը կը խոսովանին, թէ 300.000 հայեր սպանուած են, որովհետեւ անոնք կ'օգնէին օսմանեան կայսրութեան դէմ ոճաերազմող ռուսական զօրքին, սակայն կը մտածեն թէ սպանուած են 1.5 միլիոն հայեր՝ Օսմանեան կառավարութեան կողմէ»:

Հարցազրոյցին մէջ Էկոյեան այս ժառանգին համար իր ամբողջական ոճաասխանատուութիւնը կը յայտնէ, միեւնոյն ժամանակ շատ զգոյշ է այսոիսի զգայուն ոճաձական շրջան մը ներկայացնելով: Ան կ'ըսէ. «Անշուշտ այսոիսի իրողութիւն մը ընդունելի չէ յանցագործներու կողմէ, սակայն նկատի ունենալով թէ բազմաթիւ փաստաթուղթեր կը գտնուին ֆրանսական եւ յունական կառավարութեան, ինչպէս նաեւ եւրոոպական խորհրդարաններու մօտ, ըստ ինծի այս մէկը անհերքելի իրողութիւն է, որ զրոյցի առարկայ չի կրնար դառնալ»:

Ըստ Սփիւռքի մամուլի

«ԱՐԱՐԱՏ» ՖԻԼՄԻ հաղթարշաւը

Առաջիկայում կինոաշխարհի միջազգային փառատոնների մի ամբողջ շրջան է սպասում կինոսիրողներին: Միջազգային ամենահեղինակաւոր կինոփառատոներից մեկի՝ Տորոնտոյի 27-րդ կինոփառատոնի բացումը կանի էգոյանի «Արարատ» ֆիլմը: Թուրքական «Յուտրիեթ» թերթը «մեծ անակնկալ» է համարել նման հանգամանքը, նշելով, որ առայժմ չի հաջողվում որեւէ կերոյ խոչընդոտել դրա իրականացումը: Նորագոյն հեղինակաւոր ֆիլմերի ցուցադրությունը օգոստոսի 29-ից սեպտեմբերի 8-ը տեղի է ունենալու Վենետիկում, այնուհետեւ սեպտեմբերի 5-ից մինչեւ 14-ը՝ Տորոնտոյում:

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ» շարունակվում է

Հունիսի 24-ին «Մոսկվա» կինոթատրոնում կայացաւ «Մատենադարան» ֆիլմշաւարի 19-րդ եւ 20-րդ մասերի շնորհանդեսը:

Կինոնկարները ոճաձում են հայ-ռարսկական ոճաձամանակաւորային դարաւոր առնչությունների, Իրանում ոճիվող հայ ձեռագրական խոշոր հավաքածուներից մեկի՝ Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանի մասին:

Նոր նկարահանված մասերը թեեւ նախորդներից բավական ուշ են նկարահանվել, սակայն ֆիլմշարի բնականոն շարունակությունն են կազմում՝ դառնալով հայ մշակույթը վավերագրական կինոյի լեզվով ներկայացնող յուրօրինակ շքեղ այցեքարտ:

Ֆիլմերի գլխավոր մասնակիցներն են՝ սցենարի հեղինակներ՝ Կիմ Բակշի, Հովիկ Հախվերդյան, օպերատոր՝ Էդվարդ Վարդանյան, ոճաձում է Սոս Սարգսյանը...

Շնորհանդեսին խոսք ասացին կինոքննադատ Սուրեն Հասմիկյանը, դերասան Սոս Սարգսյանը, բեմադրիչ եւ սցենարի հեղինակ Հովիկ Հախվերդյանը: Վերջինս նշեց, որ թեեւ «Մատենադարան» ֆիլմշաւարը կարող է անընդհատ շարունակվել (քանի որ հայ ժողովրդի սեղեծագործական եռանդն անսպառ է), սակայն իրենց ծրագրած մտահղացումն ամբողջացնելու համար անհրաժեշտ է նկարահանել եւս չորս մաս, որոնք նվիրված են լինելու Երուսաղեմին, Էջմիածնին եւ բուն Մատենադարանին (որպես գիտահետազոտական կաղառ): Բեմադրիչը նաեւ նկատեց, որ անկախությունից առաջ ֆիլմի աջակիցների թիվն ավելի մեծ էր, քան այժմ:

Հուսանք, որ բեմադրիչի եւ սեղեծագործական ողջ խմբի ծրագրերը իրականություն կդառնան:

ԼՈՒՐԵՐ

■ Կանադահայ կինոբեմադրիչ Նորա Գեւորգյանն իր առաջին «Քողազերծված» ("Veils Uncovered") վավերագրական ժառանգենով հասաւսուն քայլեր է անում դեռի կինոաշխարհ: Անցած տարի նկարահանված այս ֆիլմը, որ ոճաձում է արուեստի կանանց նվաստացուցիչ կյանքի մասին, արդեն արժանացել է կանադական երեք կինոփառատոների մրցանակների, որոնց թվում՝ Տորոնտոյի «Իրական աշխարհ» փառատոնում Ազգային կինոյի խորհրդի սահմանած «Կանադական լավագույն վավերագրական ժառանգեն» մրցանակն: «Քողազերծված»-ին տրված կարեւոր գնահատականներ են նաեւ յորքթոնյան կինոփառատոնի «Ոսկե խուրձ» մրցանակը եւ Թաուսնի «Հանդիսատեսի ընտրության» երկրորդ մրցանակը:

Ծագումով լիբանանահայ կինոբեմադրիչը այս ֆիլմը նկարահանել է Դամասկոսում: Այն առավել տարողունակ կարող էր լինել, եթե չլիներ 2001-ի սեպտեմբերի 11-ը, որի ոճաձառով Նորա Գեւորգյանը սահմանված է եղել դադարեցնել հարցազրույցներն ու վերադառնալ Կանադա: Ժառանգենների մի մասն էլ վնասվել են օդանավակայանում՝ խուզարկության ընթացքում: Առաջիկայում «Քողազերծվածը» ցուցադրվելու է նաեւ Նյու Յորքի, Ամստրդամի եւ Գերմանիայի կինոփառատոներում:

Մասնագիտությամբ տնտեսագետ Նորա Գեւորգյանի հաջորդ վավերագրական կինոժառանգենը, որ կոչվում է «Այնճար», կոպտամի Մուսա լեռան հերոսամարտի ու նրա մասնակիցների հետագա ճակատագրի մասին: Ֆիլմը էկրան կբարձրանա մինչեւ տարեվերջ:

«Հորիզոն», 8. 07. 02

■ Հնդկաստանի եւ Եգիպտոսի միջազգային կինոփառատոներում կցուցադրվեն հայկական ֆիլմեր:

Եգիպտոսում սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 3-ը անցկացվող միջազգային կինոփառատոնում Հայաստանը կներկայացվի երկու՝ Ռուբեն Գեւորգյանի «Ընդհանս» եւ Տիգրան Խզմալյանի «5165» ֆիլմերով: Այդ մասին Արմենորեսի թղթակցին ասացին ՀՅ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության արվեստի վարչությունում: Փառատոնում, որի անցկացման վայրը Իսմայիլիա քաղաքն է, ներկայացվելու են վավերագրական եւ կարճամետրաժ կինոնկարներ:

Հայ կինոդործիչները այս տարի հանդես կգան նաեւ միջազգային 33-րդ կինոփառատոնում, որն անցկացվելու է Դելլիում (Հնդկաստան), հոկտեմբերի 1-10-ը: Ներկայացվելու է միջազգային հանրության գնահատանքին արժանացած «Ուրախ ավտոբուսը» (ռեժիսոր Ալբերտ Մկրտչյան), հավանաբար՝ նաեւ Տիգրան Խզմալյանի ֆիլմերից մեկը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՆՈՐԱՁԵՒԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Նախ ԱՐՈՒԵՍՏԷ, ապա արիեստ

Թղթակցութիւն Հալէպից

Այս նշանաբանը կեանքի կոչելով եւ կեանքի ուղին ու խորհրդանիշը համարելով, հալեպաբնակ երիտասարդ Գէորգ Շաուոյեան քայլ առ քայլ կը սկսի մուտք գործել արուեստի բնագաւառէն ներս: Ան փոքր տարիքէն, աշակերտական գրասեղաններու վրայ, յատուկ սէր եւ հետաքրքրութիւն կը ցուցաբերէ նկարչութեան հանդէպ: Գիտեմ «Ծիլեր» հաւաքական ցուցահանդէսներուն Հալէպի մէջ: Միաժամանակ «Ծիլեր» 4 եւ 5 ցուցահանդէսներու ղեկավարն ու կազմակերպիչն էր:

Վեց ամիս եղած է Սաուս Արաբիա եւ ձեռնարկած իշխանուհիներու զգեստաւորման աշխատանքին:

1999-էն ի վեր կը պաշտօնավարէ Քարէն Եփիէ Ազգային ճեմարանէն ներս, որպէս ձեռարուեստի դասատու միջնակարգի եւ

ծն ու գոյնը, ուսուցիչներու ցուցմունքներն ու ծնողքի քաջալերանքը կը պարտաստեն ենթահողը աղագայ արուեստագէտին «Որպէս դերձակ, արիեստավարժ, հօրս թելադրանքին ու ցուցմունքներուն կը պարտիմ, որու շնորհիւ գործի հանդէպ իմ հետաքրքրութիւնը տարուէ-տարի սկսաւ աւելնալ: Բայց պէտք չէ մոռնամ ըսելու-, թէ մղիչ ուժը հանդիսացաւ վաստակաշատ օր. Արսինէ Զօրեանի ցուցմունքները նկարչութեան վերաբերեալ»:

-Եւ ահա պատահական չէր, որ պատանի Գէորգը նախակրթարանի աւարտական կարգի թեստական «թիոներական» նկարչական մրցոյթին կը հանդիսանար առաջինը:

Սակայն նկարչութենէ աւելի Գէորգի մէջ գերակշռողը կ'ըլլայ ձեռարուեստը: Խաւաքարտի կողքին, աւելի, կը նախընտրէ կերոպասը, որպէս նիւթ, զայն ձեւաւորելու եւ մտայղացումներով նոր երանգ տալու:

1992-ին կ'աւարտէ Ք. Ե. Ազգային ճեմարանի վեցամեայ ուսման ընթացքը: Կը մեկնի Լիբանան, ուր երեք տարի դժուար պայմաններու մէջ կը հետեւի C. A. M. M. նորաձեւութեան ուսումնարանի գոյգ դասընթացներուն (stylist, modelist): Հոն կը սորվի իր մտայղացումները թուղթին յանձնելով մարմնաւորել ու զանոնք կերոպասի վրայ կենդանացնել:

Աւարտելէ ետք՝ երկու տարի Լիբանանի մէջ կ'աշակերտէ յայտնի «տիզայնրներու» մօտ:

1998 թ. Լիբանանի մէջ հանրութեան կը ներկայանայ իր անհատական ցուցահանդէսով (նկարչական, տիզայնի):

Նաեւ, կը մասնակցի «Սուուերներ» երկրորդականի աշակերտներուն՝ միաժամանակ կազմակերպելով աշակերտական ցուցահանդէսներ:

Հալէպի Ազգային կարգ մը վարժարաններու, մանկապարտէզներու ամավերջի հանդէսներու եւ համազգայինի «Սարդարապատ» պարախումբի հայկական պարի տարազներու ձեւաւորման, ինչպէս նաեւ թատերական բեմայարդարման աշխատանքներու հեղինակն ու մասնակիցն է:

Անկասկած ուսումն ու ամէնօրեայ միջազգային նորութիւնները գոհացում չէին տուած Գէորգի հետաքրքրութիւններուն: Անբաւարար նկատելով իր գիտելիքները, ինքզինք կատարելագործելու համար անհրաժեշտ պիտի համարէր վերադարձ դէպի արմատներ. քաջատեղեակ ըլլալ հայ եւ այլ ժողովուրդներու մշակոյթի պատմութեան, ի մասնաւորի հայկական տարազներու ձեւաւորմամբ, որոնք ամբողջ ժողովուրդի մը դարաւոր պատմութեան մասնիկը կը կազմէն: Ինչպէս ինքը կըսէ. «Ընդհանրապէս կը նախընտրեմ հայկական, եգիպտական (փարաւոնական), գնչուական, սպանական եւ իշխանական տարազներու ձեւաւորումն ու իրագործումը, որովհետեւ անոնց մէջ կը գտնեմ տեսակաւոր կերոպասներու օգտագործումն, գոյներու այլազանութիւնն ու ներդաշնակութիւնը»:

Դէպի լաւագոյնին ձգտելով՝ 2002 թ. Գէորգ կմեկնի հայրենիք, մասնակցելու Գեղարուեստի պետական ակադեմիայի տեքստիլ բաժնի դասընթացներուն:

Անի Ֆիրենկեան

ARMENIAN ART 2/2002
ARMENIAN CULTURAL MAGAZINE

3 Under the title CULTURAL POLICY is presented an extract from "The human development in Armenia in 2001" national report, which stresses the cultural problems in Armenia.

4 **Shahen Khachatryan's** article "THE FATHERLAND IS BORN WITH A MAN" is dedicated to two famous artists of the 20th century Martiros Saryan (1880-1972) and Arshil Gorki (Vostani Adoyan) (1904-1948). Artists had completely different fate, they lived far from each other, but they both were inspired with their fatherland. Saryan became the forefather of the Armenian art, and Arshil Gorki is considered to be the founder of the abstract art in America. As the author of the article comments: "Without exception, all of Gorki's abstract works originated from his recollections of childhood. Their source is his birth-place Khorgom village, on the beach of the Lake Van".

7 An interview with ALBERT MKRTCHYAN

Our guest was the famous movie producer Albert Mkrtchyan, who gave an interview to the editor of the "Armenian Art" Karen Matevosyan and director Hasmik Ginoyan.

The producer reflected on problems in cinematography in Armenia, told about his creatures and projects. Describing current problems, he told: "I think that shooting a film in Armenia nowadays is really heroism".

8 **Martin Mickaelyan's** article "THE CULTURE OF JAVAKHK"

As the author writes "The culture of Javakhk is related with the special kind of human being living in this highland..." Vahan Teryan, Vardges Sourenyants, Jivani, Hakob Kojoyan, Derenik Demirjyan, Vahram Gayfejyan and many other famous cultural workers were born here.

In his article the author also speaks about contemporary artists Rafael Nanushyan, Rafael Gharagyulyan, Karlen Karapetyan, Baghdasar Sargsyan, Sergey Unanyan, Mnatsakan Ghalachyan, Hamlet Aroyan, Vard Gharslyan.

11 In 2003, the whole world at UNESCO level will celebrate the 100th Anniversary of the famous composer **Aram Khachatryan**, which will turn into a festivity for the Armenian people and all musicians.

Daniel Erajisht's article "IN MEMORY OF KHACHATRYAN" is about some events in the composer's biography and creatures, particularly about "SPARTAKUS" ballet. As the author says "... His name is written with golden letters on a marble plaque in Moscow Conservatory, while it shines in the constellation of those cultural workers, whose mission was making a harmony between the East and the West".

12 Journalist **Heghine Mkrtchyan** has had a report about **"Nane"** dance group and **Shushan Petrosyan's** concert in Yerevan. It can really be considered as a new level in contemporary Armenian show art. Next year Tatevik Hovhannisyan will probably be the guest of "Nane".

13 YOUNG ARMENIAN MUSICIANS IN FOREIGN ORCHESTRAS

The article informs that in the symphonic orchestra of Verbier city in Switzerland, which was formed in 2000, have been included the graduates of Yerevan Conservatory after Komitas Gohar Danielyan, Hohannes Baghdasaryan, Maya Margaryan and Zohrab Tadevosyan. The violinist Hasmik Danielyan has been included in Belgian Youth Philharmonic Orchestra and in "Atergau" symphonic orchestra of Vienna. In 2002, the graduate of the same conservatory Arsen Murazyan joined to her.

Information about the famous American pianist and composer **Sahan Arzruni** and his solo-concert in Aram Khachatryan's home-museum in May 30.

Sahan Arzruni is very well known. He has had concert tours in North and South America, Europe, the Middle and Far East and Australia. He has had concerts in the White House, as well as in the Kingdoms of Great Britain, Denmark, Sweden and Italy.

14 ARTIST PETROS ASLANYAN

Petros Aslanyan was born in 1937 in Alexandria city in Egypt. He graduated from Alexandrian Art College in 1961. He has participated in art Biennales. In 1965 Petros Aslanyan went to live in Montreal. His works carry the influence of the impressionism school, at the same time being a unique synthesis of Armenian, Canadian and Egyptian arts.

Hrazdan Tokmajyan's article from **Aleppo** is about activities in children's painting schools and particularly about the problem of teachers' attraction to Modern art.

15 **Knar's** article is dedicated to sculptor ALBERT AVETISYAN'S art, who was from Yerevan and since 1999 has been living in Paris. The artist's preferences, whose creatures are more than 200, are equally expressed in all genres of sculpture. During 1970-1996 he created more than 20 monuments, which decorate squares and buildings of Armenia, Russia, Ukraine, Uzbekistan and France.

Writer and orator **Toros Toranean's** letter from **Aleppo** to the editorial staff of the "Armenian Art" contains his best wishes and at the same time optimistic thoughts about the continuous prosperity of the Armenian art. The author also calls upon to strengthen the Armenia-Diaspora relations.

16 The responsible of **RAA Dr. Armen Hakhnazaryan's** article presents the annual report of 2001 about the activities of the organization concerning the investigation and preservation of Armenian monuments in neighbouring states.

17 Cultural **information** about

The second All-Armenian festival "Sayat-Nova" and "Vahagn",

Reopening of the reconstructed Church in Marmarashen,

"The Day of Armenian Book" organized in Yerevan,

The concert "Young Armenian singers" in Canada,

The premiere of "NAIRI" theatrical group of Armenians from Tbilisi, founded in Yerevan,

The laureate of the Biennale of Contemporary Art in Florence, sculptor Armen Krpoyan from Egypt.

Information about 27 year-old pianist and composer **Vahan Martirosyan**, who had a success in France recently.

He has accompanied such famous musicians, as are Ivri Gitlis, Mstislav Rostropovich, Anri de Market and Floran Heoy.

18 The studio of harmonious development **"Tsil busats"**, founded and managed by **Armenuhi Martirosyan** in Yerevan in 1994, gives all-round artistic education to children below 14.

19 Artist **Samuel Lachikian**, who was the head of the Gyumri branch of the Artist's Union in 1991-1995, prefers to create in portrait, landscape and still life genres.

His unique oil creatures have been appreciated by art critic **Dr. Vigen Ghazaryan.**

20 The workshop of fine art "THE ART FOR THE ART" was created by Razmik Samvelts in Glendale in 1999. Its pupils have organized four exhibitions so far, the last of which was opened in Yerevan in July of 2002, and then it was also opened in Artsakh.

22 THE PRESENTATION OF THE MAGAZINE "ARMENIAN ART"

On May 24, in the Ministry of Culture of the R.A. there was the presentation of the first issue of the cultural magazine "Armenian Art", which is published by the initiative of "Momik" cultural association.

Many newspapers, particularly "Hayastani Hanrapetutyun", "Azg", "Aravot", "Yerkir", "Orran", "Shoghakn", "Gangzasar", "Aragatsotn" and "Kecharis" reflected on this event.

24 Musicologist **Daniel Erajisht** takes an interview from artist **Valmar**. They speak about current problems in the Armenian art, an artist's creative work and peculiarities in art.

25 **Information** about the famous Armenian photographer from Canada Hovsep (Yusuf) Karsh.

Information about Wilhelm Matevosyan's (1931-2001) book "Three Profiles".

26 In ARCHEOLOGY there is presented **Aram Kalantaryan's** and **Frina Babayan's** article "EXCAVATIONS IN THE TERRITORY OF ST. SARGIS CHURCH IN USHI".

27 **Gagik Sargsyan's** and **Husik Melkonyan's** article "ST. ASTVATSATSIN CHURCH IN VARDENIK AND NEWLY DISCOVERED LITHOGRAPHS".



28 **Edda Vardanyan's** article "KILIKIAN ARMENIAN MONEY IN CHINA" is about copper coins of the period of Hetum I King (1226-1269) discovered in China. The author supposes that the money might appear there during Hetum King's visit to the capital of Mongolia Karakorum in 1254.

29 **Edda Vardanyan's** and **Nazeni Gharibyan's** information is about the upcoming solemn ceremony in the Big Amphitheatre of the Sorbonne on October 24 on the occasion of the famous armenologist and caucasiologist **Jean-Pierre Mahe's** election as a full member of the Academy of Palaeography and Philology in March of 2001. During the ceremony the academician will be presented a unique sword.

30 **Karen Matevosyan's** essay "WHEN ANI REMAINS FAR OFF..." is about the medieval capital of Armenia Ani, which is in Turkey now. The author gives a historical overview, explaining the role of the city for the Armenian nation not only as a political centre, but also as a religious-cultural one and a holy place. The defeat of Ani by Byzantines, Turks, Mongolians and other nations, the destructive earthquakes, people's exodus and finally the consequence of these all - the change of the formerly wonderful city into an uninhabited and ruined one made it not only as a symbol of independence and state, but also of martyrdom and victim. So Ani, even often subconsciously has been considered as one of the main holy values for the Armenian nation.

33 **Mesrop Hayuni's** (Beirut) article "THE ART IN TIMES" gives a religious outlook to the art. The author writes: "The secret peculiarity of the art is that it gives a man the pleasure of cognizing both external and internal beauty..." As the author thinks, the real art leads a man to God.

34 On June 24, in "Moscow" cinema there was the presentation of the 19th and 20th parts of **"Matenadaran"** film series.

Information on the news in the Armenian cinematography and **Atom Egoyan's** film "Ararat".

35 **Ani Fishenkjyan's** article is about **Gevorg Shatoyan** from Aleppo, who has a good success in fashion and attends lessons in the State Academy of Arts in Yerevan.

ARMENIAN ART 2/2002
CULTURAL MAGAZINE

Founded and published
by "Momik" cultural association,
"Seven Art" ltd.

Is published by the scientific collaboration of
Institute of Archeology and Ethnography of the N.A.S. of the R.A.,
The Matenadaran after Mesrop Mashtots,
The National Gallery of Armenia

Editor-in-chief
Karen Matevosyan

Executive director
Hasmik Ginoyan

Executive secretary
Norayr Vardanyan

Staff
Lily Gasparyan, Christine Vardanyan, Angel Amirkhanyan

Editorial Council
Varazdat Harutyunyan, Shahen Khachatryan, Murad Hasratyan,
Vardan Vardanyan, Martin Mickaelyan, Hovik Hakhverdyan,
Daniel Erajisht, Khachatur Martirosyan

Representatives
Vahagn Tovmasyan - Stepanakert (RNK)
Maro Manavian - Montreal (Canada)
marom@videotron.ca
Sahan Arzruni - New York (USA)
solopiano@hotmail.com
Stepan Kiremijian - Los Angeles (USA)
louys96@hotmail.com
Edda Vardanyan - Paris (France)
eddavard@yahoo.com
Leyla Nersessian - London (U.K.)
Ani Fishenkjian - Aleppo (Syria)
fishenkjianani@hotmail.com
Ohan Budrumian - Beirut (Lebanon)
NAIRIBO@cyberia.net.lb
Ashot Khachatryan - St. Petersburg (Russia)
akhachents@yahoo.com
Sargis Darchinyan - Tbilisi (Georgia)
Albert Kocharian - Tehran (Iran)
akocharian@hotmail.com
Moushegh Nadjarian - Istanbul (Turkey)
Shahen Mazlumian - Cairo (Egypt)
shahen@soficom.com.eg

Computer designer
Vardan Dallakyan

Photographer
Gevorg Gasparyan

Translator of the English summary
Vahagn Marabyan

Certificate of registration 01M 000095
Is signed for publication 09.09.2002

Address
32, Hanrapetutian str., Yerevan, Armenia
Tel. (+374 1) 52 35 01, mobil (374 9) 40 32 15. Fax. (+374 1) 56 36 61
E-mail: hayart02@hotmail.com
http://users.netsys.am/momik

The material is published in both East and West Armenian, with the original spelling.

Opinions expressed in the articles may not correspond to the viewpoint of the editorial staff.

The scientific articles are reviewed.

The responsibility for the contents of advertisements is of advertisers.

The copyright belongs to the "Armenian Art".

UNICUM

Արցախ աշխարհի Սխտորաշեն գյուղի հանդամասում է գտնվում բնության եզակի ստեղծագործություններից մեկը՝ 2000-ամյա հսկա սոսին, որի բնի շրջագիծը հիմքում 27 մետր է, ունի 54 մետր բարձրություն, սվերը ծածկում է 1400 քառ. մ մակերես, փչակը՝ 44 քառ մ.: Ծառի տակից բխում է անուշահամ աղբյուր, որը տեղացիները կոչում են «Տնջրու»:

Արցախյան ազատամարտի տարիներին նահատեն սոսին դարձել էր յուրօրինակ ուխտատեղի, ուր այցելում էին ազատամարտիկները մարտի մեկնելուց առաջ:

ARTSAKH
Platan Chinar 2000 y.
The circumfrance of the stem of the tree is 44 sq. m.
The capacity of tree is 27 m.
The hight is 54 m.
The area covered by the branches of the tree is 1400 sq. m.

Բաժանորդագրվեք
ՀԱՅ ԱՐՎԵՍՏ
Հայաստանում՝
«Հայմամուլ» գործակալության,
Սփյուռքում՝
հանդեսի լիազոր ներկայացուցիչների միջոցով:

ԱՆԻԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ 1000-ԱՄՅԱԿԸ

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ ԵՐԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ
2002 թ. սեպտեմբերի 20-ից



Յուցահանդեսի հովանավորներ
Տէր եւ տիկին Յակոբ եւ Իզա Գույումճէաններ (ԱՄՆ)